


891. 99

2/1-31



10 NOV 2011

ՄԱՍԵՆԱՇԱՐ “ԱԶԴԱԿԻ, ԹԻՒ 2

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱՉԵԱՆ

391.99

ՕԲ-31

ԿՎ

ՀԱՂԻ ԲԵԳ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵՑՈՎՔԻՑ)

8685



ՀՐԱՄԱՆԱԳՐԻ
ԱՐԺԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՎԱԶԱՐԱՆՈՑԻ

1909
Ա. ՊՈԼԻ.Ի.Ս

28.08.2012

60012

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա.ՐԵՍՈՒ և Կ.Ա.ՐՈՅԵԱՆ
Կ. Պոլիս, Պապը Ալի Ճատկափ

352-54



ՀԱԶԻԲԵԳ

(ԳԱԼՈՒՍ ԱՐԻԱՆԵԱՆ)

Մեռած 1906ին, Երգնկայի բանին մէջ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Թիւրքահայոց վերջին յեղափոխական փորձերի պատմութիւնը տալ վեպերի ձեւով, եւ, միեւնոյն ժամանակ անաղարտ ու առանց գունաւորութեան արձանագրել պատմական խոռոր անցեները —ահա մի լուրջ աշխատութիւն, որ տարիներից ի վեր զբաղեցրել է ինձ:

Զանացի նիւթեր ժողովել: Չեռք բերի յեղափոխութեան առաջին գործիչների յիշատակարանները, որոնք այժմ ձեռքիս տակն են. աչքի անցկացրի բոլոր բերքերը... սակայն, միմիայն նիւթականի պակասութիւնն եր պահառը, որ անկարող եղայ զնալ—ուսումնասիրելու որութիւններ արտասահմանում, ուր կան կուտակուած շաբանկագին վկայարդրեր:

Յամենայն դեպս, արի՝ ինչ կարողացայ: Առ այժմ միայն մի հանի վեպ գրեցի յեղափոխութեան այդ առաջին արիւնանեղ օրերի կեանքից: Մեկը ահա սա է, որ այսօր լոյս եմ ընծայում: Նրա հերոսը, Թիւրքահայոց յեղափոխութեան պատմութիւնը փոքր ի շատէ իմացողի համար՝ շատ ծանօթ մի դեմք է — Արմանի համի Գալուս Արխանեանը, կեղծ անունով՝ Հաջի բեկ, երեմն՝ Վահան, որ վերջի վերջոյ բռնւեց, դատապարտւեց 101 տարւայ բանարկութեան եւ մեռակ բանտում 1905 թի նոյեմբերին:

Փոքր Ասիոյ Երզնկա զաւառի Գուրուչայ (Մ՛ձուր) զաւառական է եղել ազատական շարժման առաջին վառարանը: Վեպի գործողութեան վագրը այդ զեղեցիկ երկիրն է:

Որքա՞ն եւ միաս թի ազատութեան երկարաւել կուի այդ առաջին հայլը, նա, իր ամենայն պարզութեամբ ու բաղձանքներով՝ վսիմ եւ ազնիւ է նենց նրա՝ համար, որ առաջին հայլն է, ազատութեան համար պարզած դրօքի ծածանման առաջին բռպին...

Թիւթիզ

ՎՐԹԱՆԿԱ ՓԱ.ՓԱ.ԶԵՍ.Ն



ՀԱՂԻ ԲԵԳ

Քանզի կորին ազատութեան երբ ծագի,
Նանատակւած հօրիցն անցնի զաւակին,
—Թէեւ յանախ յաղբահարւի, սայրամի,
Կ'արժանանայ միւս յաղբութեան պատկին...

ԲԱՑՐԸՆ, «Գեաւուր»

I

Կ. Պօլսի 1890 յուլիս 15-ի մեծ ցոյցից յետոյ, միւս
օրն իսկ սկսեցին այնպիսի հալածանք և մեծ չափերով ձեր-
բակալութիւններ . կառավարութեանը — չգլուխմ ի՞նչ աղ-
բիւրներից — այնքան լաւ յայտնի էին բոլոր մասնակցող-
ների և մանաւանդ կազմակերպողների անունները, որ
մեզ մնում էր միայն, մի կերպ գուրս սպազել թաղերը
լցւած զինւորների և ոստիկանների շարքերից և աշխատել
հնար եղածին չափ շուտով թողնելու մայրաքաղաքը :

Եւ մինչ Կէտիք-Փաշայից սկսած մինչեւ Սամաթիա
տուն չէր մնում, որ չխուզարկեէր, ևս և Մարտիրոսը
յաջողւեցինք նետել մեղ Տրապիզոն մնիսող մի չողենաւի
վրայ և միւս օրը գիշերով, անփորձ՝ ափ գուրս եկանք
Կիրասօն :

Այդտեղ կամոդ չառինք . ո՛չ իսկ քաղաք մտանք :
Փոքր ինչ պաշար գնեցինք, ոտքալ, արահետներով,
երկար, յոդնեցուցիչ ճանապարհներ կտրեցինք ու վեր-
ջապէս ոտք կոփեցինք հայրենի հողի վրայ — Գուրուչչայ
(Մնձուր) գտաւառը :

Վա՛զուց, չա՛տ վաղուց էր, որ հեռացել էի մեր
գիւղից : Տաս տարի առաջ, գրեթէ պատանի թողել էի
հայրենիքը և Պօլս ընկել : Եւ ահա այժմ, իբր վախս-

տական ու հոլածւած, ինձնից աւելի վտանդաւոր մի ընկերոջ հետ, մտնում էի հայրենական տան մէջ :

Գեղեցիկ էր մեր գիւղը, Մնձուրի ամենադեղեցիկն ու մեծը :

Գարապուտաղ գետի ապառաժուտ, բայց այդելից ձուրակից յետոյ, փուլում է բարձրում մեր շքեղ սարահարթը, պարուրած լեռնաշղթայով և գրեթէ թաղւած ծառաստանների ու պարտէջների մէջ։ Հոկայ բարտիներ, խոշոր թթենիներ, հաստարմատ ընկուղենի, սկսած ձորի խորքում հոսող գետակից,—մաղլյում զարդարում են լեռնաշղթայի կողերը և կանոչութեան մէջ ծածկում ամբողջ սարահարթը, թագցնելով երեք հարիւրի չափ գիւղական բաւական սիրուն աները, որոնց միջից բարձրաղիբ եկեղեցին ու դպրոցի շինքն է միայն երեւում հեռւից։

Աւելի բարձր, արեւի տակ պատգում են լեռնազագաթթների ծիւնակյուները կամ օդը կապտացնող անտառուտ կողերն ու թիվուտ ծործորները։ Մնձուրի գոռ լեռնաշղթան, փուլուծ հորիզոնի վրայ, երեւում է երբեմն ցցուն, երբեմն աղեծեւ, մի՛շտ ծածկւած մշտչի անօսր տմպերով...

Որպիսի հրճանքով էի դիտում այժմ այդ բոլորը, առաւտեան այդ պահուն, արեւածոցի առաջն շողքերի տոկ՝ կոթնած մեր բարձրաղիբ սենեակի բաց լուսամուտին։

Մշտչ նորացել՝ թողնում էր ծառաստանի կատարներն ու ցանուցրիւ լինում. գիշերւայ յօդի թացութիւնը կենդանի գոյն էր տեղ հողին ու բոյսին և ամէն ծառ, արա կամ այդի, շեշտած գոյներով որոշում էր ու պատկերանում ու տարածութեան վրայ։

Հեռուում երեւում էին արդէն գեղնած արաեր։ Նախին այդ միջոցին ծորն էր իջնում։ Բառաչում էին կովերը, մայում՝ ոչխարները. իսկ հոմիւրը, ցուպը ձեռքին, չները ետելց, վաղվզում էր հօտի շուրջը...

Եւ այսակ՝ տափարակից, ուր երբեմն փողիողում էին հնձւորների գերանդիներ ու մանգաղներ — ականջիս

էր հասնում մեր կտրիճների երգը. այդ միաձայն, ախուր խազերով երգը, որ վաղուց էր չէի լսել և այժմ կարօտով ականջ էի դնում...

Տասն ամբողջ տարի, մայրաքաղաքի ժխորի և փոշու մէջ, զուրկ այդ ամէնից, և, ապա, սոսկումներից ու արիւնից նոր դուրս պրծած—երազ էր թւում ինձ այդ զրախտային անկիւնը։ Որքան երջանիկ էի, որպիսի՛ խաղաղ ու անդորր տրամադրութիւն էր իջնում վրաս և ինչպէս կ'ուզէի երկա՛ր ու երկա՛ր նայել այդ ամէնին, վայնել, կարօտ առնել վաշունչ...

Ահ, եթէ չինէին այն ամէն հարստահարութիւններն ու անիրաւութիւնները, որոնք հետզհետէ աւելիլու էին մեր երկրի չքնաղ անկիւններն անգամ — ինչ կարող էր լինել աւելի զմայելի, քան այդ բոլորը։

Բայց, վերջապէս, հայրնիքումն էի + հօրս, մօրս և քոյրերիս մէջ, ազգականներիս զջանում։

Հայրս, երբ տուն էինք մաել, պահ մի չէր կարողանում ճանաչել ինձ։ Յետոյ, տեսնելով որ իր վահանն էր այն կնճռու, սեւ, փոշու ու նիհար երիտասարդը, որ պայուսակն ուսին, մի անձանօթի հետ գիշերով բաղնել էր իր գուսու — գունատել էր։

Մայրս նայել էր ինձ արտասուցն աչքերին. երկա՛ր պահել զրկում, լացել, կարկամել, երես, ձեռքերս չօշագիւ և չէր հաւատացել, որ տասը տարուց յետոյ, զրկի մէջ լացողն՝ այժմ իր միակ սրդին, իր միակ մանչղաւակ, վահանն էր։

Ապա, տեսնելով որ այնչափ յօդնած էինք, ո՛չ ոք բան չէր հարցրել։ Կերպակը էին, անկողին փոել...

Եւ այժմ, արեւծագի պահուն, երջանիկ՝ որ հօրս տան յարկի տակ, մեր կարօտալից երկրի մէջ եմ, նայում էի գուրս և տեսնում հօրս — այդ սիրելի ծերունուն, որ թեւերը սոթած, ոտք՝ ծանր կօշիկներով, բահը ուսին՝ գուրս էր զնում անից, վեր նայում, երկինքը դիտում։

Տեսնում էի նրա ալեխառն մազերը, պղնձագոյն դէմքն ու խոշոր աչքերը, նշմարելի խորութեամբ ու շեշտած կնճիռներով ճակատը, զգուշաւոր հայեացքը, բայց և երիտասարդական քայլերը, ուղղւած դէպի պարտէզը:

Դուրս էր եկել պարտէզին աչք տալու: Երբեմն լուսամուտիս կողմն էր դառնում և այդ ժամանակ մոայլւում էր նա: Անշուշտ իր միակ մանչ-զաւակին հիւանդ էր կարծում. մտածում էր գուցէ թէ վահանը մայրաքաղաքի ապականիչ կեանքի զոն եղած ու քայքայւած, եկել էր գիւղի մէջ գտնւող անպէտ երիտասարդների շարքն անցնելու. երիտասարդներ, որոնք ապրիներ շարունակ կ. Պօլսի աղսն ու կեղար ժողոված, փչացնող կեանքովը ծիւրւած ու մաշւած — հայրենի գիւղն էին դայիս կամ մեռնելու և կամ մի զզւելի ու հիւանդ կեանքով՝ ծնողներին տանջելու:

— Բարի լոյս, հա՛յր, ձայնեցի լուսամուտից — գա՞մ քեզ օգնելու:

Դէմքը զւարթացաւ: Համեմատաբար առոյդ ձայնս ուրախացրեց նրան: Նայեց, ժպտեց ու ասաց.

— Պարտէզին աչք տալու եմ գնում. կ'ուզես արի: Իսկոյն ցած իշայ: Մայրս տեսաւ, նախ նորից գրիեց ինձ, ջերմ, կարօտալից համբուրեց, զննեց դէմքս, շափեց մարմինս անհանգիստ հայեացքով, ստուգեց որ կթէ նիհար եմ, բայց առողջ եմ. հարցրեց առողջութեամս առ մասին և երբ զուարթ կերպով ու ծիծաղը դէմքիս մի համբուրեցի քոյրերիս, քրքիչներով սեննեակը լցրի: Րունիներս:

— Դէ՛ն, գնանք, գնանք, կանչեց հայրս — մի բաժակ տաք կաթ խմիր և գնանք օդ ծծելու:

Յիրաւի, օդ ծծելու: Տար տարի էր, որ օդ չէի ծծել մայրաքաղաքում, այլ փոշի և տպականութիւն:

— Իսկ ընկերդ, հարցրեց մայրս: — Նա դեռ քննել է, մա՛յր. թողէք հանդստանայ: Հայրս էլ զննում էր ինձ, երբ կաթն էի խմում. զննում էր բժշկի նման, զննում վախախառն, կասկածու սուր հայեացքով... և, երեւի գոհ մնաց, որովհետեւ ժպիտը դէմքին մօրս դարձաւ ու ասաց յանկարծ.

— Ոչի՞նչ, յուզնած է միայն և նիհար... շո՛ւտ կը կաղզուրւի:

Ահա և մեր սիրուն պարտէզը: Սկսում էր մի լուրաստանով: Ծաղիկներ, բանջարեղին, թարմ կանաչ ու արօտ, ապա մի ընդարձակ հովասուն ծառաստան — բարտի, թթենի և ուրիշ պաղատու ծառեր...

Երա՞զ էր այդ ամէնը: Բանտարկեալի նման՝ ապատութեան մէջ նետւած, արբեցուցիչ տպաւորութեան մէջ էին էի...

Ահա և մեծ ընկուզենին. այստեղ, նրա լայն սուերի տակ էր, որ ամառւայ չոգերին հանգչում էինք ու խաղում:

Որպիսի՞ սիրով զննում էի ամէն ծառ, ամէն անկիւն: Բոլորը ճանաչում էի, ամէն խորշ յիշատակալից էր ինձ համար:

Այդին նո՞ր էր ջրւել: Հայրս զննում էր ամէն ծառ, քննում մարգերը. այստեղ՝ մի աւելորդ ծիւղ պոկ տալս, այստեղ՝ բահով յարդարում ջրի հսանքից վլած թումբեր, և մի տեսակ բերկրանքով ցոյց էր տալիս ինձ նոր պատւասաները, տնկած ծառերն ու ձմեռնուկ պտուղները:

Ու մինչ ցոյց էր տալիս, հարցրեց անտարբեր ձայնով:

— Ո՞վ է ընկերդ... Անունը Շմաւո՞ն է:

— Շմաւո՞ն... զարմացայ ես — ո՛չ, Շմաւոն չէ, Մարտիրոս է:

— Բժիշկ...

— Ո՞չ . . . ինչո՞ւ ես մտածում որ բժիշկ պիտի լինի :
— Ո՞չ ինչ . . . հէնց ա՛յնպէս . . . ասաց հայրս և խօսքն
խկոյն փոխեց :

— Ինչպէս է , հարցրեց նա — լաւ պահել եմ պարտէզը :
— Օ՛ , շա՛տ լաւ , հա՛յր , իմ չտեսնելուց յիտոյ շատ
և շատ լաւացել է . շա՛տ ինամք ես տարել . այսուհետեւ
ե՛ս էլ կ'օդնեմ քեզ :

— Լաւ էլ կ'անես . ասաց հայրս — առողջութեան
համար իսկ լաւ կը լինի , եթէ առաւօտները բանս առած՝
մտնես այստեղ , իջնես ձորի այդին . . . Գործելը առողջաւ-
նալու ամենալաւ միջոցն է :

— Իրաւունք ունիս , հա՛յր . . .

Ու պարաստեցի ամէն ինչ պատմել նրան : Պատ-
մել այն դէպքերը և արիւնհեղութիւնը , որոնց ակա-
նատես էի եղել Կ . Պօլսում : Բատ երևութին դեռ նրանց
ձայնը չէր հասել այդ խուլ կողմերը :

Նստեցի առւակի մօտ . հայրս կկղած՝ ցեխոստ ձեռ-
քերն էր լւանում : Յուղւած , մի վայրկեան վարանեցի .
խօսի՞լ , ասե՞լ ամէն ինչ , թէ՛ թողնել գիւղացոց միամիտ
անդիտութեան մէջ , ի զուր չվրդովել նրանց հանգիստը :

— Հա՛յր . . . ասացի յուղւած :

Սերունին կանդ առաւ լւայւելուց և երեսիս նայեց :
Սակայն հէնց այդ ըստեին էր , երբ նկատեցի , որ
մեր տան կողմն էր գալիս մի ալեզարդ մարդ՝ հնամաշ-
կարկուած վերարկու հազին :

— Խօսելի՞ք ունէիր , հարցրեց ինձ հայրս :

— Թող մնայ , հա՛յր . . . : Կարծեմ քահանան է գալիս :
Հայրս շտապով ձեռքերը լւաց , բարձրացաւ , զպունի
քղանցքով սրբւեց , առաջ գնաց և մօտ եկող քահանայի
ձեռքը համբուրեց :

— Աստուած օրնէ , Մարկո՞ս . լսեցի որդուդ
գալը . . . Վա՞յ , սա չէ Վահանը . . . Զանցայ , ծօ՞ . . .
ի՞նչ մեծացել է :

Մօտեցայ ու աջն առի :

— Աստուած օրնէ . լաւ մեծացել ես , խօսեց քահա-
նան — մաշալլա՞ն , մէկ բօյ ես ձգել որ . . . բայց լւարել
ես , չինի՞ դու էլ հիւանդ ես Պօլսից եկողների պէս . . .

Ակսեյինք դէպի տուն դառնալ , հայրս քիչ առջեկից .
Իսկ քահանան անդադար հարցեր էր տալիս ինձ առող-
ջութեանս , Կ . Պօլսի և ճանապարհների մասին : Պատաս-
խանում էի , որքան հնարաւոր էր :

Տէր Յակոբը դեռ առոյց էր , չնայելով որ լիովին
սպիտակել էր :

Ոչնչ չպատմեցի Կ . Պօլսի դէպէրից : Նա էլ կար-
ծես ոչնչ լսոծ չինէր :

Սակայն , երբ պարտէղից ելել՝ տուն էլինք մտնում ,
ծերունի լրօնսաւորը մի վայրկեան կանդ առաւ վերջն
ձափի մօտ և հարցրեց խորհրդաւոր կերպով :

— Հետպ մի օտարական կայ , Վահան , ո՞վ է նա :

— Ընկերս է , տէր հայր . ի՞նչ կայ որ : Վաղո՞ւց է
մեր գիւղւացիք վախճանում են օտարականներից :

— Ի՞նչո՞ւ վախճանալ . ժպտեց նա — բայց դու ինձ
այն ասա . անունը Շմաւոն չէ :

Գործեալ այդ Շմաւոնը :

— Միթէ Շմաւոնին դուք ճանաչում էք , հարցրի
վարպետութեամբ : Հարկաւո՞ր էր վերջապէս իմանալ թէ
ի՞նչ Շմաւոն էր այդ :

— Զէ՛ , ո՞րտեղից . . .

— Պիտի գա՞ր Արման :

— Հա՛ , մեղ լուր է հասել , որ Շմաւոնն Սնատովու
է և մեր կողմերում : Մի՛ ծածկիլ . եթէ հետինդ է Շմա-
ւոնը՝ ասա՛ :

— Զէ՛ , տէր հա՛յր , ընկերոջս անունը Մարտիրոս է :

— Մարտիրոս . . . Բժիշկ էլ չէ :

Արտեղ արդէն մի բան կար , որ սկսեց սաստիկ
հետաքրքրել ինձ : Ինչպէս երևում էր , հայրենակից-

ներս, այն էլ խորհրդաւոր կերպով, սպասում էին մի ինչ որ Շմաւոնի և կամ բժիշկի:

—Բժիշկ չէ, ո՞չ. ասացի քահամնային— գիւղում հիւանդ ունիք շատ:

—Զէ՛... արեց նա— շատ չկայ... լինէր էլ՝ մէրքէզի բժիշկը կայ... Այդ ասածս բժիշկն ուրիշ մարդէ...

Ու քայլեց: Ինձ հարկ եղաւ լոել: Սակայն երբ հինգ-վեց քայլ էր արել, մէկէն դարձաւ, մօտեցաւ ինձ ու նախապէս շուրջը նայելուց յետոյ՝ ասաց.

—Գիտե՞ս, Վահա՞ն, դու էլ ի հարկէ, զդոյշ եղիր. բայց լաւ կը լինի որ ընկերող շատ աւելի զդոյշ մնայ և ցերեկով չերևայ գիւղի մէջ... Կառավարութիւնը վերջերս... լրաւաներ...

Երբ ներս մտանք, մայրս շտապով եալմայի ճոթը իջեցրեց ճակատի վրայ, մօտեցաւ և համբուրեց քահանայի ձեռքը:

—Աչքերող լոյս, ասաց քահամնան— արժանի եղաք Վահանին տեմնելու... բարով-խէրով նրա կանաչ-կարմիրը կապինք:

Ու նստեց վերի կողմում փուած ներքնակի վրայ:

—Երէկ այն ի՞նչ էր եղել, Մարկո՞ս, շարունակեց նա հօրս դաւնալով—ասում են ինչ որ զալմաղալ է եղել ձեր կողմերում:

—Հա՛, աջիդ զուրբան... Սասանի լակոտ Զազօի տղան ջուրս կարել՝ իրանց այգին էր արել: Թէ Զազօն ինքը չհամնէր, կոփու էր լինելու:

—Այ, այ, Մարկո՞ս, զլուխը շարժեց քահամնան, օղու բաժակը ձեռքին—զգո՞յշ կաց. Զազօի մանչու հետ խաղալ չի լինի: Այժմ մանաւանդ, իբր քիւրդ ու թուրք լրացել են, կառավարութիւնն էլ պատճառ է վինտում խօսւզարկելու, բանտ տանելու, քամնելու... Ի՞նչ որ է, կենացդ... օրը բարի է եղել...

Ասաց, խմեց, յետոյ դարձաւ դէպի ինձ:

—Է՛հ, այժմ դո՞ւ խօսիր, Վահա՞ն, աւելացրեց նա ժպտալով—այն կողմերում ի՞նչ նոր բան կայ... Զպատմեցիր: Անցեալ օր Համի Գէորգը ասում էր, զուլումը սաստկացել է, փոթորիկի նման գալիս է ու գալիս... իբր թէ Պոլսում վատ բաներ են եղել, Պատրիարքը ժովվրդի հետ լաւ չէ... Այդաէս բաներ... ձիշտ է:

—Ճիշտ է:

Եւ այդ ասելով, զննողաբար նայեցի նրան: Զգում էի, ինչ որ բան էին ծածկում ինձնից. գուցէ շա՛տ աւելի բաներ ունեին ասելու, այլ չգիտեմ ի՞նչու, չէին կամենում խօսել:

Հայրս էլ լուռ էր. երեսիս անգամ չնայեց: Քահանան միայն մի «հըմ» արձակեց և լուսւթեամբ մօրուքը շփեց:

—Անիբաւութիւնը վաղուց է որ կործանիչ փոթորկի է փոխւել, շարունակեցի ես փորձիչ կերպով, —և այդ փոթորիկը աւեր ու արիւն սփոելու է գալիս... այլ ես ապահովութիւն չկայ...:

—Հայը ե՞րբ է ապահովութիւն ունեցել, հառաջեց քահանան— խղճալու աղդ ենք մենք... և Աստուած արդէն վաղուց զգւել է մեր լալկանութիւնից ու խեղճութիւնից... Ու պատիժն աւելացնում է..., Լալկանին ո՞չ ոք չի սիրում... խղճալն էլ սահման ունի, որից յետոյ՝ զգւանեքն է գալիս...

Զարմացել էի: Երբէք չէի սպասում լսել մի քահանայի, այն էլ գիւղական, հայ քահամնայի բերնից այդպիսի խօսքեր... Խոր գիտակցութիւնն էր խօսում ծերունու մէջ...

Ի՞նչէր էին ուրեմն կատարւում այս կողմերում և ամենից տղէտը ես էի: Ի՞նչո՞ւ քահանան այդքա՞ն փոխւած... ի՞նչ հովեր, ո՞րանդից էին օդի մէջ սաւանող բողոքի այդ խոր հառաջները, որ վերջապէս ցամաքեցրել

Էին այս լալկան ժողովրդի աչքերը և երեան էին հանում՝ զայրոյթի ձայներ :

Սնչուշտ մի բան կար . ամբողջ գիւղը անպատճառ ենթարկել էր զօրեղ փոխութեան, եթէ քահանան, ազգաբնակութեան ամէնից պահպանողական մարդը, այժմ այդպիսի խօսքերով էր արտայայտում իր բողքը, իր գիտակցութիւնը :

Շմաւոն, բժիշկ... լալկանութիւնից զգւա՞նք... Սրանք բաներ էին, որոնք ինձնից աւելի միամիտ մարդուն անդամ կրօրող էին յուզել և հետաքրքրել :

Մայրս այդ միջոցին մեր առաջն էր մղել փոքրիկ աթոռակը և հաց էր պատրաստում :

Պղնձեայ մեծ սինին գլորելով առաջ բերեց աթոռակի վրայ, յետոյ մի նեղ չոր ասարածեց մեր ծնններին, հաց շարեց սինու շուրջը, մի-մի սոխ դրեց, երկու ափսէ պանիր, մի-մի փայտէ դգալ և հուսկ ուրեմն, կուացաւ դէպի ականջս ու ասաց :

— Ընկերդ դեռ քնել է . չե՞ս զարժմում որ ճաշի գայ :

— Ո՛չ, մայրիկ, շատ յոզնած է, թող քնի : Նա առաւոսները ճաշելու սալորութիւն չունի :

— Ուրեմն կեսօրին ինձ մօտ բեր, միջամտեց քահանան — միասին կը ճաշենք, կը խօսենք...

Գիտէի որ Տէր-Յակորը ո՞չ միայն օտարասէր և հիւրասէր էր, այլ և ուսումնասէր . սիրում էր զարդացած մարդկանց լսել, խօսել նրանց հետ : Սակայն այս անդամ նրա հրաւէրն ես այլ կերպ բացարեցի : Ուզում էր անշուշտ ճանաչել ընկերիս . իմանալ թէ ո՞վ է, ինչո՞ւ է եկել և թէ արդեօք նա էլ այդ Շմաւոնի կամ բժիշկի ընկերներից չէր :

— Լաւ, ասացի ես, կ'ասեմ իրան Մարտիրոս էֆէն-դին սիրում է լաւ քահանաներին :

— Շա՛տ ապրիս . . . ճաշակեսցուք խաղաղութեամբ . . . Ու ճաշն սկսեց : Խօսակցութիւնը գրեթէ դադա-

րեց : Գոնէ այլ ևս միմիայն ինձ վերաբերեալ և Պօլսի դէպերի հետ կապ չունեցող նվաթերի վրայ էին խօսում : Քահանան ուսում էր մեծ ախորժակով . խոշոր պատառներ էր, որ կլանում էր . . .

Որքա՞ն ուսում էին երկուսն էլ : Տարօրինակ էր թւում ինձ : Մոռացել էի, որ ամէն առողջ ու գործող գիւղացի այդպէս է ուսում :

Հէնց այդ էր պատճառը, որ, ինչպէս նկատեցի, հայրս ու մայրս ցաւակցաբար էին դիտում ուտելու : Իսկ հայրս բահանան, որ սկզբում չէր նկատել, յանկարծ ինձ նայելով ասաց :

— Այդ ինչ է, Վահա՞ն, հիւա՞նդ ես :

Մօրս աչքերը արտասուլքով լցւեցին :

— Ոչինչ, տէրտէր, ասաց հայրս — հիւա՞նդ չի նրեւում, բայց Ստամբոլի օդը ուտելու ախորժակ չի թողել վրան . . . Ճանապարհից եկած է յոզնած : Մեր գիւղի օդն ու գործը կը լաւացնեն նրան :

— Ի հարկէ, ի հարկէ, վրայ տւաւ քահանան — տեսել եմ, բաւական տեսել այդ քանդւած Ստամբոլից եկածներին : Բոլորն էլ այդպէս են լինում . նիհա՞ր, հիւա՞նդ . . . Այս, Վահան, իջիր ձորը, մեր լեռներն ի վեր մագլցիր . . . Ու, աւելի լաւ կը լինի էլ . . . եթէ այնպէս, շուտ-շուտ շրջակայ գիւղերը գնաս, մի առժամանակ գիւղամէջ շատ չերեաս . . . գնա Տիլրիկի կասմա գիւղը, յետոյ՝ Բինկեան . . .

— Այս', այս', պնդեց հայրս — թող գնան քիչ Բինկեան, քրոջս էլ այցելեն . . . յետոյ՝ Կամսա, յետոյ Զիմառա, Խաչառուք պատւելու հետ ծանօթանան . . . Ցիշում ես, Վահան, գիւղի վարժապետը :

— Լսել եմ, ասացի — գովաւմ են : Իսկ մեր գիւղի վարժապետը . նա՞ ինչպէս է :

Հայրս ու քահանան խօսյն միմեանց երեսի նայեցին :

— Ինչո՞ւ, դիտեց քահանան — նրա հետ էլ ծանօթացիր . Քերովքէ վարժապետն է . . . երեխ կը միշես :

—Քէօսենց Քերովքէն... լսել եմ. Պօլիս պատմենցին ինձ... Ասում են խղճուկ մարդ է...

Ոչինչ չառարկեցին, այլ շարունակեցին ուտել: Ըստ երեւութին չէին համակրում այդ մարդուն. կամ գուցէ քահանա՞ն միայն չէր սիրում նրան: Շատ գիւղերում, քահանաներն առ հասարակ թշնամի են լինում վարժապետներին:

Այդպէս էր ահա իմ մուտքը հայրենի գիւղում:

Մուտքը և միւս օրերը ինձ վիճակւեց մեր ազգականներից ու հին ծանօթներից շատերի այցելութիւնն ընդունել: Բոլորն էլ ինչ որ ծածկամիտ, զգուշաւոր վարմունք էին ցոյց տալիս: Ամէնքի դէմքի վրայ գծւած կար լուրջ և խոհուն կերպարանք: Կ. Պօլսի մասին հարցնում էին, իրաւ է, սակայն կարծես ո՞չ այնքան հետաքրքրութեամբ:

Դրա փոխարէն, իւրաքանչիւր եկող խորհրդաւոր և գաղտագողի շուրջն էր նայում, կարծես որոնելով տեսնելու ինձնից բացի մի ուրիշի եւս: Եղան մի քանիսներն էլ, որ ուղղակի հարց էին տալիս թէ հետիս ընկերը Շմաւոնը չէր արդեօք:

Մարտիրոսն այդպիսի այցելութիւնների ժամանակ,— իմ և հօրս խորհուրդների—երեւան չէր ենում. կամ պարտէղի խորքումն էր և կամ վերի սենեակը մտած:

Այդ զգուշութիւնը, ինչպէս յետոյ տեսայ, յիրաւի հարկաւոր էր: Հայրու շատերին արդէն ասել էր, որ «Ամանի ընկերը» գնացել էր գիւղից. յայտնի չէ ուր. ինձ էլ մի երեկոյ խորհուրդ տւառ անշուշտ Մարտիրոսի հետ գիւղից դուրս գնալ մի քանի օրով, որովհետեւ թէ թուրք դրացիները և թէ շատ «ո՛չ-քարեյոյս» ազգակիցներ՝ չափալսնց հետաքրքրումն էին մեղնով:

Սակայն, նախ քան այդ, մենք երկուսս մի օր ճանացինք քահանայի տանը, երկար խօսեցինք և գիւղերով տուն վերադարձած, միւս առաւոտ՝ ազօթարանը դեռ չբացւած, գիւղից դուրս գնացինք:

Քահանամն համոզել էր մեղ՝ մի առ ժամանակ հեռանալ գիւղի ուշաղըութիւնից:

Փոքր Արմանն իջանք, այցելեցինք հետզհետէ Մջակացին չատ գիւղեր, գնացինք մեր լեռները քիչ շրջելու և տասնեհնուգերորդ օրը միայն մտածեցինք տուն վերադառնալ:

Մեր այցելած գիւղերում, ամէն աեզ Մարտիրոսին՝ Շմաւուն կամ «Բժիշկն» էին համարում և երբ իմանում էին որ այդպիս չէր, մի տեսակ կարծես տիրում էին. այնուամենայնիւ մեծ յարգանքով ու սիրով էին ընդունում և գրեթէ ազահութեամբ էր, որ լսում էին մեղ:


Ու Մարտիրոսը առիթը չէր փախցնում:

Պէտք էր տեսնել թէ որքան զգուշութեամբ և պատկառանքով ժողովւում էին գիւղացիք մեր իջած տան ախոռատանը, և լուռ ու անձկանօք, ակնարկնին մեր չքթունքներին ուղղած, յուղւած և սրտատրով լսում էին Մարտիրոսին:

Զարմաննքով նկատում էինք, որ բոլորն էլ անմիջապէս ըմբանում էին մեր ասածները, համաձայնուում էին մեղ հետ: Մինչեւ իսկ ողեւորութեան, երխտասարդական բուռն ոգեւորութեան արտայայտութիւններ էին տեղի ունենում...

Պարզ էր. այդ բոլոր տեղերու անցել էին արդէն սերմանացաններ, ու սերմերը չէին ընկել ապառաժների վրայ:

Եետոյ, երբ մինչեւ խորը գիւղեր խօսեցնում էին մեղ, երենք էլ խօսում, երբ տիսուր եկած՝ զւարթ ու ոգեւորած զնում էին երազուն դէմքերով, լաւ բանի ապասողների աւրախութիւնը սրտներում—մեր կողքին նստած էին մնում մի քանի երխտասարդներ: Մարտիրոսը աւելի սեղմած նրանց իր շուրջը, ցած ձայնով, բոցալառ աչքերով՝ երկար ու երկար պատմում էր, ճառուում...



Եւ այդպէս, չորս-հինգ զիւղ տեսանք, լեռներն ելանք ու իջանք և մի երեկոյ էլ, մթնով տուն վերադանք:

Յոզնած էինք. հարկաւոր էր քիչ հանգստանալ:

Բայց երբ տան դուռը բացինք, հօրեղբօրս նստած գտանք այնտեղ:

Ամբողջ Գուրուչայը, Ակն անդամ ճանաչում է Շախաջի Աղաջանին: Մի զւարթ 65 տարեկան ծերունի էր. երկարահասակ, լայն դէմք, մեծ աչքեր, հաստ ընչացք, զւարթ գծեր և դրանց հետ՝ քաջարտութիւն արտայայտող կայտառ շարժւած քններ:

Այդպէս էր իմ հօրեղբայրը—Շախաջի Աղաջանը:

Հոչակւած էր նա որպէս սրտոտ, սրախօս և կատակաբան մի ծերունի: Կատակաբանութեան հոչակի չնորհիւ իսկ, գուցէ միակ ինքն էր, որին յաջողւում էր ճշմարտութիւնն ասել այնպիսի անձերի, որոնք ուրիշց լսելու երբեք չէին հանդուրժիլ:

Ճանաչում էին նրան երկրի բոլո՞ր մեծամեծները —նոյն իսկ թուրքերն ու Քիւրդերո: Մէրքէղունն էլ յայտնի էր, որպէս լաւ քէփ անող, լաւ խմող, ամենքի հետ իսկոյն մտերմացող, խելօք... սովկայն «կատարելապէս բարեյոյս» անձ:

Ամէն աե՞ղ Աղաջանը գտնում էր միշտ յարդանք ու ոէք: Հայրա յարդում էր մեծ եղմօրը. մայրս, իբր հարսը, դեռ ևս կամաց ձայնով էր հետար խօսում, բերանն էլ կիսովին ճնօտակալով փակած:

Փայտեայ ճրագիալի վրայ դրւած ազօտ լամպը հազիւ լուսաւորում էր սենեակի վերի կողմը, ուր երկու եղբայրները—նայրս ու հօրեղբայրս նատել խօսում էին: Նրանց տռաջ, ցած աթոռակի վրայ դրւած կար ողոնիւրից, սովից և հացից բաղկացած ընթրիք, իսկ կողքին գինու մեծ ամանը և բաժակը: Մայրս, առնօսիկի*)

*) Ճկած մի տախտակ, որի վրայ, ձեռքով մանելու համար, բրդի բուլս են անցկացնում: Շինւած է առնել բառից:

վրայ մաքուր բրդի մի քուլա փաթաթած, պատի մօտ կծկել՝ մանում էր: Քոյրերս քնել էին:

Առաջ ես ներս մտայ: Մարտիկը հետեւց ինձ:

—Բարի երեկոյ...

—Ա՛յ Ասծու բարին, Վահան, գոչեց հօրեղբայրս

—եկա՞ր վերջապէս... իս ուր էլք գնացել:

—Ա. Գրիգոր ուխտի, հօրեղբայր:

—Հա՞մ... հը՛մ... քմծիծաղ տւաւ ծերունին:

—լաւ, Ա. Գրիգոր է... ինչ որ է, ուխտաներդ ընդունական:

—Բեղ օդնական-պահապան:

—Ապրիս... Հետի՞նդ ով է... ընկի՞րդ է:

—Մարտիկ էֆէնդին է, հօրեղբայր:

Գեռ ծանօթ չէր: Ուշաղբութեամբ զննում էր նրան:

—Հա՞մ... արեց նա—համեցէ՛ք, էֆէ՞նդի:

—Բարի երեկոյ ձեզ, խօսեց Մարտիկն ու նստեց:

—Ասծու բարին: Բարի եկար... համեցէ՛ք, մօտ

նստի՞ր, Շմաւոն էֆէնդի:

Հօրեղբայրս էլ, չնայելով իմ անդելուն, դեռ չեր հաւատում որ ընկերս Շմաւոնը չէ: Կարծում էր որ մենք թաղցնում էինք:

Ի մեծ զարմանս ինձ, յանկարծ Մարտիկը, որ նստել էր, լրջութեամբ հօրեղբօրս դարձաւ ու ասաց:

—Քիչ սխալեկ էք... Ես Շմաւոնը չեմ... Շմաւոնը երդուկա է և այս կողմերը չի դալու առ այժմ:

սակայն ևս նրա ընկերն եմ, Մարտիկը:

—Հա՞մ... ուրախացաւ հօրեղբայրս —Մէրքէկում ասացին որ դու Շմաւոնն ես...

Ապա, յանկարծ, շուրջը նայեց և աւելի մեղմ աւելոցից:

—Լոի՞ր ինչ կ'տանմ, Մարտիկ էֆէնդի. եթէ բան աւորս մեր զիւղումն անելու, շուտ արա... մարդիկ անհամբեր են վառնում. Շմաւոն ու բժիշկը չեկան, թէն

լուր էր հասել որ գալու էին... Եթէ քեզ են ուղարկել, ուշացնելու աւելորդ է, որովհետեւ մէրքէղում արդէն խօսում են քո մասին:

Մարտիկը պահ մը լոեց, յետոյ իմ կողմը դարձաւ, ձեռքն ուսիս դրաւ ու ասաց.

Ահա ո՞վ կը մնայ այստեղ... Ես մի քանի օրից յետոյ պիտի գնամ... Վահանը կը տեսնելի Խաչառուր պատելու հետ, և եթէ իրաւ է, որ կան ձեզ նման սրտոտ ու քաջ ծերունիներ այստեղ, Վահանի անելիքները շատ կը հեշտանան...

Պէտք էր տեմնել թէ դրանից յետոյ մի բոպէ ինչ-պիտի խոր, վախախառն լուսութիւն յաջորդեց: Հայրս խոկոյն վեր թռաւ, գնաց դռնից դուրս նայեց, ապա փակեց ամուռ, եկաւ իր տեղը նստեց ու ասաց.

— Կամաց խօսէք... թուրք դրացիները սասարիկ կասկածու են դարձել և լրաեսում են խրաքանչիւր Հայի վրայ...

— Ե'... կամչեց հօրեղբայրս — հերիք է վախը, Մարկոս, մեռա՛նք մենք վախկոտութիւնից... խէ՛րները անիծեմ ես այդ լրտեսներին... այնքա՞ն մեռանք, որ 1400 մարդ ունեցող Արմատանը մի Վահանն էլ չկարողացաւ պաշտպանել:

Ապա դարձաւ դէպի մեզ ու չնայելով որ ինքն էր զգուշութիւնը արհամարհողը, գլուխը իջեցրեց ու ցած ձայնով հարցրեց.

— Իրա՞ւ է, Կ. Պօլիս ցոյց է եղել... Բնկերուշիւնը այս կալմերում մարդիկ ունի... շուտո՞վ պիտի նշանը արւի... խօսեցէ՛ք... Ողջ գիւղը մի ամսից ի վեր լուրերի է սպասում, անհամբերութիւնը իւնաթացը է մեզ, անորոշութիւնը ուշք չի թողել վրա ներս...

Այս բոլորը այնքան յանկարծակի էին ինձ համար, որ ո՞չ մի բառ պատասխանել չկարողացայ: Երբէ՛ք չի

կարող սպասել, որ հօրա և հօրեղբօրս նման ծերունիներն անգամ վարակել էին նովերով: Ո՛չ միայն վարակել, այլ և իրանց երեակայութեան մէջ արդէն ամէն ինչ կատարւած, ամէն ինչ պատրաստ համարելով — «նշանի» էին սպասում:

Քստ երեսութիւն ամբողջ գիւղը այդպէս էր: Նշան, վճռական բոպէ, ոգեսորութիւն և գրեթէ մանկական շապողութիւն:

Մարտիկն անգամ, լսելով հօրեղբօրս դէմքը, ինձ-ուց և մտախոն՝ լուռ մնաց:

Զէք որ մենք ինքնիրս չգիտէինք թէ ինչ պիտի լինէր: Կ. Պօլսի ցոյցը միթէ պէտք էր համարել որպէս գործնական քայլերի սկիզբ, միթէ այդ անյաջող, այդքան միամտութեամբ և անակնկալ կերպով տեղի այդքան միամտութեամբ և անակնկալ կերպով լուսուցող գէպքը կարծել էր տեղ գաւառներին, թէ ունեցող գէպքը կարծել էր տեղ գաւառներին, թէ անմիջապէս ահա պատրաստ էր ապստամբութիւնը, թէ անմիջապէս կարելի էր պարզել դրօշը և ատելի լուծը թօթափել:

Բայց չէ որ այդ ամենը կարող էր զարհուրելի, չարագուշակ հետեւանքեր, ունենալ: Գաւառներում կարագուշակ հետեւանքեր, ունենալ: «Բնկերուերեկի, ո՞վ գիտէ, ենթադրում էին, որ «Բնկերութիւնը» ունի զէնք, բանակ, զօրել կազմակերպութիւն, թիւնը» ունի զէնք, բանակ, զօրել կազմակերպութիւն, որ նրան միայն մի նշան էր հարկաւոր՝ սկսելու համար:

Սոսկումից դողում էի: Եթէ՛ զստիլ անհնար լինէր, եթէ՛ յիրաւի գաւառացի ճնշող ժողովուրդը, յոյս դրած կազմակերպութեան երեակայած ոյժի վրայ, — սկսէր գործնական քայլեր և կարծեր թէ օդնութիւն կ'ունենար «Բնկերութիւնից»...

Ա՛հ, ո՛չ, չափազանց զարհուրելի կը լինէր: Ո՛չինչ, զրեթէ ոչինչ չկար գետ. նոյն իսկ կազմակերպութիւն գոյութիւն չունէր որոշ շընակալով: Կային միայն պրօպագանգիսաներ — այդ ողեսորութիւնից առաջ եղածները գոհնաւորող, գրգռելու համար մնաց նույն խօսառումներ անող և խորհրդաւոր ձեերով՝ գոյու-

թիւն չունեցող բաների մասին լուրեր տարածող մոլեսանդները, որոնք գիւղից-գիւղ, քաղաքից-քաղաք էին տաճառամ կրակը, մուանալով որ այդ նոյն կրակով կարեմի էր մօմիիր ու աւերակ գոյացնել անսպատառատ ազգամակութեան մէջ, մուանալով որ մղւող փոթորիկը կարող էր այսպիսի՝ ժայռեր տապալել, որոնք եթէ աւելի լաւ ամրապնդեէին, ապագայում կարող էին ամէն հականարւած ի դերեւ համել...

Բայց ահա մնաք գտնուում էինք դառն, զարհուրելի իրականութեան առաջ: Ծերունիներն անդամ, իրանց ամբողջ խոհեմութեամբ ու լրջութեամբ, համոզւած էին որ ամէն ինչ պատրաստ էր, որ միայն նշանն էր հարկաւոր տալ—և երկիրն ամբողջ ոտքի էր ենելու, իր ազատութիւնը գօրեղ բռնաւորի ձեռքից կորդելու:

Պատրաստ... Ո՛չ միայն պատրաստ չկար ոչինչ, այլ նոյն իսկ պատրաստելու համար չեն արւած անհրաժեշտ առաջին քայլերը: Նոյն իսկ չկար ծրագիր, չկար կազմակերպութիւն, այլ կային մի բուռը մարդիկ, որոնք կարողացան օգտւել մայրաքաղաքի ժողովրդի ծայրացեղ տառապանքից, համոզեցին որ բողոքը պիտի ազդէր, անդէն ու խաղաղ ցոյցը պիտի ո՛ր և է բան կորզէր... ու Կ. Պոլսի փողոցների սալայատակը ներկեցին անմեղ արիւնով:

Եւ բռնաւորը, որին հարկաւոր էր գեռ քնած թողել, մինչեւ որ սարուկը կատարեալ ոյժի տէր դառնար՝ զարմելու համար, բռնաւորը զարթնել էր. սարուկի անխօնեմ, մանկական անխորձ քայլը նրա ուշադրութիւնն էր հարաբերել:

—Խօսէ՛ք... շարունակեց հօրեղայրս աֆակութիւնիր—մի թագինէք մնդինց... մենք ամէն բան գիտենք, գիտենք որ Ծնկերութիւնն հաղարմներով մարդիկ ունի մեր կողմերում, որ այդ մարդիկ խմբեր կազմած՝ սպասում են որ մնաք էլ ոտքի ելլենք ու միանալով

իրանց՝ դուրս քշենք անօրէն ազգին մեր հոգերից, ազատնաք մեր վիզը սարկական օղերից, և կոտորենք այդ անիծած պաշտօնեաները... Մեզ ասել են, որ երբ Նմաւունը կամ Թիգիզը երեւան այս կողմերում, քիչ յետոյ էլ խմբերը կը գան, նշանը կը տրփի...

Մարտիկը փորձեց ընդհատել նրան: Հետզհետէ աւելի մուալլած, ոտքի ելաւ, յուսահատաբար ինձ նայեց...

—Ուրեմն, շարունակեց հօրեղայրս—երեխ դուք Ծնկերութեան մարդիկը չէք, որ այդ բոլորը չգիտէք...

Յարող գաւառը գիտէ, ամէնքը պատրաստում են... Իրաւ է, զէնք չունենք, բայց մեղ խոստացել են, որ Եմաւունն ու Բժիշկը զէնքեր են բերելու և կը ցրւեն մեղ, որ մեղնից միայն կարիքներ են ուզում... Ա՛հ, դուք չգիտէք. դուք երեխ չէք հաւատալ, բայց ինձ նման ծերունիքը անգամ ոտքի կ'ելնեն. Թուրքի լուծը արդէն չափազանց անտանելի է գարձել հայ ժողովրդի համար, չափազանց... Էլ տուն, կին, կրօն, եկեղեցի համար, չափազանց... Այլ տուն, կին, կրօն, ամէն և պատիւ չմնաց... ամէն, ամէն ինչ պղծում են, ամէն ինչ իլում... Հայը շունէ, հայը մարդ չէ... ամէն ինչ լակու այդպիս է գոտում երեսիդ և գու չես կաթուրք լակու այդպիս է գոտում երեսիդ և գու չես կաթուրք լակու նրա լեզուն, չես կարող լա՛ց լինել անգամ... բող կարել նրա լեզուն,

Սաաց և յուզւած՝ մի բաժակ գինի մի ումպով դատարկեց: Հայրս սոսկմամբ շուրջն էր նայում և աչքերը, բայց երդիքին էր, վախնալով որ այնտեղից լրտպուներ, լսողներ կը լինէին:

—Կամաց խօսիր, եղբա՛լը, կամաց... մրմռում էր նա:

Շփոթւած էր Ծնկերս. նկատում էր զէմքի վրայ վարանումն: Խօսել էր ուզում, սակայն ինչպէս յուսավագութեան մասնաւում էր այս կամաց սակական ծերունիներին, նրանցով՝ լսած անէր այդ պատական ծերունիներին, նրանցով՝ լսած ամբողջ գիւղացոց, ամէնքին... Սաէլ որ ոչինչ չկար ամբողջ գիւղացոց, ամէնքին... Սաէլ որ ոչինչ չկար ապարատ, որ ձմարատթիւններ չեն լսածները և որ պարագատ, որ այս կազմակերպութիւններ չեն լսածները և որ պէտք էր սպասել, դեռ պէտք էր լուռ՝ կրել լուծը, նախասինքն ու ամանջանքը...

III

Այդ երեկոյ, մեր սենեակը քաշւած, երկուսս էլ մեալ՝ տաք վիճաբանութիւն սկսեցինք:

Ես ամուգում էի, որ հարկաւոր էր զուտ ձշմարտութիւնը դնել հասարակութեան առաջ, որ չպէտք էր զուր յոյսերով ու ոգեւորութեան արդիւնք գունաւորումներով՝ բռնակալութեանը զոհեր տալու թելադրել դիւղացոց: Պնդում էի, որ հարկաւոր էր իսկութիւնը պարզել, կեզծ ուղին թողնել և ժողովրդին խօսական հողի վրայ հանելով՝ յեղափոխութիւնը չվտանգել:

Մի ինչ որ Շմաւոն, որի ոլ լինելը վերջ ի վերջոյ չկարողացաց իմանալ, անցել էր Փոքր-Ասիա, մտել Ասրաբկիր, Տիվրիկ, հասել մինչև Կամայի և իր հետքերի վրայ թողել փոքրիկ խմբեր՝ կազմւած հրդեհի համար. նման այն զինուորների, որոնք պատրաստ էին իրանց աներն անուամ հրդեհելու, միայն թէ հրդեհն սկսէր:

Ցոյցից առաջ երկու պարսկաստանցի երիտասարդներ եկել էին Ա.կն, գրդուել ժողովրդին, ստել՝ որ կազմակերպութիւն կայ, որ անազին քանակութեամբ զէնք պիտի բերւի, որ ամէն տեղ պատրաստ էր ապստամբութիւնը և որ չուտով նշանը պիտի տրւէր ընդհանուր յեղափոխութեամ:

Բանել-բանտարկել էին նրանք, իրաւ է ։ սակայն չսորշիւ պարսկաստանցի լինելուն, երկուսն էլ ազատուել էին և իրենց հետքերի վրայ կայցեր թողնելով՝ անհետացել:

Սիսունեան երեան եկել մի հայ բժիշկ, որ այժմ խակ պատցաներ էր անուամ Ա.կն, Տիվրիկ և նրանց դիւղերը: Պաշտօնի զիմակովը ապահովւած, յաջողւում էր նրան խմբեր գոյացնել այս-այն տեղ, բորբոքել երիտասարդութիւնը:

Մեզ հասուկտոր լուրեր էին միայն հասնում այդ նոր պրօպագանդիստի մասին: Ժողովուրդը նրա վերա-

բերութեամբ արտասովոր բաներ էր պատմում: Ամբողջութիւնը լարւած, կարծում էին թէ այդ մարդն էր ամէն բանի հոգին և նա պիտի կործանէր բռնակալութեան լուծը, աղատէր երկիրը:

Մարտիկը առարկում էր որ չպէտք է սուր կերպով յուսախաք անել արդէն լարւած ու յեղափոխական կազմակերպութիւններից շատ բան սպասող ժողովրդին: Պէտք էր թողնել որ նոքա նոյն մեծ գաղափարն ունենալին «Ընկերութեան» մասին: Ճշմարտութիւններ կան առում էր նա— որոնք սպաննել կարող են: Արդեօք, եթէ գիւղացոց խկութիւնը ասենք, ո՞վ կարող էր երաշխաւորել, որ չէին ընկճակի նրանք, յուսահասութեանը վը-հասութիւն կը յաջորդէր և այնունետեւ այլեւ երբէ՛ք չէին հաւատ ընծայիլ յեղափոխութեան, կ'արհամարհէին յեղափոխականներին, զգալով որ ոյժն այլ ևս բանակալութեան կողմն է. նոյն խակ կը մասնէին պրօպագանդիստներին, որպէս զի չվտանգւեն:

Մյս ուղղութեամբ մտածելով էր, որ նա լրել էր, չէր խախտել հօրելլօրս հաւատքի հիմքը: Վախենում էր, որ եթէ իրականութիւնն ասւի, գործը մեռնելու աստիճանի՝ կ'ընկնի. չափազանց արդէն ժողովուրդը մնած էր քարողւած խոստումներով:

Եւ վերջապէս, նոյն խակ պիտի հաւատային մեր ճշմարտութեանը: Զէին ենթադրիլ, որ մենք չզիտենք, որ մենք ստախօսներ ենք, «Ընկերութեան» թշնամիներ և նոյն խակ յեղափոխութեան դէմ գործող գաւաճաններ...»

Ժողովուրդը մի անգամ ոտք էր դրել մի որոշ ճանապարհի վրայ. ետ դարձնելը վտանգաւոր էր. մնում էր դանդաղեցնել քայլը և դանդաղութեան ժամանակ՝ ջանալ ուղղելու մխալը, անզգալապէս ետ դարձնելու նրան և խեկան ուղիի վրայ հանելու:

Այդ եղաւ մեր եղափոխութիւնը: Որոշեցինք չերքել ժողովրդի լածներից էականները և կամ, եթէ հերքել ժողովրդի լածներից էականները և կամ,

քել, անել այդ մեծ զգուշութեամբ, կամաց-կամաց և փոխարէնը ուրիշ, աւելի քրական մտքեր ներշնչելով: Զանդել ու չհաստատել նախակին անխոհեմ պրօպագանդիստների խռովութիւնը ու մտացածին պատմութիւնները զէնքի, կազմակերպութեան, նշանի և այլն մասին: Դրա փոխարէն՝ սկսել մի հիմնական, առողջ, յամրաքայլ, բայց հաստատուն պրօպագանդ: Զանալ միւս կողմից էլ՝ դույնելու կազմակերպութիւն, գաւառի ապատամբութեան գործը զեկավարող լուրջ, չշտագող կազմակերպութիւն, որ սիստեմատիք գործողութիւնների ձեռնարկէր, զապէր անժամանակ ոգեսրութեան սահնձարձակութիւնը, ճշգնէր չվտանգել ժողովրդի արամադրութիւնը և չենթարկել յեղափոխութիւնը՝ յետագնաց տիսուր և արիւնալից փորձանքին:

Բայց դրա համար իսկ անհրաժեշտ էր նաև աւեստել երկու անձի հետ, որոնց անունները անդադար պատում էին ժողովրդի քերնում—թժիշկը և Շմաւոնը:

— Շմաւոնը չկայ, ես գիտեմ, առաջ Մարտիկը—դա մի ինչ որ ինքնարտոյս պրօպագանդիստ է եղել. ինքն իրան, ինքնազգուի եկել է, առաջին կայծերը դրել և այժմ հեռացել է երկրից: Մեզ հարկաւոր է թժշկի հետ աւեստել և Խաչառուր պատելու: Պէտք է իմանալ թէ ի՞նչ են նրանք, ի՞նչ են ուզում անել, ի՞նչ դրօշի տակ են գործում, ունեն կազմակերպութիւն:

— Ինձ պատմում էին դիւլերում — ասացի ես — որ թժիշկը Բինկեանի մէջ յաճախ լինելով, այսաեղ մի ինչ որ լնկերութիւն է կազմել և որ արդէն կառավարութիւնը սկսել է կասկածանքով նայել թժշկի պտոյաների վրայ...

— Տեսնենք: Ես կը վնամ թժշկի հետ աւեստելու: Իսկ դու Խաչառուր պատելիին զնա, նա տեղացի է և քեզ հետ աւելի պարզ կը խօսի:

Միւս օրը Մարտիկը մեկնեց: Թժիշկը Ակնի կողմկրն էր, այդպէս ասացին մեզ:

Ես պատրաստում էի կասմա, Խաչառուր պատելուն զնալ, երբ միւս օրն իսկ մեր գիւղում տեղի ունեցող դէպէրը այնպէս արգելք եղան ինձ, որ մինչեւ մի ամիս ամբողջ, իրը փախստական, ստիպւեցի մեր գիւղից դուրս, հօրաքրոջս մօտ թագնւել Բինկեան: Բայց այս տեղ, նախ քան պատմութիւնս շարունակելը, ինձ հարկէ մի փակագիծ բանալ՝ պատմելու համար մեր գիւղի երկու կուսակցութիւնների մասին, որոնք սկիզբ էին առել 1888-89 թւականից և հետզհետէ մեծ չարիքներ էին առաջցնում:

Ըստ հաւանակ սովորութեան, Արմատանցիք իրանց գիւղի ամբողջ տաւարը նախիր կազմած՝ ուղարկում էին ամառները որոշ արօտավայր և ամառւայ երեք ամիսներում թողնում պատսպարելու մի ընդհանուր փարախի մէջ:

Արմատացոց սարն էր այդ—ամառամսոցը:

Զգիտեմ ինչու, որի դրդմամբ կամ ի՞նչ գիտաւորութեամբ—և շատ կառկածում եմ որ դա գա' րձեալ մեզնից նախընթաց «եռամնդատ» պրօպագանդիստների գործը լինէր—գիւղի մը խումբեր խասամրդ ոյժեր, իրանց իրանց վրայ «ազատական» տիտղոսն առած՝ մտածեցին առանձին փարախ ունենալ, որպէսզի «կարող լինէին մասնաւոր լինամքներով բազմացնել ոչխարիները»:

Մինչեւ այժմ էլ ծիծաղս գալիս է, երբ մտաքերում եմ այդ հստաներին, իրանց «ազատական» կոչումով: Մինչեւ իսկ հին փարախները գործածողներին նրանք տիտղոս էին ինքել—«Միապետականներ»:

Անշուշտ ազատականները վերջոյ կ վերջոյ կարող էին միայն ծալրի առարկայ գառնալ իրանց յաւակնութիւնների համար, բայց ի՞նչ արած, որ մեր աղաները վիրաւորանք զգացին նրանց վարմունքից, չհաւանեցին այդ «նորամուտ» սովորութեանը և մինչեւ իսկ ծածկաբար քանդել տւին նոր շինւած փարախները:

Սկսեց կոիւը : Ժողովուրդը երկու մասի բաժանւեց . միմեանց վասել , միմեանց դէմ ստոր միջոցների գործադրել ...

Աղաներից մէկն էլ մի օր Մէրքէզ գնաց , ու մոտածելով վերջ դնել աղասական երիտասարդների արիկայութիւններին» , ամբաստանեց շատերին որպէս յեղափոխականներ , հաղորդեց որ նրանցից մի քանիսն էլ յարաբերութեան մէջ էին էրզուումի «խոռոչարաբներ»ի հետ :

Կառավարութեան պաշտօնեաների ուզածն էլ հէնց այդ էք : Եկամուտի նոր աղբիւրներ էին բացւում . ինչո՞ւ չօգտւել :

Անմիջապէս ձեռնարկեց գործի . զափթիէներ , ձերակալութիւն , քննութիւն , կաշառք , բանտարկութիւն :

Չուշացաւ նաև պղտոր ջրի մէջ ձուկ որսացող անձերի յայսները : Ամբաստանութիւնները ստեղծնեցին ինքնակոչ փաստաբաններ ու միջնորդներ : Երեան եկան Հաջի Գէորդ ու Թօփալ Վարդանը . առաջինը՝ գիւղի օրէնսդէան էր , երկրորդը՝ սակրիչը , որ համորձակ բժշկութիւն էլ էր անում :

Այս երկու անձնաւորութիւնները , իրանց շահերի տեսակէտով , ուրիշներն էլ՝ անձնական թշնամութիւններից ու ոխից դրդւած՝ զրպարտութիւններ ու ամբաստանութիւններ էր , որ տեղում էին Մէրքէզի պաշտօնեաների առաջ :

Խնդիրը հետզնեաէ մնանում էր , լուրջ կերպարանք էր ստացել արդէն . երբ ևս գիւղ եկայ : Հայրս ու հօրեղբայրս սակայն ջանացել էին միշտ հեռու պահել իրանց , և ոչ մէկ կուսակցութեան կողմն էլ չէին բռնում : Աշխատել էին նրանց գրաւել . այս ու այն կուսակցութիւնը մտածել էին հօրեղբօրս գոնէ համոզել , բայց չէր յաջողել :

Կառավարութիւնը , իրաւ է , շուտով էր նկատել , որ զրպարտութիւններից ո՛չ մէկը հիմք չտնէր , սակայն գործը ձգձգում էր , խուզարկութիւնները մէկ-մէկ կու-

տարում , ուկիներ կորզելու մտադրութեամբ : Արմտանները մի քանի հարիւր ոսկի տուժեցին . մի քանի մարդիկ ծեծի , բանտի զոհ տվին և գործը անշուշտ լիովին կը փակւէր , եթէ Հաջի Գէորգը ու Թօփալ Վարդանը չլինէին :

Ահա դրանց էր , որ յաջողւել էր ինողիրը մինչև երդնկա հասցնել . և այն օրը երբ ևս մտադիր էի մեկնիլ դէպի կամսա կամ Բինկեան , Խաչատուր պատելուն ակնելու , այն օրն իսկ յանկարծ գիւղ մտան Երգնկայի Ընդհանուր դատավայրի օգնականն ու տասի չափ զափթիէներ :

Երեկոյեան դէմ էր , երբ լուրը մեզ հասաւ :

Զին էի թիմարում միւս առաւօտեան համար , երբ յանկարծ գուռը բացւեց և ախոռ մտաւ հօրեղբայրա :

— Ի՞նչ բանի ես , աղայ , կանչե՛ց նա շէմքի վրայ կանգ առնելով :

— Զին եմ թիմարում , հօրեղբայր . վաղն առաւօտ ուզում են կասմա զնալ :

— Իսկ Մարտիկ էֆէնդին . . . վէրն է :

— Ո՞չ , զնաց :

— Ե՞րբ . . . գոչեց ծերունին յուզմամբ և ներս գալով — ե՞րբ զնաց :

— Երէկ առաւօտ . . .

— Ո՞ր կողմը :

— Այս :

— Հա՛ . . . աղատ շունչ առաւ ծերունին . ուրեմն նրանց չի պատահիլ : Այդ լաւ եղաւ . . . իսկ դո՛ւ , թո՛ղ ձին և անից գուրս մի՛ զնալ :

— Ի՞նչո՞ւ , հօրեղբայր . . .

— Երգնկայից զափթիէներ են եկել մի մեծ պաշտօնեայի հետ և խուզարկութիւններ սկսել :

Ռուղէապէս վախ զգացիք : Բոնւել , քննութիւն . . . իսկ յատոյ , երբ խմանային Պօլսից գալս , կը զրէին այնուել և ամէն ինչ կը յացանեէր :

Թողի ձին ու հօրեղբօրս հետ տուն մտանք : Հայրս
էլ եկել էր և ինձ էր հարցնում : Երբ տեսաւ՝ կանչեց .

— Այստեղ ես . . . Լա՛ւ, էլ դուրս չգնաս . . . և կամ,
աւելի լաւ է գնա հօրեղբօրդ տանը . . . Եթէ բան է,
գան խուզարկեն, կ'ասենք գնացել ես :

— Զէ՛, Մարկո՞ս, միջամտեց հօրեղբօրյոս . աւելի
լաւը գիտե՞ս որն է . արի այս գիշեր իսկ Բինկեան, մեր
Թագուհի մօտ ուղարկենք գնայ . Բինկեան վախ չկայ .
թող մի քանի օր հօրքբոյք հիւր լինի :

— Հա՛, լաւ ասացիր, ուրախացաւ հայրս . Բինկեան
նից ապահով տեղ չկայ . այստեղ խուզարկութիւն անեւ-
լու, նեղութիւններ տալու մտադրութեամբ գնալ չեն
կարող . կը վախեան :

Ապա դարձաւ մօրս ու հարցրեց .

— Ի՞նչ կ'ասես, կնի՛կ :

— Հա՛, հա՛ . . . արեց մայրս անձկանոք, թող գնայ .
թէ չէ կը մատնեն, կը բռնեն . . .

— Անշո՞ւշտ . խօսեց հօրեղբայրս մռայլ դէմքով —
ջորեղան Էօմէրն արդէն երէկ ինձ բռնել փողոցում, ծի-
ծաղը դէմքին՝ հարցնում էր թէ Վահանը Ստամբոլից էր
եկել, միւզիւններից էր . . .

— Ա՛յ . . . ցնցւեց հայրս, շո՞ւտ ուրեմն . . . Միայն
Էօմէրը չէ . հայ մատնիչներ էլ շատ ունենք . . . Կնի՛կ,
պատրաստութիւններ տես . վաղն տուաւօտ, դեռ լոյսը
չբացւած, ևս ինքս Վահանին դիւզից կը հանեմ և մինչեւ
ձորի միւս գլուխը կը տանեմ :

Այսուհետեւ երկու եղբայրները նստեցին ընթրիքի և
սկսեցին պատմել ինձ կուսակցութիւնների ծաղումը,
աճելը, մատնութիւնները, Հաջի Գէորգի և Թօվիալ Վար-
դանի արածները . . .

Անշուշտ երզնկացից եկող գատախաղը պիտի ունե-
նա՞ր անուններ և միւս օրն իսկ սկսելու էր խիստ խու-
զարկութիւններ : Ա՛չ Հաջի Գէորգ և ոչ էլ Թօվիալ Վար-

դանը առիթը չեն վախցնել ինձ ևս մատնելու, որովէն
զի յետոյ, բանալից ազատողներ հանդիսանալու պատրւա-
կով՝ կեղեքէին հօրս :

Մնում էր թագնւել : Ես ինքս, հօրս տալիք ոսկի-
ների կամ լինելիք խուզարկութիւնների մասին այնքան
անհանդիսաւ չէլ լինում, որքան նրանից, որ կարող էին
բանտարկել և կամ նոյն իսկ, եթէ չբանտարկէին այժմ,
կարող էին իմանալ Պօլսից գալս, գրել — տեղեկութիւն-
ներ հարցնել և ահա ամէն ինչ կը կորսւէր, ես էլ նեալ :

Նո՞ր գիւղ հասած լինելով, ընդհանուր դատախազը
դեռ հանգստանում էր այդ գիշեր : Միւս առաւօտեան
էր գործի սկսելու, բայց այդ ժամանակ ես արդէն նեռու
կը լինէի գիւղից :

Փոքր Հայքի այդ հին ու նշանաւոր գիւղը, Բինկ-
եանը, Ակն քաղաքից քիչ հեռու, զտնւում է Դերսիմի
լեռնաշղթայի ծայրին, շինւած ժայռերի կուրծքի վրայ :

Անմատչելի բերդի է նման : Տները միմեւանց գիւղի,
ժայռերի ծայրերում, ապառաժների ստարուներում, ան-
գնդախոր ձորերի ափերին կամողնած՝ խոժոռ և լուրջ
կերպարանք են տալիս գիւղին :

Եփրատը կծւած ու սեղմւած՝ լզում է խոր կիրճեր,
որոնք սև ու մթին, պտոյաներ են գործում գիւղի շուրջը
և նրան գրեթէ ամէն կողմից նմանեցնում ապառաժուտ
կղզու : Միակ մուտքն այնտեղ — կամուրջն է, ձգւած մի
ժայռից դէպի միւսը : Նա՛ իսկ ամրացրած է երկու կող-
մերից՝ դռներով, որոնք գիշերները փակուում են : Բացի
դրանից, շարժական էլ է . կարող է վերցւել և անցքն
այլեւս անհար գարձնել :

Փոքր չէր Բինկեանք : Մօտ 1000 բնակիչ ուներ, երեք
եկեղեցի, երկու ուսումնարան : Բնակիչներն էլ խիստ
կտրիճ, գրեթէ ամենքն էլ զինւած և բարեկեցիկ :

Փոքր ժամանակս էի եղել այդտեղ . գրեթէ 10—15
տարի առաջ . և այժմ, երբ կամուրջն անցայ, մի առ մի
ձիւցի ամէն բան :

Սակայն հօրաքրոջս տունը չէի կարողանում գտնել։
Ստիպւեցի, կամուրջն անցած, հարցնել մի անցորդի։
Վրաս նայեց այդ անցորդը հետաքրքրութեամբ, յեւ-
տոյ լուռ՝ մատը վեր պարզեց և աւելացրեց։

— Այդ շատիդով ուղիղ գնա և հարցրու։

Սրապին ազան, հօրաքրոջս ամուսինը, հարուստ
մարդ էր ճանաչւած դիւզում։ Տունը բարձրադիր, մի
սիրուն, երկարկանի շնչք էր, յիշում էի, բայց ճանա-
պարհը մուացել էր։

Եւ երբ անցորդի ցոյց տուած շատիդով, ձիուս սանձը
բռնած բաւական ելայ, յանկարծ շուրջս նայելով՝ ամէն
ինչ մտաքերեցի։ Ահա՛ այնուեղ, այդ ճանձաղ ձորագլխի
ժայռերին կրթնած սիրուն տունն էր։

Սրեգակը նոր էր ծագել գիմացի լեռների ետեկց
և նրա առաջին ճառագայթների տակ, այդպէս բարձրից
նայելով ոչինչ չկար տեելի շքեղ ու վայրենի, քան
թինկեանի շրջակայքը, հեռու—հորիզոնին վրայ փուած
խոր գաշտը, Եփրատի՝ տեղ-տեղ արեին ելած փողփառուն
ջուրն ու զով, թարմ, այն նօսր և սքանչելի զեվիւոը,
որ փշում էր բարձրաքերձ լեռների կատարներից։

Մի բոսէ կանգ առի մի ժայռի տակ։ հանդիսա էի
այժմ, գտել էի տունը, անփորձ թինկեան էի հասել և
գիտէի որ այդ անառիկ տեղից, կտրիճ բնակիչների մի-
ջից, ո՞չ մի զարթիէ չէր յանդգնիլ գալ ինձ հանելու։

Ու երբ կուշտ նայել էի, ծճել կազդուրիչ օդը
լիաքերան, և գւարիթ, շարունեկեցի ելնել, ետեկցու քարչ
տալով ձիս, որ բաւական յոզնել էր։

Երբ հօրաքրոջս տան տափարակին հասայ, դուան
առաջ հանդիպածս առաջին անձը եզաւ մի գեղեցիկ,
երկարահասակ աղջիկ, որ իր խոշոր, բոցափայլ աչքերը
վրաս սեւոած, ձեռքը մի զամբիւղ բանջարեղէն, կանգ-
նել զննում էր ինձ։

Անշոշտ Մարիամն էր, հօրաքրոջս այն աղջիկը,

որի 8—9 տարեկան էի թողել և հեռացել։ Բայց այժմ
ո՞րքան գեղեցկացել էր։ Ուղղակի հրաշալիք էր։

Լեռների փոած սոտուերի մէջ, ապառաժի կողքին
կանգ առած այդ վայելուչ հասակով ու վայրենի, լուրջ
գեղեցկութեամբ հմայիչ աղջիկը այնպիսի խոր տպաւո-
րութիւն թողեց վրաս, որ պահ մը կանգ առի և հիա-
նում էի նրա մազերի, արտայայտէն, թափանցող աչքերի
և ճապուկ ու երկար հասակի վրայ։

Զէի կարող երբեք մտածել, որ Մարիամն այդպէս
եղակի գեղեցկունի գարձած լինէր։ Ասենք, Յինկեանցի
աղջիկները մեծ մասամբ գեղեցիկ են լինում, սակայն
սա, գիմացս կանգնածը՝ նման էր ապառաժներու դի-
ցուհու։

Զիս քաշեցի, զարմացած աղջկան ժպտելով, կազեցի
սիւնին, յետոյ մօտ գնացի, արտգութեամբ զբկեցի դե-
ղեցկուհուն և համբուրելով՝ սատցի։

— Ահա՛ թէ ինչ, Մարիամ, այդ որքան գեղեցկու-
ցել ես։

Աղջիկը յանկարծակիի զալով, մի վարկեան շւարսծ
մնայ, կարմրեց, գունտուուց, յետոյ յանկարծ, ուժու-
նութեամբ դուրս թռաւ գրկիցս և բունցքի մի զրոել
հարւածով այնպէս ետ մզեց, որ քիչ մնաց փուէի գետին։

— Ո՞վ ես դու, միր մարդ, գոչեց նա—որ համար-
ձակւում ես մի օտար աղջկայ համբուրել։

Ու բունցքները սեղմած, բոցափայլ աչքերով մի
սպառնական քայլ առաւ դէպի ինձ։

Վախեցած, ամաչած, ժպտեցի և ասացի։ Ինչ-
պէս, ուրիմի չժամաշեցի՞ր քեռորդուդ, Վահանին . . .
Ասենք մողաւորը ես եմ, 10 տարի է չենք տեսել միմ-
եանց։ մտացած կը լինես ի հարկէ։

Հազիւ ասել էի անունս, որ աղջիկը ետ քաշւեց,
բունցքը բաց արաւ, կարմրեց, ծիծաղեց և սատց։

— Ես Մարիամը չեմ . . . Մարիամը ներսն է . . . Դու
սպասիր, ես վազեմ աչքալուսանք տամ . . .

Ու թողնելով ինձ ապշած, վախեցած—ներս վազեց: Արպիսի՛ յիմարութիւն էի գործել: Համբուրել էի մի օտար աղջիկ: Լաւ մուտք էր: Դիտնալով Բինկեանցոց ընտանիկան բարքերն ու դիւրաբորբոքութիւնը, սասափ զայրացայ գործածս անխոհեմութեան վրայ: Առաջին քայլն իսկ թշնամի էի շահելու այն գիւղում, ուր եկել էի ո՞չ միայն պաշտպանութիւն, առժամանակեայ թագստոց ինդիրելու, այլ և ուր մտածում էի սկսել պրօպագանդ:

Նւարած մնացել էի դուան առաջ և չի համարձակւում ներս մտնել, իբր անից ուրախ աղաղակներ բարձրացան նախ, յետոյ գուրս վազեց մի այլ աղջիկ, որ այս անդամ մնչուշտ Մարիամն էր—և գրկեց ինձ: Յետոյ երեաց հօրաքրոջ պարթե հասակը: Մօտ եկաւ, գիրկն առաւ ու այնպէս սեղմնց կրծքին, որ քիչ մնաց շունչս կտրւէր:

—Վերջապէս... գոչեց նա ուրախ—եկար մեղ մօտ, անշնորհք աղայ, ո՞ւր էիր այսքան ժամանակ... Սերով բէն էլ տանը չէ... Մարիամ, կանչիր հօրդ... Մարիամն ճանաչեցի՞ր...

—Ես... կմկմացի ես—իսկ սա՞ ով է: Ես նրան, նրա՞ն Մարիամը համարեցի:

Յոյց տփի համդիպածս աղջկան, որ այժմ ժպտուն՝ կանդնել էր սիւնի մօտ և մեղ էր նայում:

—Համբարենց նշանի աղջիկն է... Զարուհին:

—Դիտե՞ս, մօրքուր, խօսեց Զարուհին միշտ ծիծաղկոտ—ինձ Մարիամը կարծեց, զրկել-համբուրում էր...

—Վա՞յ, վա՞յ... քրքջաց հօրաքրոյրս — համբուրեց քեզ վահանը... Գուցէ Աստծու մատը կայ այդտեղ... Տեսնում ես, վահան, ինչ սիրուն ու կարիճ աղջիկ է Զարուհին:

Կարիճ այս. բոռնցքի հարւածի ցաւը դեռ զգում էի կրծքիս վրայ: Բայց հօրաքրոյրս եթէ չասէր իսկ, աչքս դատել չէի կարողանում Զարուհուց: Մի տեսա՛կ

ապուշ կարած՝ մոռացել էի անդամ յայտնելու դրութիւնս, մոռացել էի խօսելլ:

Մինչ այդ, Մարիամը ելեր էր տանիքը և այնտեղից դէպի ցած՝ դիւղն ու ձորերը կուցած, խուլ և սուր, թափանցող ձայնով հօրն էր կանչում:

Ժայռերի մէջ նրա կծու ձայնը արձագանք էր տալիս՝ միմիանց անդրադարձնելով: Միվ գիտէ հայրը որքան հեռու տեղ էր. սակայն Մարիամն ապահով էր, որ իր ձայնը լսելի պիտի լինէր նրան:

Բայց աղջիկը ո՞չ միայն հօրն էր ձայնում, այլ և ի լուր ամբողջ գիւղի՝ գոչում էր.

—Արմտանուց՝ Վահանն է եկել, Վահանը...

Զարմանալի չէր ուրեմն, որ այդ երեկոյ իսկ շջապատւեցի գիւղի երիտասարդներով, որոնք կարծելով թէ «գործի» համար եկած պիտի լինէի —վազել էին տեսնըւելու հետո:

Եւ ինչպիսի առոյդ, կտրիճ ու ջլապինդ երիտասարդներ էին, որքան ինքնավտան, համարձակախօս ու անվախ: Երբ պատմեցի որ կը մնամ գիւղում գուցէ մի առ ժամանակ և որ երզնկայի դատախազը զսիթիէներով մեր գիւղն էր եկել —նրանցից մէկը, ըստ երեսութիւն աղջեցիկը, ասաց.

—Թահո՛ւ... գան Բինկեանից մարդ տանեն... թող փորձե՞ն մէկ...

Բայց, Զարուհուն տեսնելուց յետոյ, «գործ»ով ըգրադւելու, կազմակերպութեան մասին մտածելու հարցը, ինքնըստինքեան կարծես, մոռացութեան էր մատնուում իմ մէջ: Այլևս նոյն իսկ ծանծրալի էր թւում, անհամբերութեամբ էի լսում երիտասարդների խօսակցութիւնը. ուզում էի որ չուտ հետանան, որ թողնեն ինձ տանը նստել և վայելել Զարուհու խօսակցութիւնն ու ներկայութիւնը:

Տան կատուի էի նմանում, քանի Զարուհին հօրա-

քրոջս տանն էր—և նա գրեթէ ամբողջ օրն այնտեղ էր —տնից դուրս չէի գնում: Օգնում էի հօրաքրոջս, Մարիամի և Զալուհու հետ ձորերն էինք իջնում, բանջար ժողովում և երեխն էլ ժայռերն ի վեր մագլցելով՝ նըստում էինք մի խոշոր ապառաժի հովանու տակ, ինձ համար չափազանց ախորժալի ժամեր անցկացնելու:

Սիրահարւած էի—պարզ էր: Հօրաքրոյս այդ նկատել էր, նկատել էր նաև Մարիամը: Եւ երեկ երկուսն էլ վճռելով իրանց մէջ ամիսն բան, ո՛չ միայն արգելք չէին լինում Զարուհու գալուն, այլ երբ գալիս էր—չէին թողնում գնալ ու միշտ ճգնում էին մեզ միմանց մօտեցնել, մեզ մտերմացնել.

Ասենք հեռու էլ չէր Զարուհու տունը, միայն մի նեղ շաւիլ դէպի ժայռի ետեղ և այնտեղ երեւում էր միայարկ, առաջը պատշգամնուոր կոկիկ տուն: Դա էր: Առջեխց մի արահետ՝ տանում էր դէպի Եփրատի ափը, այլ և միանում հօրաքրոջս տնից իջնող արահետին...

Սյովէս, թէ քանի՛ օր էր անցել Բինկան գալուց ի վեր—չեմ յիշում, որ մի առաւօտ, երբ լւացւել էի ուզում, չարածձի Մարիամը ցոյց տուաւ ինձ դատարկ կուժն ու ասաց.

—Զուր չկայ, վահա՞ն, իջիր գետը. թէ՛ կը լւացւես և թէ՛ մի կուժ ջուր կը բերես. ես խմոր հունցելով եմ զբաղւած:

Յետոյ ուսիս ձգեց երեսորբիչ, ծիծաղեց և ներս մտաւ:

Կուժն տոի ու արահետով իջայ: Դեղեցիկ առաւօտ էր. ամառնավերջի սիրուն օրերից մէկը, երբ դաշտի վրայ ամէն ինչ դեղնած, լեռների և ծործորների մէջ գարունն էր բուրում՝ բազմաթիւ գոյնդոյն ծաղիկներով ու դալար կանաչութեամբ:

Կամաց-կամաց, ամէն ըու կէ կանդ առնելով, արդէն գետի խոխոջիւնն ականջիս էր համսում, երբ հանդի-

պելով մի տափակ ժայռի, կուժս կոթնեցրի նրան ու նստեցի:

Այնտեղ հեռում, կամուրջից ցած՝ երեւում էին ձուրեր ու բլուրներ, աւելի ներքեւ՝ դաշտը պատած մանիշակագոյն մշուշով. կամուրջի վրայով անցնում էին ձիւորներ, ձորերի խորքում երեւում էր նախիրը, իսկ գետը փրփրալից՝ ոստուտում էր ժայռերի գլխով ու ջրափոշիով ծածկում շրջակայքը:

Զմայլմամբ, երազուն և արբշիռ՝ զդում էի որ բնութեան ձայների մէջ հրճում էր հոգիս և որ դանւում էի այնափի տեղ, ուր ո՛չ բոնութիւն, ո՛չ տանջանք և ո՛չ էլ վիշտ կարող էր մռայլել մթնոլորտը: Ազատ, բնութեան ազատ անկիւնը, ոտքերիս առջեկցից դէպի հորիզոն տարածւող հեռանկարը մոռացնել տվին ինձ ամէն ինչ, նոյն իսկ այդ լեռների դիցուհին—Զարուհին:

Ցանկարծ ետելից լսեցի մանր խմձերի գլորւելու ձայն: Մթափւած դարձայ և ապշած մնացի: Զարուհին էր. գալիս էր կուժն ուսին և դեռ չէր նկատում, որ այդ ես էի ժայռի վրայ նստողը:

Մի քանի քայլ մնացած՝ նայեց ինձ, կանգ առաւ ու կարմիրեց:

—Բարի լոյս . . . թոթովեցի ես—բարի լոյս, Զարուհի. դո՞ւ էլ ջրի եկար:

—Հա՛. Մարիամն ուղարկեց. խմոր է հունցում, ջուր չկայ:

—Ա՛խ, այո՞ . . . ինձ էր կուժը տեղ, որ բերեմ, և էլ այստեղ նստել —մնացել եմ:

Ու սաքի ելայ: Բայց Զարուհին յոզնածի նման կուժը ուսից ցած դրեց և նստեց ելածս ժայռի վրայ:

—Բիշ նստեմ, ասաց—դո՞ւ գնա ջուր լցրու, յետոյ ես կ'երթամ:

—Միասին գնանք:

—Չէ՞ . . . զլուխը թոթւեց Զարուհին—միասին չէ:

— Ինչո՞ւ . ասի ես աւելի համարձակութիւն ստացած . և կուժո ցած դրած , նստեցի նրա կողքին , գետնի վրայ :

Աղջիկը ցնցւեց և ուզեց ոտքի ելնել :

— Եստի՞ , Զարուհի , խօսեցի ես—նախ որ , ինձնից վախենալու ոչինչ չունիս . դու ինձնից ուժով ես և երկրորդ , որ ոչ ոք մեզ չի տեսնում այստեղ : Միթէ իրաւես քեզ համար այնքան անախորժ եմ , որ ինձ հետ մենակ լինելով վաս է թւում քեզ :

Զարուհին ըստ երեւութիւն արդէն կարողացել էր զպել յուզմունքը և այժմ համարձակ ինձ էր նայում ուժպառմ էր :

— Ինչո՞ւ , ասաց նա —մտածում եմ , որ կը տեսնէն և այնուհետև էլ բամբասանք չի մնայ որ չանեն :

— Բամբասանքից ես վախենում , ասացի ես :

— Ես՝ ո՛չ . մայրս . . . բայց դէ՛հ , ոչինչ . կը նասեմ քիչ . . . Միենոյն է , ես արդէն . . . այո՛ , քեզ հետ խօսել էի ուզում . . . առանձին խօսել . . . Մարիամը չի՛ հասկանալ ինձ . . .

— Խօսել առանձին . . . գունատւեցի ես յուզմունքից և զարգմանքից—առա՛ , լսում եմ :

Զարուհին էլի պահ մի լոեց , մտախոհ՝ նայեց հորիդոնին ու մեղմ ձայնով . առանց երեսիս նայելու՝ ասաց .

— Ասա՛ ինձ , Վահա՞ն , ձի՞շտ է , դու «Ընկերութեան» մարդ ես . . .

Բոլորովի՛ն այդ չէր սպասածս : Ծփոթւեցի , բաւական երկար չպատասխանեցի :

— Ինձնից մի՛ ծածկիլ , շարունակեց նա գրեթէ աղաւչաւոր—ես դեռ մինչեւ խոկ լաւ չեմ հասկանում , թէ ինչ է այդ «Ընկերութիւնը» . . . Գիտեմ միայն , որ նա ուզում է մեզ աղատել քիւրդերից , միւրդիրներից , դափիթիւներից . . . Գիտեմ , որ ուզում է ամբողջ մեր երկրից գուրաքել բանականերին . . . Այսքանը գիւղիւրական վագանի մարդ էր :

թէ ինչպէս կ'անի այդ ամէնը . . . Ուրեմն նա աւելի զօրեղ է , քան բանակալութիւնը , զափթիէն , քիւրդը . . .

Փորձեցի Զարուհուն խօսել , շատ բան ասել , բայց հէնց սկզբումն խոկ զգացի , որ կեղծ հողի վրայ էի ստիպւում կանգնել . . . Եւ չփոթւած , հազիւ մի քանի նախադասութիւն ասել էի , որ լռեցի :

— Գիտե՞ս ինչ , Զարուհի . . . գոչեցի յետոյ վճռականութեամբ . . . ես քեզնից ճշմարտութիւնը ծածկել չեմ ուզում . . . Ընկերութիւն ասածդ գոյութիւն չունի և չի ունենալ , եթէ ես , դու , ժողովուրդն ամբողջ չմտնի գործի մէջ . . . Ընկերութիւնը—ժողովուրդն է , ուաշտօնեաներից , քիւրդից , հարստահարութիւններից և սնիւրաւութիւնից աղատւել կարող է ժողովուրդը միմիայն ի՞ր ձեռքով , ի՞ր զէնքով և ի՞ր կամքով . . . Ընկերութիւնը մենք—դու , նա , միւսը , Բինկեանցիք , Արմեթիւնը մենք—դու , նա , միւսը , Բինկեանցիք , Արմեթիւնը միայն միայն . . . Ժկամենայ ոյժով ես մի խօսքով . . . ժողովուրդը եթէ չկամենայ խուլ բանաւորից իր աղատութիւնը , եթէ չկամենայ ձեռք-ձեռքի տալ և իր արեան զնով փշրել ստրկութեան օղը , այն ժամանակ օտարը ո՛չ կարող է Ընկերութիւն կազմել և ոչ էլ գալ ձեզ օգնելու . . .

— Հասկանում եմ . . . ի հարկէ . խօսեց Զարուհին լուրջ և միշտ մտախոհ—եթէ իմ բանջարսնոցի քարերը ես զէն չգետմ , դրացիս չի գալ դէն ձգելու :

— Այդպէս է . . . անա հասկանում ես . . . Ընկերութիւնը կազմելու է այն երիտասարդներից , տեղացի կտրիճ մարդկանցից , որոնք վճռել են , մաները աչք միայն թէ մեր երկրի բանջարսնոցը մաքրեն քարեւակ , ըից . . . բայց այդպիսի Ընկերութիւն գեռ չի կազմած , այլ պիտի կազմել . . . Ես Ընկերութեան մարդ չեմ , բայց ես նրանցից եմ , որոնք կազմել են ուզում այդպիսի Ընկերութիւն :

— Կին , աղջիկ էլ կարող է մտնել դրա մէջ :

— Ամէն ոք, ամէն մարդ մի բանով կարող է օգնել...
Մէկը քարերը դուրս կը նետի, միւսը փուշերը կը կորզի
գետնից, երբորդը՝ չորսացած արմատներ... .

Սկսում էի ողեղուել այնքան, որքան երբեք չէի
եղել ո՛չ մի շրջանում: Սիրած աղջկայ հետաքրքրութիւնն
ու ներկայութիւնը եռանդ էին տուիս ինձ:

Բայց Զարուհին ոչինչ չասաց երկար: Աչքերն այս
անդում ձորակին, լիովին խորասուզել էր մտքերի մէջ:
Ես էլ լուցի և հիացմունքով դիտում էի նրան:

— Դիտե՞ս ինչ, Վահա՞ն, յանկարծ դարձաւնա դէպի
ինձ—դո՛ւ պիտի կազմե՞ս այդ ընկերութիւնը... Կազ-
մի՛ր... հաւաքիր մեր կարիճներին... ամէնքը զէնք
ունին. խօսիր նրանց, կարգի՛ դի՛ր... Կ'անի՞ս... Ալո...
Դու, ես լաւ եմ տեսնում, զբաղւած չես դրանով...
տեւի շատ տանն ես նստած, ինձնով ես զբաղւած...
Ես այդ լա՛ւ եմ տեսնում... Ի՞նձ համար է որ տանն
ես մնում և երբ ես ձեր տանն եմ, այնպէս ձանձրացող
ու անհամբեր դէմքով ես լսում քեզ մօտ եկած երկառա-
սարդներին, որ չես նկատում թէ ինչպէս նրանք ողե-
ւորւած գալիս են քեզ մօտ և յուսահատ ու ընկճւած
գնում... Ոչ, դա լաւ չէ: դու կին չես որ տանը նստես,
ես հէնց այսօրւանից վճռել եմ որ էլ ձեր տուն չդամ...

— Զարուհի գոչեցի, վրդովւած :

— Եյո՛... ինչո՞ւ այդպէս ես... Պօլսից եկած,
ամէնքը քեզ վրայ են յոյս դրել. քեզնից սպասում են,
որ առելի վառես նրանց. իսկ դո՛ւ, ինձնով զբաղւած,
հանգցնում ես նրանց սրտի կրակը... Այդպէս չէ, որ
քարերը դուրս են նետում բանջարանոցից... Ես էլ չեմ
դալ, որովհետեւ չե՛մ ուզում որ դու այդպէս լինես...

— Զարուհի... ասացի ընկճւած և ամօթով լցւած—
դու իրաւոնք ունիս, բայց...

— Բայց ի՞նչ... կանչեց նա—այդպէս կը լինի աղա-
մարդութիւնը... ինձ համա՞ր ես նստում, գիտեմ...

բայց, եթէ ուզում ես խմանալ, ահա առեմ քեզ... Ես
չեմ կարող սիրել քեզ պէս աղամարդի... չե՛մ ուզում
սիրել...

Եւ տիսուր, ժպտուն, բայց ախուր՝ նայեց ինձ:
Յետոյ, երեխ կարդալով աչքերիս մէջ դառն յուսահա-
տութիւն, ամօթ և զիտեմումն, մէկէն ձեռքը զիսիս
դրաւ և դողդովուն՝ ասաց.

— Հանգիստ պա՛իր քեզ, որովհետեւ... Կիսաս
թողնելով խօսքը, յանկարծ ցատկեց տեղիցը, կարմրած՝
կորզեց կումն ու տեւլացըեց.

— Որովհետեւ... եթէ քոնը չմնեմ, էլ ո՛չ ոքինը
չեմ լինելու...

— Զարուհի... կանչեցի ուրախութիւնից շմած և
ոստնեցի դէպի նա:

Կանգ առաւ, թողեց որ մօտենամ, նայեց երեսիս,
յետոյ յանկարծ աջ ձեռքով վիզով գրկեց, մի ջերմ, ջերմ
ու երկար համբոյը թողեց շրթունքներիս վրայ և եղնիկի
արագութեամբ ոկսեց ցած՝ դէպի գետը սահել:

Շշմած կորզեցի կուժը, ուզեցի ետեւիցը գնալ,
բայց նա արդ տեսաւ, տասը քայլ ցածում կանգ առաւ,
դարձաւ, ձեռքը բարձրացըեց ու կանչեց:

— Մի՛ դալ. առաջ ես թող ջուրը լցնեմ գնամ՝
յետոյ...

Եւ հինգ ըռպէից յետոյ, երբ կուժը լի գալիս անց-
նում էր կողքովս, իր այն հրեշտակային ժպիտով նայեց
դէմքիս ու առանց կանգ առնելով՝ ասաց.

— Գնա՛ այժմ... բայց տե՛ս, կազմի՛ր ընկերու-
թիւնը, խօսիր կտրիճների հետ, գնա՛ միշտ նրանց մօտ...

— Իսկ քե՞զ, քե՞զ...

— Երբ առւն վերադառնաս, ինձ միշտ կը գտնես
անտեղ, քեզ սպասելիս և միշտ քեզ համար մատածելով...

Ու անցաւ: Վերեւումը նորից դառնալով նայեց ինձ,
նորից ժպտեց և այսուհետեւ անհետացաւ:

Երջանիկ, անհունապէս երջանիկ՝ իջայ դէպի գետը :
Այդ օրը միայն իմացայ, որ արդէն մի ամիսը լրա-
նում էր իմ Բինկեան գալուց ի վեր :

Մի ամբողջ ամիս՝ կատարեալ մոռացութեան : Մոռա-
ցել էի և՝ գործը և՝ Մարտիկին և՝ Բժշկին ու Խաչատուր
պատւելուն այցելու յանձնառութիւնն . . . Առ հասա-
րակ մի ամիս ամբողջ մոռացել էի ամէն ինչ ու լիովին
կլանւել Զարուհիով :

Որքան, որքան ամօթ զգացի, երբ անդրադառ-
նալով այդ բոլորի վրայ, սահ մի կշռադատեցի վար-
մունքս և գտայ որ ես եղել էի եթէ ո՛չ դաւաճան գործի
համար, այլ առնուազն անպէտ, նոյն իսկ մնասակար :

Մի ամբողջ ամիս . . . Ինչե՛ր էին արդեօք տեղի
ունեցել այդ մի ամսւայ ընթացքում Ակն, Երդկա, նոյն
իսկ մեր գիւղերում . . . Իսկ այնուեղ, աւելի ցած, դէպի
Արևմուտք—արդեօք ի՞նչ դրութեան մէջ էր երկիրը,
ուր էր Մարտիկը :

Օ՛հ, ամօթ ամօթ . . .

Այդ օրն ամբողջ, զգալով հանդերձ որ սիրւած եմ,
սրտումս, երջանկութեանս հետ կից՝ կար մի տեսակ
մաշով խղճահարութիւն :

Երեկոյեան փորձեցի ցած իջնել դէպի գիւղ, հան-
դիպել ինձ մօտ սկզբում յաճախող և այժմ այլ ես հեռու
կանգնած երիտասարդների, սակայն զարմացայ իմանաւ-
լով, որ նրանցից շատերը գիւղում չէին :

Հարցրի . ասացին որ զանազան գիւղեր էին գնացել.
մնձ մասը՝ Ակն, մի քանի հոգի էլ՝ Արմտան :

Գլուխոր՝ տուն դարձայ : Զարուհին էլ չերևաց : Ոչ
հօրաքոյրս իր յանդիմանութիւններով ու հարցմունքներով
և ոչ էլ Մարիամն իր խօսակցութեամբ, չկարողացան
փարատել տիրութիւնս :

— Թո՛ղ, կի՞կ, խօսեց հօրաքոյրս ամուսինը—տղան
մէկ ամիս եղաւ որ բանտարկւածի նման է . ի՞նչպէս ես
ուղում ուրախ լինի :

— Զարուհուն կանչեմ գայ . . . ոտքի ելաւ Մարիամը :
— Նստի՛ր, պէտք չէ, ասացի նրան խստութեամբ,
Զարմացած՝ զննեց ինձ : Զէր ըմբռնում հոգեկան
դրութիւնս :

Երբ լնիթրել էինք և մութը կոխում էր, դուան առաջ
նստած հօրաքոյրս ամուսինն մօտեցայ և հարցրի .

— Սերովի աղա, ի՞նչ ես կարծում, դրսերը վասնդ
կա՞յ, եթէ վաղն առաւօտ զնամ գիւղից :

— Քնա՞ն . . . ճչաց հօրաքոյրս—ի՞նչ եղաւ քեզ,
տղայ . . . հայրդ լուր էր ուղարկել, որ քեզ դեռ բաց
չթողնիմ . . . ով գիտէ . դաշտը դեռ չներով լիքն է :

— Կնոջ պէս ես խօսում, կի՞կ, ասաց ամուսինը
խստութիւնամբ—տղամարդը չներից չպիտի վախենայ . . .
թո՛ղ տղային քիչ ման գայ, ձի նստի և գնայ գիւղերը . . .
Բայց տե՛ս, վահա՞ն, Արմտան չգնաս դեռ . ուր որ կ'եր-
թսու՝ աշխատիր գիշերները Բինկեան գալ :

— Այդ լու, կրկնեցի ևս—բայց դու ինձ ասա, խո-
գարկութիւնները գագարել են, թէ ոչ . . .

Սերովիրը մնաց քիչ մտախոն, յետոյ գլուխը թոթւեց
ու ասաց .

— Զգիտեմ . . . Այսքան գիտեմ միայն, որ ամբողջ
գաշտը լցւած է զափիթիչներով . վազում են գիւղից
գիւղ . . . Քօմիտացիներ են վնասում, Ֆեսաններ որո-
շում . . . Լուրերը խտան են . մարդ չի հասկանում . . .

Ու լուց և շնչած հաստ պապիրոսը վառելով թաղւեց
նրա ծխի մէջ :

— Մի՛ գնա, վահա՞ն, միջամտեց նորից հօրաքոյրս—
կը բոնին քեզ, սիրառ ասում է այդ . . . Մնա՛ զիւղում,
թէ ձանձրանում ես, Սերովի հետ իջիր ձորերը, նրա
հետ գնա արտերը . . .

— Կնոջ պէս ես խօսում, կի՞կ . . .

— Ի՞ն, դու էլ, բարկացաւ նրա վրայ կինը—ուղում
ես տղի գլուխ փորձանք բերել . . . ի՞նչ պատասխան
կը տաս հօրը, եթէ բոնին, սպանեն . . .

— Հըմ... արաւ Սերովքը—բանեն, սպանեն...
ինչո՞ւ ուրիշներին չեն բանում, չեն սպանում... թող
հրացանս ուսու ձգի ու դնայ... կը դան բանելու—թող
խփի. կը խփեն—թող պատասխանի... Կնկայ պէս եռ
խօսում, կնի՛կ...

— Իրաւունք ունիս, Սերովք աղա՛, ասացի վճռա-
կանօրէն—ես ի՞նչ պակաս եմ միւս Բինկեանցի երխա-
սարդներից... Անա՛, իմացայ այսօր, շատ-շատերը Ակն,
մեր գիւղը, լեռներն ու գիւղերն են դնացել:

— Գիտեմ, ասաց Սերովքը ծուխի միջից—գիտեմ...
դնացել են թժշկին տեսնելու...

— Բժշկին... ցնցւեցի ես — Բժշկին ասացիր:

— Հա՛... Այսաւել, այսաւել, ամէն տեղ... Հկազմւում
են քամիներ... կրակ, ծո՛ւխ... Մէկը վառում է, միւսը
փչում... Թիւրքի բանը վատ է, շա՛տ վատ..., Օվա-
ջուքի քրդերն էլ բան են հասկացել... Մեր գիւղի—այն
ցածի խոճուկ թուրքերը՝ ջերմի մէջ են ընկել... Աւա,
կրակ է երնելու ո՞ր...

Հօրաքրոջս ամուսնի հետ ինձ երբեք տոկիթ չէր
եղել երկար նստել-խօսելու, մանաւանդ որ չէի ախոր-
ժում նրա սակաւախօսութիւնից և գրեթէ մշշտ մռացէ
դէմքից:

Լուռ, լուրջ, իմաստ և ճշգրիտ մարդ էր, որ ամէն
առաւօտ իջնում էր գործին, գնում դաշտերը, իսկ երե-
կոները մթանը գալով՝ նստում էր տան դռան առաջ,
խորոշ ներկայացրած սովորական երկու բաժակ օղին,
ընթրում և գնում էր քնիլու:

Սյդպէս էր միշտ: Ինձ հազիւ մի քանի բան էր հարց-
րել սկզբի օրերում, իսկ մէկ-մէկ էլ հինդ-վեց խօսք
խօսում հետո, ապա, որպէս թէ գոյութիւն չունէի նրա
համար:

Սակայն, խստութեան հետ միասին, ինչպէս քանիցա
տեսայ փորձով, շատ սիրում էր ինձ: Յաճախ ո՛չ միայն

առողջանալուս համար խորհուրդներ էր տալիս— գնալ
գետումը լողանալ, լեռն ի վեր մագլցել ևայն—այլ և
առաջարկում էր դրամ՝ գրպանի ծախս: Եւ եթէ տեսնում
էր որ տխուր եմ, գոյնս լաւ չէր լինում մի օր, անձկա-
նօք հետաքրքրում էր, կնոջը հարցնում և խիստ կեր-
պով պատւիրում առաւօտները, որ անհանդիստ չանեն
«տղայ»ին:

Այդ բոլորով հանդերձ, ո՛չ միայն սակաւախօս էր,
այլ մինչև իսկ, ճիշտը կը լինէր ասել, խօսել չգիտէր:
Մի ամբողջ երկար նախադասութիւն երբեք չէիք լսի
բերնից: Միշտ կցկտուր. արտայայտիչ կարծ բառեր,
յաջող պատկերացումներ— և անմիջապէս հասկանալի էին
մինում ասանելոը:

Այդ երեկոյ արտասովքոր էին ինձ համար նրա ասած-
ները: Ծո՛ւխ, կրակ, քամի... Ուզում էր հասկացնել
որ դաշտի գիւղերում արդէն շարժում էր գոյացել, յեղա-
փոխութիւնը ծայրերից գալով՝ կենդրումնում էր, շար-
քերը սեղմելում, գուցէ և արդէն կազմակերպում էին,
խմբեր գոյութիւն ունեին...

Իսկ ե՞ս... ես ոչի՞նչ չգիտէի: Կրիայի նման մի
խեցու մէջ մտած, զլուխս անգամ դուրս չէի հսնում:

Բուռն կերպով հետաքրքրւած, փորձեցի աւելի
խօսեցնել, իմանալ ամէն բան: Արիւնս սկսեց եռ գալ,
անհամերերութիւնից դողում էի:

— Յետո՞յ, Սերովք աղա՛, հարցրի անձկութեամբ—
ինչից տեսար որ ծուխ, կրակ է գոյանում, կամ քրդերն
ու թուրքերը բան են հասկացել:

Հաղիւ նշմարելի քմծիծաղ շարժեց այտերը և նա մի
քուլա ծուխ հանելով բերնիցը ասաց.

— Եիծեռնակները, երբ անձրե պիտի զայ, գետի
երկան քսւելով են թռնում... Սև ամպեր—կարկուտ...
շունը հեռւից է փայտի հոտն առնում... Նայի՛ր, տես-
նո՞ւմ ես ձիւնապատ զադաթը... Ամպոտ—վաղը անձ-
րեւ... Խոտի գէզի մօտ գնա անձրեւին... Հո՞տ — ուրիմի
կրակ...

—Իսկ թուրքերն ու քիւրդերը հոտը առնո՞ւմ են,
—Առնում են... Մեր ջանէլները երեխաներ են...
դո՛ւ ասա՛, Թագո՛ւհի—դարձաւ նա կնոջը—ի՞նչպէս
կոտրեց Մարիամի գտած ձուերը...

Հօրաքոյրա սկսեց ծիծաղել, իսկ Մարիամը կարմրեց
ու նեղացած՝ կանչեց.

—Ֆո՛ւհ, հայրի՛կ, ասացի քեզ՝ որ վաղելիս ոտս
կպաւ քարին...

—Վաղելիս՝ միշտ ոտը քարին... խօսեց հայրը—
Մանաւանդ՝ երբ ոտքիդ տակ չես նայի... մոռացել ես
որ փէշիդ մէջ ձու կայ:

—Այդ ի՞նչ պատմութիւն է, ծիծաղելով հարցրի
հօրաքրոջս :

—Ոչինչ բան էր. ասաց նա—Սնցեալ օրը առաւօտ
շուտով էր: Մարիամը գնացել էր մարագ. մեր մի հաւը
միշտ գնում էր ուրիշ տեղ ձու ածում, իսկ մնաք վնաս-
ուում էինք— վնասուում ու տեղը չէինք գտնում... Մա-
րիամը յանկարծ գտաւ մարագի մի անկիւնում, փայտերի
տակը, հաւի ածած ձուերը, տասը հատ գոզնոցի մէջն
առած և ուրախացած ու կանչւուելով վաղում էր, երբ
յանկարծ դռան առաջ, երեսի վրայ գետին փռեց և
գտած ձւերի մինչև յետինը փշուեց... Որ տեսնէիր...
շորերը, երեսը...

—Այդպէս է. ասաց Սերովը—կը կեղառոտի... երես
ու ձեռք կը ջարդի... Մեր ջանէլներն էլ այդպէս են...
Հաւկիթներ են գտել... վաղում են, գոռում՝ որ հաւ-
կիթ ունեն, գոռում... զգուշութիւն չկայ... քարին
կը խփւեն, կ'ընկնեն... կ'ընկնեն... Հաւկիթ ունեցողը՝
զգո՛յշ. վաղելիս՝ ոտքի տակը նայիր...

—Ճշմարիտ է. ասացի լրջութեամբ—դու ճշմարիտ
ես, Սերովը աղա... ինչո՞ւ չես ասում դու ա՛յն ջանէլ-
ներին, որոնք հաւկիթ են տանում իրանց գոզնոցներում
և փոխանակ զգոյշ գնալու, փոխանակ լուռ մնալու,

վաղում են ու գոռում... դեռ եթէ, իրաւ, հաւկիթներն
էլ շատ լինին...

—Զեմ ասիլ... խօսեց Սերովը—փորձէիր խրատել
Մարիամին... կ'ասէր՝ «երախսայ եմ»... կը նեղանար...
էլի՛ խրատէիր՝ կը բարկանար... Թշնամի շահել չեմ ու-
զում... Թող ընկնեն, որ խրատեն...

—Վատ է այդ. գիտես, որ եթէ ընկնեն, շատ տուն
սդաւոր կը մնան, շատ աւեր ու արիւն կը լինի...

—Գիտեմ... զգում եմ... կրա՛կ, աւեր, լաց...
Երախսան մինչեւ տաս անգամ չընկնի, չի սովորիլ ման
գալը... ճար չկայ... խօսքն ի զուր է... Սրիւնը եռ է
գալիս, խոնեմութիւն չի լսւում... Սւեր, լաց...

Յետոյ նորից լոեց և այս անգամ երկար, անշարժ ու
մտախոն, ինքն իր մէջ ամփոփւած՝ այլեւ ո՛չ մի բառ
չարտասանեց:

Նոյն գիշեր, անկողնումս պառկած, երկար քնել չը
կարողացայ: Միտքս գործում էր տենդայի՛ն արագու-
թեամբ: Միմնանց ետելից ծրագիրներ էին կազմեում գրւ-
խումս: Երբեմն մտածում էի վնալ փոթորիկի դիմաց,
խօսել մեր ջանէլներին, խոնեմութիւնն դասեր տալ, մի-
անալ կազմակերպարներին, սամնարիւնութիւնն, զգու-
շաւորութեան խօսքեր անել նրանց...

Գիտէի, զրեթէ հաստատ գիտէի, որ ամէնքը, ծայ-
րակեզ ոգեսորութեան մէջ՝ մոռացած պիտի լինէին ամեռ-
նահասարակ զգուշութիւնը: Անշուշտ այժմ այդ բոլոր,
ստրկութեան օղերը փշոր երիտասարդները, մտածելով
որ արդէն ոյժ են կազմում, որ բռնաւորի անկումը մի
հարւածի գործ էր—նոյն իսկ գաղտնի գործ տեսներու-
ընգունակութիւնը արհամարենի էին գտնում: Երեկի ծաղ-
րելիս էլ կը լինէին զգուշութեան և խոնեմութիւնն յոր-
դորները: հրացանները ուսներին, ոտքից մինչեւ զլուխ
զինւած, երեկի շրջելիս պիտի լինէին նրանք գիւղից-
գիւղ... Եւ յայսնի, համարձակ խօսքեր, յօխսորդ վար-
մունք թուրքերի, քիւրդերի հետ, ազատ խմբումներ...

Ո՞չ, հարկաւոր էր իսկոյն դնալ, իսկոյն մէջ մանել. խօսել, համոզել, ասել՝ որ բռնաւորը չափազանց զօրեղ է՝ նրա դէմ բաց կուր մղելու համար. ասել որ հարկաւոր է հնարագիտութիւն, խորամանկութիւն և ծայրայեղ ծածկամտութիւն և որ ժայռը պիտի տապալել ո՛չ թէ յոյներս դրած մի բուռը, ման աչք առած կարիճների վրայ, այլ փորելով նրա տակը դանդաղ, յարատե, խուլ և ծածուկ աշխատանքով . . . Փորել, փորել, հասյնել նրան խարիստութեան ծայրագոյն աստիճանին— և ապա թէ դէմ տալ մեր ուսերը, և բուռն, կտրուկ հարւածով գլորել—դէն նետել, յենարանը կարցրած ճնշողին . . .

Բայց այս ամէնը մի՞թէ չէին մտածում, չէին կարող մտածել այն մարդիկ, որոնք գործի զլուխն էին անցել և որոնք եկել էին մեր կողմերը, անշուշտ որոշ, կանխամտածւած, ձեւած ու չափած, երկրի ամէն հանդամանքն ի նկատի առած ծրագրներով :

Իսկ եթէ, յիրաւի, ծրագիր չկար դարձեալ. եթէ յիրաւի, Կ. Պօլսի ցոյցի կրկնողութիւնն էր պատրաստում մեր երկրում. ցոյց՝ առանց սիստեմի, առանց շրջապատող հանդամանքն ու թշնամու ոյժն աչքի առաջ ունենալու . . .

Միւս առաւօտ, երբ ձին թամբած դուրս էի բերել և հօրաքոյրս պայուսակի մէջ էր դնում պաշար ու ձեռքստալիս ամուսնու հրացանը— բակի մէջ երեաց Զարուհին:

—Գնո՞ւմ է Վահանը, ասաց նա և դունատ կանգ առում :

—Ո՞չ, ժպտեցի ես. գնում եմ դաշտի կողմնը. երեկոյեան կը վերադառնամ:

—Հա՛, արեց նա ու մօտ եկաւ. լաւ ես անում, պիրուն եղանակ է. բայց ցեխ կը լինի դաշտում:

Հօրաքոյրա, ժպտաը դէմքին զնում էր երկուսիս էլ, մօտեցաւ, գրկեց ինձ ու ասաց ակսոնջիս.

—Միւրա կպել է քեզ, ուրախ գնա՛ . . .

Զի հեծայ, բարեեցի ամէնքին և արշաւակի, ոլորապոյտ ճանապարհով դաշտ իջայ: Կամուրջի վրայից ետ նայելով, տեսայ որ Մարիամն ու Զարուհին ձորագլխին կանգնած՝ ինձ էին սպասում, մի անգամ էլ տեսնելու:

Յիրաւի ցեխ էր լեռներից յետոյ: Տաք եղանակ էր, ծիշտ գարնանային: Զիւնը հալել էր և մեծ ճանապարհը տղմաթթախ դարձրել: Ընտրեցի լեռան կողի արահետը և մտածեցի նախ Սրմանն իջնել:

Ինչ որ լինէր, վճռել էի մեր գիւղը գնալ, հօրս ու մօրս ացցելել: Մտածում էի այնքան հանդարտ ու հանգըստանալով ճանապարհորդել, որ մթնալ գիւղ մանեմ:

Սարահարթը պարուրող լեռնաշղթային մօտեցած՝ իջնում էի դէպի հիւսիս, երբ մի սիրուն անկիւն գրաւեց լին: Իջայ, քիչ բան կերայ, ձիս թողի մի ժայռի կողքին և մեկնեցի ապառաժի տակ՝ չոր մնացած խիճերի վրայ:

Այդպէս չգիտեմ որքան ժամանակ էր անցել, յանկարծ գլուխս բարձրացնելով դէմ առ դէմ եկայ մի երկարամօրուս անձի:

Երկարահասակ, քառամանամեայ, սուր աչքերով և խոշոր քթով անձ էր, որ հաստ ցուալը ձեռքին, փոքրիկ պայուսակը ուսին, կանգ էր առել ինձնից մի քանի քայլ հեռու և ճգնում էր իմանալ թէ ո՛վ եմ ես:

—Բարե, ելլա՛յր, ասաց նա, երբ իրեն նայեցի— հայ չես դու:

—Հայ եմ:

—Ո՞րտեղացի ես:

—Մեծ Սրմաննից:

—Իրա՞ւ . . . Ես այնտեղից եմ դալիս: Դու որո՞նցից ես:

Վիրաւորանք զգացի քննական այդ հարցմունքներից: Ոտքի ելայ, զվարեցի դէպի ձիս և ասացի երկարամօրուսին:

— իսկ դո՞ւ որտեղացի ես, բարեկամ։
 — կեցի՛ր, ինչո՞ւ ելար, մօտեցաւ մարդը—ես էլ
 ուզում եմ քիչ հանգստանալ . . . : Նստիր, քիչ խօսենք։
 Բանն այն է, որ երկարամօրուսը այդ վերջին խօս-
 քերը ասաց զուտ գրական հայերէնով։ Թէև, իրաւ է,
 չզարմացրեց ինձ այդ, այնուամենայնիւ դարձայ և զըն-
 նեցի նրան։
 Զգարմացրեց, որովհետեւ մեր գիւղացիներից շատերը
 կ. Պոլս եղել են, հացագործութեամբ զբաղւել, շփւել
 տեղացիների հետ, նոյն իսկ երեմն ուսում են առել մեր
 գիւղի բաւական լաւ դպրոցներում։
 Երեխ երկարամօրուսը իմ կէս-եւրոպական շորերից
 եղբակացրեց, որ ես էլ Պոլս եղած պիտի լինեմ. զրա
 համար՝ իսկոյն փոխեց տեղական բարբառը գրականի։
 Նստելուց յետոյ, հանեց ծխախոտի սև արկդիկը,
 փաթաթեց մի պապիրոս ։ Վառեց ու ասաց։
 — Դուք չէ ք ծխում։
 — Ո՛չ։
 — Հա . . . հարցնում էիք թէ ե՞ս որտեղացի եմ . . .
 Բինկեանցի եմ և մեծ Արմատանից է գալս . . . Նշան պատ-
 ւելուն ճանաչո՞ւմ էք։
 — Ճանաչում եմ. Փոքր-Արմատանի ուսուցիչը։
 — Մօտ ծանօթ էք։
 — Ո՛չ . . . ես նո՞ր եմ Պոլսից եկել. 10 տարի էր,
 այնտեղ էի։
 — Իրա՞ւ . . . ծօ՛, կեցի՛ր . . . — արեց նա յանկարծ
 ծիսելք թողնելով և առանձին ուշադրութեամբ կռանալով
 դէպի ինձ—ծօ դուն Վահանը չե՞ս, Մարկոսի տղան . . .
 Վա՛յ, ինչո՞ւ իսկոյն չասացիր . . . է՛, բարի տեսանք,
 Վահան էֆէնդի . . .
 Ու ձեռքը պարզեց ինձ։
 — Ես Խաչատուր պատւելին եմ—աւելացրեց նա—
 Կասմա գիւղի վարժապետը։

Իսկոյն սեղմնցի ձեռքը և շատ ուրախացայ, որ
 դիպւածն ինքը կատարել էր իմ մտադրութիւնը, որով-
 հետեւ վճռել էի մեր գիւղից յետոյ անշուշտ Կասմա գնալ։
 — Շատ ուրախ եմ, ասացի—ինքս մտադիր էի վաղը
 կամ միւս օրը Կասմա գալ ձեզ հետ տեսնելու։
 — Իրա՞ւ . . . է՛, ինչպէս է որ այսքան ժամանակ
 չեկար. ես քեզի շատո՞նց սպասում էի . . . Ընկերդ ինչ
 արիր։
 — Գնաց։
 — Գնա՞ց . . . ժպտեց նա—է՛, լուր չունի՞ս նրանից։
 — Ո՛չ . . . Այն գնաց։
 — Գիտեմ, գիտեմ . . . Բժշկի մօտ . . . Տեսնեցինք
 Մարտիկ էֆէնդիի հետ. ասում էր որ այցելութիւնդ պի-
 տի ընդունեմ . . . Շատ սպասեցի . . . Ո՞ւր էիր այսքան
 ժամանակ։
 — Բինկեան . . .
 — Հա՛, իմացայ . . . ծիծաղեց նա—վախենում էիր,
 հա՞ . . . չէի սպասում . . . ինչ էր եղել. խուզարկութիւն
 . . . Ֆուռհ . . . Սովորել ենք մենք այդ բոլորին. այլես
 վախ չի ազդում մեղ . . .
 — Ձեզ հետ խօսելիք ունեմ երկար, պատւելի՛, ա-
 սացի լրջութեամբ—չեմ կարծում որ ուշացած լինեմ . . .
 — Իրա՞ւ կ'ըսես . . . ծաղրելու պէս ասաց պատւելին
 — չմս կարծում որ ուշացել ես . . . Բինկեան որ էիր, ի-
 մացա՞ր թէ գալուցդ ի վեր ինչե՛ր. են կատարել մեր
 կողմերում։
 Յետոյ յանկարծ թողեց ծիծաղը, խօսելու այն բա-
 ւական վիրաւորիչ ձեզ, ծիեց պապիրոսն ու լուրջ՝ ասաց։
 — Ինձ թւում է, Վահանն էֆէնդի, որ դուք բաւա-
 կան ուշացել էք . . . Անդարմանելի չէ այդ; Մինչ դուք
 Բինկեանի ամուր կողերի վրայ պահւում էիք, մարդիկ
 այս կողմերում գործում էին, առանց վախենալու բոնը-
 ւելուց . . . Երբ կամենում են դործել, չպիտի նախ՝ վա-
 ւելուց . . .

խենալ և երկրորդ՝ յանուն զգուշութեան և խոհեմութեան ձեռքերը ծալած նստել...

Ուրախութիւն զգացի, որ խօսակցութիւնը այդքան շուտով ուղածս ուղղութիւնը բռնեց:

—Սպասեցէք քիչ, շատապեցի միջահատել նրան—Բինկեան նստելս չեմ արդարացնում... Ծնողներիս լսեցի, մեղաւոր եմ. ահա դուքս եմ եկել՝ գործի մէջ մըտնելու համար: Սակայն մանելու ո՛չ թէ այն մարդկանց շարքը, որոնք ցուպերով և տաս հոգով գնում են բաց կոփւ մղելու թնդանօթների և հարիւրաւոր հրացանաւկեների դէմ. այլ ա՛յն մարդկանց, որոնք նախ քան գործի սկսելը՝ կազմում են ծրագիր, մտածւած, թշնամու ոյժը չափած, մեր հանդամանքն աչքի առաջ ունեցած խելօք ծրագիր. որոնք շատ լաւ են զգում, թէ թումբին չէ կարող քանդել մի առւակ, այլ բազմաթիւ առւակների միացման ոյժից առաջացող գետ, որ դանդաղ, բայց յարատե ջանքով՝ գումարում է ջրեր, փորում թումբը նրա հիմքից և ցանուցրիւ տափս նրան՝ անկանոնելի կերպով... Ինձ անշուշտ հասկանում էք...

Ինչո՞ւ այս ժողովուրդին, վաղաժամ կերպով, ողեռութեան անխոնեմ քայլերով՝ մղենք դէսի այնալիք գործողութիւններ, որոնց նորհիւ ո՛չ միայն յեղափոխութիւնը կարող է տաս տարով ետ գնալ, այլև ամբողջ երկրը արիւնով ներկել և աւերակներով ծածկել:

Խաչատուր պատուելին լուռ, պապիրոսից թանձր ծուխ արձակելով ու առանց երեսիս նայելու՝ լսում էր: Իսկ երբ ծխեն էլ վերջացրեց, ծխափողը զրազանը դըրաւ, ցուպովն սկսեց գետնի վրայ գծեր նկարել և անվրդով ու անշարժ՝ սպասել:

Ասել էի ասելիքս: Զգացի որ հասկացաւ ինձ, գուցէ աւելի շատ հասկացաւ, քան ինչ արտայայտել էի: Յոյս ունէի որ ասածներս վախկոտութեան, կաշի պահպանման և կամ գործի մէջ, մինչև այդ՝ չմտնելուս ար-

դարացումը չպիտի համարէր: Յոյս ունէի, որովհետեւ պատելու խելօք դէմքը ենթադրել էր աւել ինձ, որ դիմացս նստածը այն մոլեւանդներից, այն կրապաշտներից չէ, որոնք չեն հանդուրժում որևէ քննադպատութիւն և դիտողութիւն և որոնք կոյր սգեստութեան անպայման երկրպագուներ են:

Սակայն, երբ վերջացրի, լուռ մնաց մի բոպէ: Օգտըւելով դրանից, կամնցայ էլի խօսել, բայց մէկէն դէմքն ինձ դարձրեց ու ասաց.

—Հասկացայ ձեղ. աւելորդ է աւելին ասել... Գիտեմ որ վախը, մինչև այժմ անգործ մնալդ և կամ ո՛ր և է յեղափոխութեան հակառակ զգացմունք չէ մէջդ խօսովը... Այո՛, լաւ ասացիր, մենք—հասկացողներս պիտի ողեռութիւնից չկուրանալու չափ լրջմիտ լինինք... Սակայն թող որ քեզ պարզեմ նախ մի քանի կէտեր:

—Խնդրեմ... ուրա՛խ կը լինեմ—գոչեցի ես—եթէ ապացուցէք որ ես սիսալում եմ. որ, վերջապէս կա՛յ ծրագիր, որ այդ ծրագիրը կազմւած է թշնամու ոյժի չափը, մեր գիմադրութեան ոյժը աչքի առաջ ունենալով: Ուրախ կը լինեմ, եթէ իմացնէք ինձ, որ չնչին առւակով թումբը տափալելու անմտութեամբ չէ որ գործի ենք սկսել և որ խօնեմ ու զգուշաւոր կերպով է տարւում յեղափոխութիւնը՝ նրան վիժել չտալու համար:

Պատելին տիսուր ժախտով ցնցեց գլուխը և ասաց.

—Համաձայն կը լինեմ քեզ հետ, եթէ միայն մի հասրք ցոյց տաս զսպելու այն գերի առիւծին, որի ականջին վախսում են ազատութեան խօսքեր, վասում նրա սիրտը, եռ բերում արիւնը և համոզում, որ եթէ նա կամենայ, կարող է փշրել վանդակն ու ոչնչացնել գաղանապահին...

—Հնարք կայ, միջամտեցի ես—եթէ միայն ազատութեան գործի գլուխ անցնողները կազմակերպեն, մշակեն և լուրջ կերպով զեկավարեն չարժումները:

—Այս՝ ասաց պատւելին—այս՝, մշակեն, զեկավարեն շարժումները . . . Շարժումները ստեղծել չե կարելի, այլ եղածը վերածել ոյժերի և այդ ոյժերին տալ ուղղութիւն . . . Որքա՞ն հեշտ է որերանով ասել այդ ամէնը, գրել թղթի վրայ, քարողել . . . իսկ գործնական կեսնքում . . . Զափիթիէները կամ քիւրդերը գալիս են կողապելու մի գիւղ. ներշնչել ես գիւղացիներին, թէ չպիտի թոյլ տալ, պիտի դիմագրել, սափակել որ ապօրինի այդ աւազակութիւնները վերջանան . . . Ասել ես նըրանց—«Սակայն, զգոյշ եղէք, արիւն չթափենք. չգրգռքէք կառավարութիւնը, չգրգռէք քիւրդերին, որովհետեւ թէ' մէկը և թէ' միւսը կարող են մեծ ոյժերով գտալ, գիւղն աւերել, մարդկանց կտորել» . . . Միմւանց չեն հակասում մեր երկու քարոզները . . . Գալիս են քըրդերը, խփում են, սպանում, զինու ոյժով տանում. գիւղացիք նոյն իսկ ինքնապաշտպանութեան նւիրական զգացմունքով՝ զէնք են բանեցնում. սպանում են մի քանի քիւրդեր . . . և ահա կոիւն սկսում է. գոյութեան հարց է աւազադրուում. կամ պիտի թոյնել որ գիւղն տամբեն խմբովին եկող քիւրդերը և կամ պիտի կուի ելնել . . . Այս մէկ:

—Զպէտք էր վաղաժամ՝ այդքա՞ն զարթեցնել ժողովդին . . . ասացի ես, սակայն իսկոյն զգացի, որ յիմար բան էի ասել և կարմրեցի:

—Նաղաժամ զարթեցնել . . . բացականչեց պատւելին սպազած իմ խօսքերից—վաղաժամ . . . Այդ բառի նման անմիտ բառ ես չփրտեմ. ո՞րն է ժամը, ե՞րբ է այդ և կամ ի՞նչ է նշանակում վաղաժամ՝ ազատութեան պէս մի գաղափարի համար, տանջող և հարստանարւող ժողովդեան մէջ:

—Ես ուղեցի ասել, կամեցայ արդարանալ ես—որ պիտի նախ ժողովուրդը պատրաստել:

—Ե՛, մեր արածն ի՞նչ է. ի՞նչոչո պիտի պատրաս-

տել ժողովուրդը, եթէ ոչ քարոզելով՝ թէ դուք սարուկ էք, ձեզ ճնշում են, դուք իրաւունք ունիք կեանքի, գոյքի և անձի ապահովութեան. քարոզելով՝ որ պետութեան օրէնքի համեմատ իսկ դուք իրաւունք ունիք հաւածելու աւազակին, մերժելու անիրաւ տուրքերը, վոնդելու կեղեքողներին, բողոքելու հարստանարութիւնների դէմ . . . Եւ ահա, գիւղը թալանելու եկող քիւրդ աւազակներին հալածում են . . . վաղաժամ ես գտնում այդպիսի քայլերը . . . Ժամանակ՝ ես նշանակում մի մարդու հասկացնելու համար, որ նա իրաւունք ունի իրան խփողին խփելու, կողապատողին հալածելու . . .

Լուս մնացի. ինքո զգացի ասածիս անմտութիւնը:

—Եւ այդպէս ուրեմն, շարունակեց Պատւելին—կոիւը ինքնըստինքեան, ուղենանք-չուղենանք՝ ծագում է, և յեղափոխութիւնն ու ապատամբութիւնը բնական կերպով արծարծուում . . . Մնում է միայն այստեղ այն, որ ինքնապաշտպանութեան նւիրական զգացմունքից բղիսով ոյժերը մի գումարւեն, կարգ ու կանոնի տակ դրւեն և խելօք կերպով գործադրւեն:

—Ահա այդ է իմ ասածը, զոչեցի ես—ինքնապաշտպանութեան գործը անհրաժեշտորէն պիտի քաջալերել և կազմակերպել. իսկ հարստանարող և կեղեքող դրութեան զէմ պատրաստող կոիւը պիտի որոշ ծրագրով դեկավարել. ծրագիրը ի նկատի պիտի ունենայ երկու գլխաւոր բան.—բնաւորի ոյժի չափը և մեր բնելիք ընթացքը՝ համեմատ մեր ունեցած և ունենալիք ոյժի . . .

Պատւելին աւոնց պատախանելու, ծոցից ժամացոյցը հանեց, նայեց, յետոյ ոտքի ելաւ և ասաց.

—Կէսօրը մօտ է. թէև դու ծիով ես, բայց ես ոտքով . . . Բինկեանը հեռու չէ, դառնանք այնտեղ, ես էլ մի ձի կը վերցնեմ և այս երեկոյ Ակն կը վնաենք . . . Այս տե՛ղ ես, Բժիշկը, Մարտիկն ու նշան պատւելին՝ թէ' կը լսենք քեզ և թէ' մեր ասելիքը կ'ասենք . . . Համաձա՞յն ես:

— գհումնք :

— Հեծի՛ր ուրեմն :

— Ո՛չ, միասին ոտքով կ'երթանք :

Ու ձիուս սանձը բռնած, Խաչատուր պատւելու հետքայլեցինք նորից դէպի Բինկեան :

Մեր գիւղերի սարահարթից դէպի հարաւ, Գարաբուտաղ գետակի ափերում պարզւում է մի խիտ զառիվայր ձորակ, որն ամբողջապէս ծածկուած է այզիներով ու ծառասատաններով :

Մեր գիւղերի քաղցր ջուրը այդ ձորակից է բերւում. այլապէս մննք ստիպւած ենք լինում ձիւնի հալածը գործածել, որովհետեւ սարահարթի վրայ միմիայն աղի ջուր կայ, պէտքական՝ բացառապէս լւացքի համար :

Զորը, որ մի ժամ վերևից սկսում է ծանծաղ, տեղանեղ անազին լայնութիւն ստանալով ոլորապտոյտ՝ իր մէջն է առնում պղտոր և սև գետակը :

Սյդտեղ—այդ խորութեան մէջ պիտի տեսնել միմեանց վրայ գլորւած ժայռեր, լարծուն ափեր ու ծառերով և այզիներով լեցուն անշուկ ծործորներ :

Երկար բարդիներն ու ընկուզենիների տարածուն սատերը տեղ-տեղ այնպէս գրկում ու կամար են կազմում, որ արահետը ցերեկով խակ դժւար է գտնել, ի՞նչ մնաց գիշերով : Բացի զրանից, գարնան այդ պահուն, մայիսի մէջ, եփրատի այդ ճիւղը, լեռների ձիւների հալոցից այնպէ՛ս մեծանում է և ողողում ափերը, որ մարդ ստիպւած է ամէն զգուշութիւն գործ դնել՝ այս ու այն ջրակոյտի մէջ չընկնելու համար :

Չնայելով այդ ամէն զժւարութեան, արեւ մայր մանելուց մօտ երկու ժամ յետոյ, գիւղից մի քանի հոգի ելած, մտել էինք ձորը և քայլում դէպի Սահակի աւեր մնացած ջրաղացը :

1891 թւականի գարնանն էր այդ :

Չմեռն ամբողջ և միւս տարին, մինչև մայիս ամի-

սը, անց էի կացրել ես մեր գիւղերում, մտել էի գործի մէջ, տարւել նրանով, ամբողջ ուշքս ու միտքս նւիրել նրան և տեղական գլխաւոր գեկավարների շարքն անցել :

Գործը և Զարուհին իմ զբաղմունքներն էին եղել : Բինկեանից Արմատան և այստեղից—այստեղ՝ յաճախ կարելի էր տեսնել Վահանին, լիներ ձիւն, բուռք, քամի կամ ցիւս : Զիով, ոտքով, շաբաթ չէր լինիր, որ չդնայի մի ամբողջ օր անցկացնելու Բինկեան, Զարուհու կողքին :

Սրդէն խօսք կար . գրեթէ նշանաւած էի՞նք : Ծածկելու հոգը չէինք անում այլես մեր սէրը և Զարուհին ո՛չ միայն իր ներմ սիրով երջանկութիւն էր պատճառում ինձ, այլև իր ողերութեամբ՝ բանկեցնում էր յեղափոխութեան գործին լիովին նւիրւելու զգացումներս :

Քա՞ն աղջիկ : Որպիսի հետաքրքրութեամբ հետեւում էր մեր արածներին, մեր իւրաքանչիւր քայլին . որքա՞ն նեղանում էր, եթէ մանրամասն չէի ուզում պատմել նրան ամէն ինչ և որքա՞ն ողերում էր, երբ լսում էր, որ արդէն կազմել ենք խմբեր, որ Արմատանը միայն 12 խումբ ունի, Բինկեանը՝ 10, և որ ես՝ Մեծ Սրմանի, Փոքր Արմատանի, Բինկեանի բոլոր խմբերը կառավարողներից մէկն եմ նշանակւած :

Նշանակւած, այս : Գործը կազմել էինք մննք՝ հինգ հոգի միայն . կազմել այնպէ՛ս, որպէս յարմար էինք գտել . շնուր էինք մի «Հարժական» ծրագիր (թող «Հարժական» բառը ծիծաղելի չթւի) . իսկ բաւն ծրագիրը գեռ սպասում էինք Սվալից, Տրավիզօնից, Պոլսից . . . ես ի՞նչ զիտեմ, ամէն տեղից : Մեզ ասում էին՝ ինչ որ կինդրոն կայ, թէ այնտեղից ծրագիր պիտի գար մեզ . . .

Պիտի գա՞ր . . . Անցնում էին ամիսներ, մեր շարժական, առժամանակեայ պարզ ծրագրով էինք գեկավարւում—այն է խմբեր պատրաստել, զինել, ինքնապաշտպանութեան դէպում գործել, յարձակումներից միշտ պահպանակել . . . իսկ ծրագիր, հիմնական, կազմակերպական, յեղափոխական ընդհանուր ծրագիր՝ չկար ու չկար . . .

Զգիտէինք իսկ թէ ի՞նչպիսի կազմակերպութիւն կար մեզնից արևմտահիւսիս՝ էրզըում, ներքեւ՝ հարաւ — Մալաթիա, Խարբերդ և նոյն իսկ աւելի հեռուն՝ Սասուն, Վասպուրական . . . Կային այնտեղ շարժումներ, կային նոյն իսկ ամենաչնչն յեղափոխական ցնցումներ . . . Եւ եթէ կային, — «Եթէ» եմ ասում ի՞նչպէս էին կազմակերպած, ի՞նչ էին ուղում անել, ի՞նչպէս . . .

Այս բոլորը մութ, անորոշ էր մեզ համար: Կղզիացած այդ մասին, ինքնաբերաբար արել էինք այն, ինչ որ մտածել էինք . . .

Բայց անա յանկարծ, մայիսի սկզբներին, կայծակի արագութեամբ լուր տարածւեց մեր բոլոր գիւղերում, որ կ. Պօլսից եկել է մի «առաքեալ» և որ նա հրաւիրում է բոլոր յեղափոխականներին ի մի ժողովւել, որովհետեւ «կիսդրոնի» կողմից խօսելիքներ ունի:

Վերջապէս . . .

Ի՞նչպիսի շարժում ու ողերութիւն էր, որ յաջորդեց այդ լուրին: Եւ անա երիտասարդները երեք-չորս մօտակայ գիւղերից, ծալրացեղ ողերութեամբ լի, արհամարհելով ամէն խոհեմութիւն, զրեթէ հաւատացած որ գիշերային այս ժողովը պիտի վճռէր մի առ մի կոտորել բանականներին և աւաղակ քիւրդերին — եկել էին մինչեւ յետինը:

Մինչև յետինն եմ ասում. այո՛, Արմանների մէջ եղած երկու թշնամի կուտակցութիւնների երիտասարդները մոռացել էին իրանց ծնողերի վէճերը: «Ազատականները թողել էին փարախի յիմար ինդիրը և յեղափոխութեամբ նուիրւել. իսկ միասպիտականների պատահները մեր խմբերին անդամ էին եղել:

Եւ այսպէս, սրտատրով, յուսալից, տարիներով սպասած վճռական, գործելու բոպէն հասած համարելով, ծերունիներն անգամ գնում էին գիշերային դաւադրական այդ ժողովին:

Ամէնքը գրեթէ զինւած էին, ո՛վ ինչով կարողացել էր: Զանազան ձանապարհներով, տեղական քիւրդ և թիւրք բնակիչներին կասկած չտալու համար, դուրս էինք սպրդել գիւղերից և այժմ ձորակը մտած, զրեթէ խարխափելով ու շտապով քայլում էինք գէպի ջրաղացը:

Ես, Նշան պատելին, գիւղի միւդիր կարապեալը (որ նոյնպէս յեղափոխական էր) հայրս և հօրեղբայրս՝ միամին էինք: Մեր ետեկից գալիս էր Տէր Յակովը, նոյն իսկ գիւղական վարժապեալ՝ Քերովը պատւելին:

— Զծին' լ երբէք . . . պատւերում էր Նշան պատւելին — զգոյշ առ հասարակ աղմուկ հանելուց:

Մեր խմբի առջեկից հօրեղբայրս էր քայլում: Ձանապարհը նա՛ լաւ գիտէր և իր սրատես աչքերով՝ խաւարի մէջ անգամ զտնում էր սրահնետք:

Առոյգ, կտրի՛ճ ծերունի . . . Հրացանը ուսին, մերկ սուրը ձեռքին՝ դիմացն եկած ճիւղերը շօշափելու համար — ուշադրութիւնը լարած, ո՛չ միայն մոռացել էր կատակներ անելու սովորութիւնը, այլև բանի տեղ չէր զնում գիշերւայ յուրաը, որ եթէ ուրիշ ժամանակ լինէր, անցուշտ հայոցանքներ կամ կծու բացագանչութիւններ պիտի ստանար Շախսալի Աղաջանից:

Միայն, չգիտեմ ի՞նչու, ծերունին, որևէ մութ սուերի համեմելիս՝ կանգ էր առնում պահ մի, խուսոտ ձայնով հրամայում մեղ՝ նոյնպէս սպասելու, յետոյ ինչ որ բան էր անում մթութեան մէջ և դարձեալ քայլում:

Ակսեցի կասկածել, երբ տեսայ որ այդ վարմունքը յաճախ էր կրկնում: Սպրդելով անցայ նրա ետեր և շշուկով հարցերի.

— Ի՞նչ կայ, հօրեղբա՛յր, ինչո՞ւ ես շուտ շուտ կանգ արմում,

— Ա՛ս . . . ասացնա — ո՛չ ոքի մի ասիլ · ոիշերը խոնաւէ . . . մէկ-մէկ շփում եմ փորս՝ որ տաքանամ:

Ու մեղմ ծիծաղեց: Բայց որովհետեւ ականջիս էր

խօսում, իսկոյն ըմբռնեցի գործը։ Օդիի հոտը լաւ զգացի։ Ենթակա ծերունին։ Յօդացաւ ունէր և այդպիսի խոնաւ գիշերով, ցաւերը մեղմացնելու համար, օդու օգնութեանն էր դիմում։

Խմում էր ու քայլում։

Գիշերը խաւար էր։ Ծառերի բարձունքներից վեր՝ երեւմ էր աստեղազարդ երկնակամարը, իսկ կողքներին՝ պաղլում էին գետակի ջրերը, որոնք նեղ տեղը ընկած ժամանակ՝ խոսողում էին ու մումում։

Հօրեղբայրս, որ այժմ ինձ հետ էր քայլում, սկսեց մեղմ ձայնով խօսակցել։ Ամէն նոր այդու կամ ծառասատանի մօտով անցնելիս, անտանում էր նրանց տէրերին, սուր ածականներ տալիս, յետոյ կարճ խօսքերավ պատմում զանազան անեկդօտներ՝ նրանց կեանքից։

—Իսկ ջրաղացը դեռ շա՞տ հեռու է, հարցրի ես։

—Հեռու չէ, ահա այստեղ մի պտոյտ կայ. նա կ'անցնենք, յետոյ կը մտնենք Հաջի-Ապուրի այգին…

—Հաջի-Ապուր… Դա՞ ով է։

—Զիիտի՞ս… Հաջի Եղիսան. ապուր է, ապա ի՞նչ է…

—Ի՞նչ ես կարծում, հօրեղբայր, ընդհատեցի նրան—Բինկեանից Սկրովը աղան էլ կը դա՞։

—Եկած կը լինի, պնդեց ծերունին—քիչ խօսող մարդ է, բայց կտրիճ է. գործի համար ետ չի մնայ… Ողջ Բինկեանցիք կը լինին այստեղ…

Ու այնունեան այլես չէի լսում հօրեղբօրս. Միտքս Զարուհու կողմը գնաց։ Պատկերացնում էի ինձ այնտեղ—Բինկեանում։ Զարուհին այժմ անշուշտ նատած պիտի լինէր հօրաքրոջս տանը—նրա հայրն էլ եկած պիտի լինէր այստեղ—Մարիամի հետ խօսում կը լինէին մեր մասին։ Անշուշտ անհանդիսա պիտի լինէին՝ թէ գուցէց իմանան թուրքերը, մատնեն… Եւ ահա միւս օրն իսկ պիտի սկսէին ձերբակալութիւնները, ինձ տանէին բանտ, աքսոր…

Վախ սկսեց իջնել վրաս։ Յիրաւի, եթէ լրտես կօմարը, որ այնքան լաւ գիտէր հայերէն… ուրիշ լրտեսներ—Հաջի Գէորգը, Թօփալ-Վարդանը… գային միւսների հետ, յաջողւէին ներս սպրդել, լսել, տեսնել և միւս օրը մի առ մի տեղեկագրել մէրքէզ, Ալին, Երզնկան… Ի՞նչ պիտի լինէր մեր վիճակն այնունեանեւ։

Պիտի բռնէին, բանտից-բանտ, տանջանքների և շվթաների մէջ, հեռու երկրից, հեռու Զարուհուց…

—Հօրեղբայր, բռնեցի յանկարծ ծերունու թեր—Էօմարը, Հաջի-Գէորգը…

—Ի՞նչ, արեց նա զարմացած—ի՞նչ էօմար, ո՞ւր է…

—Ի՞նչ ես կարծում, նրանք չե՞ն իմացել, չե՞ն գալ այստեղ՝ մեզ բոլորիս տեսնելու և յետոյ մատնելու…

Այդ միջոցին էր որ հեռուում, մթան մէջ, աչքիս երեաց մի կրակ։ Կարմիր մեծ եփուն մի բիծ, որ երերում էր ծառերի խորքում։

—Ի՞նչ է այն, հօրեղբայր, կանգ առի ես և նրան էլ ստիպեցի կանգնելու։

—Ի՞նչ եղաւ քեզ, տղա՛յ… գոչեց նա—կրակ է, ի՞նչ պիտի լինի. ջաղացն է։

—Ջաղա՞ցն է… հանգստացայ ես և քայլեցի։

Մինչեւ այդ՝ հօրեղբայրս դարձաւ մեր ետևից եկողներին և քիչ բարձր կանչեց։

—Ու առէք, հասնում ենք. ահա՛ ջրաղացը։

Նշան պատւելին, որ հօրս և միւդիրի հետ ցած խօսելով գալիս էր, մի վայրկեան կանգ առաւ կրակին նայելու. յետոյ ասաց։

—Այդ կրակը կասկած չի յարուցանիլ… եթէ մի քիւրդ կամ թիւրք տեսնի…

—Նախորդի կրակ կը կարծի, դիտել առաւ հայրու ապահով եղէք. այս ժամուս ձորի մէջ ո՞չ մի քիւրդ կամ թիւրք չի լինիր։

Արագացրինք քայլերնիս և հաղիւ հասել էինք պը-

տոյտի ծայրը, որ մի խուսոտ ձայն՝ շշուկով կանչեց հա-
յերէն.

- Ո՞վ էք :
- Հայեր ենք :
- Խօսքը ասէք :
- «Կրակ» ...
- Լա՛ւ, անցէք ... Խմբապե՞տ ...
- Վահան :

Շատ լաւ էր կատարւում տւած հրահանդը : Սկզբից կարգադրել էինք ջրաղացը, բաւական հեռաւորութեան վրայ՝ շղթայել պահապաններով : Դաւադիրներին և ձորը եկողներին բաժանած էր գոյութիւն ունեցող խմբերի վրայ : Ո՞վ որ և է խմբի չէ իմաց տւել և չէր ընդունել, նա չէր կարող ներս մտնել :

Այդ գեռ բաւական չէր : Կարգադրել էինք և պահապանների մի երկրորդ շղթայ կար ջրաղացին աւելի մօտ, տարբեր նշանաբաններով : Եւ ահա, երբ համառում էինք, պապղաց հրացանի մի փող, ճիշտ հօրեղմօրս կըրծ-քին ուղղած, և մթան միջից լսւեց մի ձայն :

- Ո՞վ է այն :
- «Աղասութիւնը» :
- Ի՞նչով, կանչեց ձայնը :
- «Սրով և հրացանով» :
- Անցէք ... Խմբապե՞տ :
- Վահան :

Ու ձայն հանողն իր հրացանով՝ վայրկենապէս անհետացաւ առանց մի շշուկ իսկ հանելու :

Ահա այսպիսի ձեւականութիւններ ունէինք մննք յեղափոխութեան այդ առաջին քայլերը դնելու օրերին : Եւ գեռ ինչպիսիները ...

Քիչ յետոյ մեր ականջին հասան արդէն խուլ շշուկ-ներ՝ ջրաղացի մօտերից : Կրակը, որ հեռուից տեսել էինք, մի փոքրիկ խարոյկ էր, վառւած մարդկանց հաւաքւելու տեղից բաւական հեռու :

Զրաղացի առաջ եղած լայն տարածութեան վրայ մեր աչքին երևացին բազմաթիւ աև ստւերներ՝ նստոտած, կանգնած, հեռաւոր ծառերին թիկն առած :

Կանգ առի և մի ակնարկ ձգեցի շուրջու : Աւելի քան 90-100 հոգի կային և գեռ զանազան կողմերից լսւում էին պահակների կոչեր ու յայտնում մեղ նոր եկողների մասին :

Ուրախութիւնից և ոգևորութիւնից գողում էի : Չէի ուրանում, որ խոնաւութիւնն ու ցուրտն էլ օգնում էին դրան :

Մեծ կամ կորստաբեր գործի էինք ձեռնարկել : Վըտանգի էինք ենթարկում ամբողջ գիւղեր, տասնեակ լաւ ոյժեր, կարիճ երիտասարդներ :

Ու ամէնքս սպասում էինք, որ գիշերային այդ առաջին ժողովը ոչ միայն մեղ պիտի բերէր վերջապէս սպասուած ծրագիրը, այլև որ նա ... —միամիտ, զրեթէ երախայ կտրիճներ,—որ նա պիտի տար մեղ վճռական ըոպէն՝ խորտակելու համար դարեւոր սորկութեան, տանջանքների ու վշտերի անարդ, անտանելի դարձած լուծը ...

Երդրումի խուզվութիւնների և կ . Պօլսի յուլիսեան ցոյցից յետոյ գաւառներում մտքերն ա'նքան յուղւած էին և երիտասարդութիւնը ա'յն աստիճան ջղային սպասողութեան մէջ էր, որ ամէն պրօպագանդիստի գովուածը որ և է քաղաք կամ գիւղ—յառաջացնում էր արտասովոր շարժում : Իսկոյն ամէնքը ըրջապատում էին նրան և կամնուում իմանալ շատ և շատ բան :

Ի՞նչ դրութեան մէջ էր յեղափոխութիւնը ուրիշ կողմերում, պատրաճստ էր, կարելի էր սկսել, կինդրոնը ի՞նչ էր մտածում, ե՞րբ էր տրւելու ընդհանուր ապրուամբութեան նշանը :

Աքմէնը հաւատացած էին, որ հասել էին բանակառութեան և աւազակութիւնների վերջին օրերը : Ամէնքը

համոզւած էին, որ միայն մի ճիգ—և ահա հայր վերջապէս թօթափելով դարեւոր լուծը, պիտի աղաս շունչ առնէր, շունչի հետ իր վրէժն առնէր թալանողներից, կոտորողներից . . .

Եւ երբ գիշերւայ այդ պահուն ես ու նշան պատւելին, ջրաղացի մօտ հաւաքւած ըաղմութեան մէջ լոփկ քայլելով՝ Բժշկին ու Խաչատուր պատւելուն էինք որոնում—դասնք այնպի՛սի աներից եկող երիտասարդներ, որ զարմացել էինք: Նոյն իսկ ամենահարուստ, ազդեցիկ աղանձների որդիները կային, երկու քահանայ, մի երկու տիրացու, գրեթէ տասնի չափ հասակ առած մարդիկ, ծերունիներ . . .

Ու ամէնքը ոգեորւած, տաքացած, սրտատրով և անհամբեր՝ սպասում էին ժողովի բացւելուն: Ամէնքը միմիայն խօսում էին յեղափոխութեան, նոր եկող «տապաքեալի» և սպասուղ «նշանի» մասին:

Մէնք լոելեան սպասում էինք խմբերի մէջ ու տեղեկանում թէ այդտեղ չե՞ն, չե՞ն եկել դեռ Բժիշկին ու պատւելին: Մարտիկն էլ չկար: Հստ երեսութիւն «առաքեալի» հետ էին գալու երեքն էլ:

Շրջելու ժամանակ, թէև մութ էր, սակայն կարողանում էի ճանաչել շատերին: Բինկեանցիների հանդիպելիս՝ ջանացի խմանալ թէ հօրաքրոջս ամուսինը ո՞ր կողմն էր: Ուզում էի դոնէ մի քանի բառ խօսել հետը, տեղեկութիւններ հարցնել: Մօտ 10 օր էր, որ Զարուհուն չի աեսել՝ սաստիկ զբաղւած ժողովով:

— Սերովը աղան ո՞ր կողմն է, կարո՞ղ ես ասել, հարցրի մի Բինկեանցու:

— Չկարծեմ որ եկած լինի, ասաց նա—և եթէ եկել է, չեմ տեսել: մեղ հետ չէր:

— Բոլո՞րը խմբերը եկել են:

— Բոլո՞րը:

Ու անցնում էինք: Քիչ յետոյ, անզգալար բա-

ժանուեցի նշան պատւելուց և մտայ ծառերի տակ, ուր տեսնում էի հաւաքւած զանազան խմբեր: Կայլին Փոքր Արմանցիք, Կասմացիք . . . Յետոյ, է՛լի Բինկեանցիք: Գիւղն ամբողջ դատարկել էր այդտեղ:

Երբ մի ծառի տակ նստածած մարդկանց էի զննում և ճանաչել աշխատում—նստածներից մէկը հարցրեց.

— Ո՞վ ես, ո՞ւմն ես որոնում:

— Բինկեանցի՞ ես, հարցրի—ես Վահանն եմ:

— Բարի երեկոյ, ասաց խօսովը և տաքի ելաւ: Սուաքելն էր: Բինկեանի խմբապետներից մէկը:

— Քո խմբից են, Սուաքել:

— Իմ . . . Որի՞ն ես ուզում դու:

— Սերովը աղան եկե՞լ է:

— Եկել է . . . Ահա՛, քիչ ցած՝ նստել են . . . Թորգոնի խմբի մէջ է մտել նա . . . Կանչե՞մ թորգոնին:

— Ո՞չ. տա՛ր ինձ նրանց մօտ:

Սուաքելը առաջ ընկաւ: Մի քանի քայլ հեռու, մի խոշոր քարի չուրջը խմբւած երեւում էին 5—10 հոգի: Երբ մօտեցանք, Սուաքելը կանչեց հեռուից.

— Թորգո՞մ:

— Այստե՛ղ, լսեց մի ձայն և առաջ եկաւ մի ստեր:

— Վահանն է: ասաց Սուաքելը և հեռացաւ:

— Բարի երեկոյ՛:

— Բարի երեկոյ . . . Սերովը աղան այստե՞ղ է:

— Սերովը աղա՛ . . . Վահանն է, ձայնեց թորգոնը կլուխը ետ դարձնելով:

Նստածների մէջ մի շարժում առաջացաւ և հօրոքրոջս ամուսինը բռնեց ձեռքս:

— Վահան . . . արեց նա—լաւ . . . Ի՞նչպէս ես . . . Հօրաքոյրդ անհանգիստ . . .

— Իսկ Մարիամը, Զարուհին . . .

— Հը՞մ . . . արեց նա—լաւ, լաւ . . . Բարեներ . . .

Յանկարծ զգացի որ երկու թեեր զրկեցին վիզու, յետոյ մի մեղմ ձայն լսերի ականչա ի վեր, որ ասում էր:

— Զայն չհանես, անունս չտաս . . .

Երբե՛ք այդքան չէի զարմացել: Մարիամն էր . այո՛ .
տղամարդի հագուստով. մինչև իսկ հրացան էլ ունէր
ուսին:

— Վա՛հ . . . գոչեցի—դո՞ւ . . . դո՞ւ էլ:

— Եւ ես . . . լսեց կողքիցս մի ուրիշ ձայն: Յետոյ,
երեկ մինից օգտւելով, անհուն երջանկութեամբ զգացի
մի ջերմ համբոյր շրթունքներիս վրայ:

— Զարուհի . . .

— Ամ . . . անունս մի՛ տալ . . . ես Զարեհ եմ . . .

Իմ Զարուհին, երազներիս, մտածութիւններիս մե-
ծագոյն մասը խոր իմ հրեշտակը այստեղ, գիշերով, դա-
ւաղբական ժողովին . . .

— Բայց . . . թոթովեցի կարկամած և զրկիս մէջ պա-
հելով նրան — դո՞ւ այստեղ . . . ինչ անխռհմութիւն . . .
ինչո՞ւ եկաք:

— Քեզ տեսնելու, առաքեալին լսելու . . . Նեղա-
նում ես, ուրախ չե՞ս, ասաց Մարիամը:

Միմիայն, այո՛, միմիայն Բինկեանցի, այդ ամե-
նաքաջ գիւղացիների աղջկները ընդունակ էին այդպի-
սի քայլ անել: Գիշերով ելնել, իրանց հայրերի հետ,
տղամարդի նման հազնւած ու զինւած՝ քայլել ժամերով
և դալ մի այդպիսի վտանգաւոր ժողովի:

Վերջ չկար ուրախութեանս: Բոնեցի երկու աղջկե-
ների ձեռքերից, քաշեցի մի կողմ—աւելի հեռու, աջ
ձեռքովս գրկած կուրծքիս վրայ Զարուհուն, զրեթէ ե-
րեսը երեսիս, օգտւելով մինից, չտեսնելուց՝ անընդհատ
համբոյրներով, իսկ ձախ ձեռքովս Մարիամի ձեռքը
բռնած—մի քանի րոպէ մնացի լուռ և երջանիկ:

Օ՛հ, որքան կ'ուզէի երկարէր գիշերը. առաքեալը
գեռ չգար, դեռ ևս է՛լի և էլլ' ունենալ Զարուհուն
այնքան մօտ—կրծքիս, այնքան երջանիկ՝ նրա համբոյր-
ներով:

Խօսելու պէտք չկար. չէի ուզում: Խօսում էր Մա-
րիամը միայն. հազիւ լսում էի. պատմում էր իրենց
հազնւելու մասին, պատմում թէ որքան ստիպողաբար
համոզել էին իրենց հայրերին և մայրերին, ի՞նչպէս էին
եկել. ինչ արկածներ, ինչ յոզնածութիւններ . . .

— Գիտե՞ս . . . լսեցի աւելի որո՞շ Մարիամի խօսքե-
րը—ժողովից յետոյ վճռել ենք որ ձեր տուն գանք և
մնանք այս գիշեր:

— Մեզ մօ՞տ, իրա՞ւ . . . Իրա՞ւ, Զարուհի, պիտի
դաս մեր տուն, հօրս ու մօրս տեսնե՞ս . . . իբր հա՞րս . . .

— Մի՛ շտապիլ, սաստեց Մարիամը—առաջ մի՛ վազիլ:

— Լոփի՛ր, Մարիամ, լոփի՛ր, հայրս էլ զիտէ, մայրս
էլ. ուրախութիւնից կը գտւեն քոյրերս . . . Այո՛, այո՛,
շուտ վերջանար ժողովը, գնայինք միասի՞ն . . . Գիտե՞ս,
Զարուհի, հայրս էլ այստեղ է, հօրեղբայրս էլ . . .

Ու չզիտէի ինչ էի խօսում. միմիայն երջանիկ էի:

Սակայն երկար չտեսց այդ: Գոնէ ինձ թւեց, որ
միայն մի րոպէ եղաւ Զարուհուն մօտս ունենալը: Յան-
կարծ լսեցին ձայներ միմեանց ետելց, ձայներ, որոնք
սկսել էին ջրաղացից և գալիս ինձ էին համնում հետ-
զետէ.

— Վահա՞ն, ջրաղացի մօտ . . . Վահա՞ն, ջրաղացի
մօտ . . .

— Եկել է, եկել է . . . հաւաքւեցէք աւելի մօտ . . .

— Եկել է առաքեալը, Բժիշկը . . . հաւաքւեցէ՛ք . . .
Յացւեցի. որքան շուտ:

— Գնա՞ , քեզ են ուզում. դէմքը դէմքիս մօտեցրեց
Զարուհին և մի երկար համբոյրից յետոյ հեռացաւ
մեղմութեամբ հրեց ինձ:

— Ո՞րտեղ կը լինէք յետոյ, հարցրի ես:

— Մենք քեզ կը զանենք, ասաց Մարիամը — մէշտ
Ջրաղացի մօտ մնա՞ . . .

Յետոյ բռնեց Զարուհու ձեռքից և երկումն էլ
խառնւեցին դէպի ջրաղացը յառաջացողներին:

—Վահա՛ն . . . Վահա՛ն . . . լուռում էին դեռ ամէն
կողմից :

—Եյստե՛ղ . . . ձայնեցի և երկու-երեք ոստիւններով
արդէն հասել էի խարոյկի արձակած լոյսին :

Այնտեղ գտաց Բժշկին, Խաչատուր պատուելուն,
Նշանին և Մարտիկին, որոնք իրանց մէջն ունէին մի
երկարահասակ, իրովստ կեցւածքով անձ, որ հրացանի
փողի վրայ կոթնած՝ նայում էր հաւաքւած ամբոխին :

Ինձ ծանօթացքին: Կրպէ կոչեցին նրան: Բժիշկն ու
Մարտիկը ձեռքս սեղմեցին, յետոյ միասին դիմեցինք
Դէպի ջրաղացի գուռը և այնտեղ, կրպէն ենելով մի
քարի վրայ, պահ մի լուռ՝ նայեց հաւաքւածներին և
ասաց հանդարտ ձայնով.

—Խնդրում եմ ամէնքին նստել:

Բոլորը նստեցին. մենք կանգնած մնայինք կրպէի
ետևում:

Գիշերը թէև մութ էր, բայց աչքերս արդէն վարժ-
ելով, բաւական լաւ տեսնում էի նստած բազմութիւնն
ու ցից հրացանները, որոնց խողովակները երբեմն փող-
փողում էին խարոյկի լոյսի ազօտ շառաւինների տակ:

Կրպէն սպասեց մի վայրկեան ևս, կոթնեց իր հըրա-
ցանի փողի վրայ, ապա յանկարծ ցնցեց գլուխին ու դոչեց.

—Սյէս թուրքի մալը հալա՛լ է մեզի, հա՛յ եղ-
բայիններ . . .

Ինչպէս . . . Ցնցւեցի ես լսելով այդ բառերը. թուրքի
մալը հալա՛լ է մեզի . . . Եւ դա կենդրոնից ուղարկած
սուաքեա՞ն էր ասում: Այլպէս պէտք էր սկսել. եկել
էր այդ ասելու: Եւ ինչո՞ւ թուրքի մալը մեղ հալալ պէտք
է լինէր. ինչ իրաւամբ:

Ամօթից ասեմ, թէ բարկութիւնից՝ դող զդացի և
մի քայլ ետ քաշւեցի: Յեղափոխութեան բերնից արձակ-
ւող այդ կրչը այնքա՞ն վատ ազդեց վրաս, որ մի քանի
բոպէ չլսեցի այլևս թէ ինչ էր խօսում «առաքեալը»:

Ահ, ո՛չ, այդպէս չէ՛, որ պէտք էր խօսել ժողովր-
դին: Յեղափոխութիւնը, ազատութեան համար կուող
զինուորը, իր մարդկացին իրաւունքների համար արիւն
թափելու վճռած անձը իրաւունք չունի՛ ուրիշի մալը
իրան հալալ համարելու, այլ միմիայն ի՛ր մալը, ի՛ր ունե-
ցածը, իր կեսնքն ու գոյքը, որին պահպանելու համար
նա զէնք է վերցնում, զոհեր տալիս, որդոց որդի կըռ-
ւում է, երկիրը բարբարոսութեան դէմ ոտքի հանում . . .

Բայց, զսպինք մեղ . . . լսենք «առաքեալ»ին: գուցէ
ես սխալ հասկացայ, գուցէ դա մի անցածող մտածւած
ուռուցիկ նախադասութիւն էր՝ ցնցում առաջ բերելու
մտադրութեամբ:

Տիսուր և մուայլ, բայց ուշքս ժողովելավ և ուշադ-
րութիւնս լարած՝ մօտ զնացի:

— . . . Հինգ գար ամբողջ . . . շարունակում էր առաք-
եալը ողերութեամբ և յափշտակութեամբ — հինգ գար
ամբողջ նրանք կերան մեր ինչքը, հոգին, պատիւն ու
կեանքը, պղծնցին մեր հաւատաքը, լացուցին մեր հայրերին,
պիտի լացայնն մեղ և մեր որդիներին . . . Ոչի՞նչ չնաց.
Ինչ որ չկարողացան խոկ՝ աւերեցին, այրեցին ու սպան-
նեցին: Արիւն գարձրին մեր կիսանքը, ծոեցին մեր ող-
նաշարը, Ծուեցինք մենք ու խոնարհնեցինք ամէն բարձր
գոռացող պաշտօնեայի առաջ, խալերայ, գծուծ և սար-
կային զդ ացմունքներով մեծացանք ու մեծացրինք մեր
սերունդը, ամէն լաւ յատկութիւն կորուցինք, ամէն
ազնիւ բանի հասկացողութիւն մեռաւ մեր մէջ . . . Հրէշ-
նե՛ր դարձանք ու հրէշ մի ազգի ծնունդ տւինք . . . Այս
բոլորը թուրքն արտւ, նրա բռնութիւնն ու անիրաւու-
թիւնը, նրա բարբարոսութիւնն ու մեռցնող, փչացնող
լուծը . . .

Այլ ես, ուրե՛մն, միմիայն վրէժէ կարող է զարթնել
մեր կրծքում. վրէ՛ժ անցեալի, վրէ՛ժ ներկայի համար,
վրէ՛ժ բռնաւորներից, վրէ՛ժ աւաղակներից, քանի որ

Նրանք բնական են համարում տանջել մեղ, գրասաների նման բանեցնել... Մնում է մեղ մեռնել, եթէ չենք կարող մարդկանց նման ապրել. մեռնել և կամ աղատել այդ բոլորից... Եւ ահա, թող ձեղնից իւրաքանչիւրը մի բան միայն գգեւէ, մի միտք միայն փայփայէ, մի հաւատք միայն ունենայ և մի Աստուած...

Ու այդ Աստուածը լինի՝ աղատութեան տեհնչը. մի տեհնչ՝ որի համար պիտի զոնել արեան յետին կաթիւը, ուշադրութեան վերջին մասը, ոյժերի ամենամեծ լարումը...

Եւ այսպէս, հետզհետէ ոգեորւած, հետզհետէ ձայնն ու հասակը բարձրացնելով, հրացանը ճօճելով խօսեց նա ամբողջ կէս ժամ:

Պէտք էր տեմնել թէ ինչ էր անցնում լսող բազմութեան մէջ: Չափազանց տանջւած էր այս ժողովուրդը. վրէ՛ժ, միմիայն վրէժ վատերից... Ալես ո՛չ մի... տրամաբանութիւն չմնաց իմ մէջ. ո՛չ մի... Կատարելապէս համաձայն խօսողի հետ— զգուժ էի որ իրաւունք ունէր, որ յիրաւի թիւրքի մալն այլևս հալալ պիտի լինէր մեղ վերջապէս, քանի որ հարիւրաւոր տարիներով կերել էին ու մարսել մեր մալը, սպառել մեր կեանքը և անընդհատ նոյնն էր կրկնւել մեր պապերի հետ, նոյնը մեղ հետ, նոյնն էլ կրկնւելու էր մեր որդիների հետ:

Թիւրքի մալ... Միթէ երկրումը թիւրքը մալ ունէր և կարո՞ղ էր երբ և իցէ ապացուցանել թէ հայից խլած հոլը՝ իր քրտինքի աշխատանքն էր, հայից տարած տաւարը՝ իր աշխատանքի արդիւնքն էր և կամ կերած մի կտոր հացը՝ շաղախւած չէր հայի արդիւնով...

Ո՛չ. իրաւունք ունէր կրպէն. յիմարը ե՛ս էի, որ պահ մի մտածել էի, թէ իրաւունք չունի՞նք «թիւրքի մալը հալալ համարելու»... Ունէինք, որովհետև այդ մալը, մինչև յետին խիլը՝ մերն էր, մեր մարմնից սրկած, մնդնից խլած, մեր քրտինքի արդիւնքը, մեր արիւնն ու հոգին...

Ոչ ոք ալես նստած չէր մնացել լսողներից. ամէնքը հետզհետէ վեր էին թուել, շրջանը սեղմել... Բոցավառուում էին հարիւրաւոր աշքեր, լսուում էին զէնքի շարժումներ, սեղմւում էին բուռնցքներ և ազօտ լոյսի շաւիղների մէջ երկցող իւրաքանչիւր դէմք այնպէ՛ս կատաղի, այնքան վսեմ էր, աղատութեան կրակով այնքան վառվուուն, որ վայ այն թիւրքին, եթէ այդ բոպէին համարձակւէր մեր ճանապարհի վրայ ելնել:

Ինքս, ինքս պատրաստ էի անխտիր ու անինայ ջարդել ու փշրել ինչ որ թիւրք անուն էր կրում. աւերելու, ոտնատակ տալու տենդը համակում էր նոյն խկ ինձ: Ահ, գնալ-աւերել այն բոլոր թիւրք և քիւրդ աւազակ բէզերի, աղաների բուռները, անխնայ կոտորիլ ամէնքին, մինչև խկ վայրենութիւններ անել, փշրել, ջարդել...

— Տղա՛ք... լսեցի նորից կրպէի խրոխտ ձայնը — տեսնում եմ, զգում եմ որ հասկացաք ինձ, որ ամէնքդ պատրաստ էք վրէժի և աղատութեան համար... Վրէժ և աղատութիւն— ահա ձեր նշանաբանը... Երդւե՛նք, երդւե՛նք ուրեմն, որ մինչև մահ պիտի գործենք յանուն աղատութեան և մեր դարեւոր վրէժի. երդւե՛նք որ մինչև մեր արեան վերջին կաթիւը՝ պիտի կռւենք ճշողների դէմ. երդւե՛նք, որ նոյն տեսակ պատրաստակամութեամբ մեր դաշտունը պիտի թաթախենք այն հրէշի արեան մէջ, որ սիրո կ'ունենայ մարդկային այսքան մեծ ու վսեմ գործը մատնել բռնաւորներին, արիւնոտել իր հայրենիքը... Երդւե՛նք...

Եւ երբ ձեռքքը պարզել էր, բոլոր ձեռքերն էլ բարձրացան ու խաւարի մէջ հնչեց միայն մի հատ որոտագին, ձորը թնդացնող բառ.

— Երդւե՛մ ենք...

Այդ բոպէին ինչ ասես՝ կարելի էր անել տալ այդ բազմութեան: Միայն մի նշան— և մի հատ թիւրք ողջ չէր մնալ մինչև լոյս, ո՛չ Արմտաններում և ոչ էլ թիւնկեանում:

Ամէնքը երդւեցին—քահանա'յ, միւղի'ր, ուսուցի'չ
... Ամէնքը տենդով բռնւած, ո'չ մի հեռատեսութիւն
կամ զգուշութիւն մտքերովը չէր անցնում: Դեռ նրան-
ցից ո'չ ոք ազատութեան զոհ տւած չունէր, ո'չ ոք թըշ-
նամուն դէմ առ դէմ չէր կանգնել զէնքը ձեռքին և ո'չ
ոք խմբական արիւն չէր տեսել...

Այդ բոպէին ամէնքը մոռացան—ե'ս իսկ—ծրագիր,
նշան, կազմակերպութիւն... Պարզ էր մեղ համար ամէն
ինչ: Ի՞նչ պէտք նշան, ծրագիր կամ կազմակերպութիւն:
Զարկ, ոչնչացրո՞ւ, ջարդի'ր, հալածի'ր, մաքրի'ր հայ-
րենիք աւազակներից, բռնաւորներից— ահա քո նպա-
տակն էլ, ծրագի'րն էլ, նշանաբա'նն էլ...

Գրեթէ կէս գիշեր էր, երբ ցրւելու նշանը տրւեց:
Բժիշկը, Մարտիկը, Խաչատուր պատւելին և կրպէն՝
Նշան պատւելու մօտ—փոքր Արմտան հիւր պիտի լինէին:
Հինգ գլխաւորներէ խորհրդակցութիւնն ու երկար խօ-
սկցութիւնը թողւած էր միւս օրւան:

Այդ պատճառով էր, որ ես առանց իսկ բարեկելու
ընկերներիս, գնացի լոյսի մէջ և սպասեցի Զարուհուն
ու Մարիամին:

Այսուհետեւ դէպք դէպքի ետեկից յաջորդեցին միւնի-
եանց: Արմտանը կարծես գիշերացին ժողովին էր սպա-
սում՝ փոթորկի բերանն ընկնելու համար:

Հետեւեալ օրն ի հարկէ տեղի ունեցաւ գլխաւոր-
ների ժողովը փոքր-Արմտանում: Ծրագիր չկար. Կրպէն
խոստացաւ, որ գրաւոր կերպով կը ստանամք շուտով:
Գաւաւ, որ մեր գործունէութիւնը լաւ է, համապատաս-
խան և որ հարկաւոր էր աւելի լաւ կազմակերպել խօս-
քերը, զինել և ընդհանուր նշանին սպասել:

Դարձեալ ծրագրի խոստում, ընդհանուր նշան:
Արդէն սկսէլ էի չհաւատաւալ: Կ. Պօլսից զիտէի այդ
խոստումները և ինձ սկսում էր թւել որ ո'չ ծրագիր էր
շնուած և ո'չ էլ ընդհանուր նշանը կարող էր տրւել.

որովհետեւ ո՞վ կարող էր ասել թէ ինչ դրութեան մէջ
էին գործերը երկրի միւս կողմերում—էրզրում, Սվազ,
Խարբերդ ու Սասուն... Ո'չ մի լուր, բացի այն, որ
երզրումում շարունակում էին ճնշումներ ու ճնշումներ...
Թւում էր, որ միայն մեր գաւառն էր այդքան յաջող
կերպով կազմակեր գւած, զինւած ու զրեթէ պատրաստ:

Այսուամենայնիւ, Նշան պատւելին նշանակւեց որպէս
մեր շրջանի ընդհանուր հրամանատար, ես՝ նշանակւեցի
խմբէրի կառավարիչ և Բիլիկեանի մասի գնդապետ:
Իսկ Բժիշկը, Մարտիկը, Խաչատուր պատւելին ու Կրպէն
երկու օրից յետոյ մեկնեցին դէպի ուրիշ զիւգեր եւս
գնալու Տիվրիկ, Օտուռ, Կիրասօն անդամ, ապա
կուռնայիլ, Մըւանա...

Վճուել էինք ամբողջ Մջակայքը, հար եղածին չափ
հետպհետէ լայնացնելով Մջանակը՝ ոտքի հանել ու զինել:

Սակայն չէր անցել մի շաբաթ, որ լուր առինք թէ
Տիվրիկի մէջ գործելիս, Բժիշկը, մի քանի վաս ու վախ-
կու հայերի կողմից ընդդիմութեան և արգելքի հանդի-
պած, մատնել էր կառավարութեան: Եւ լրտեսներ ընկած
այս-այն կողմ, ծածուկ հակում էին Բժշկի իւրաքանչիւր
գնացած տեղի վրայ:

Անձկութեամբ, օրէցօր սպասում էինք որ մեր այդ-
ընկերը կարող էր բռնւել. թէ նա շատ զգոյշ էր գոր-
ծում այժմ, զգոյշ, խոնհմ և առանց ուել հետք թողնելու:

Այդպէս էր գործերի զրութիւնը, երբ Փոքր-Արմը-
տանում մի հասարակ զէպք, սպասւած նշանից աւելի
շուտ կայծ դարձաւ, հրդեհն սկսելու:

Նշան պատւելու մշակին, որ մի քիւրդ էր, փայտ
կարելու գնացած ժամանակին ճանապարհին ջորին խրտ-
նել էր ու վար նետել. սար ասպանդակի մէջ, գրասոր
քիւրդին խփել էր քարից քար և մահամբձ՝ ձգել զիւ-
ղի մօտ:

Միւղերն ու զգիրը գնացել քննել էին, բերել վիրա-

ւորւածին ու պատւելու տան դռան առաջը ձգել : Իսկ քիւրդի հայրը և աղջականները հաւաքւած վիրաւորի շուրջը, աղմկում էին և վիրաւորի արեան դինը պահանջում :

Լուրը հէնց որ ինձ հասաւ, իսկոյն հօրեղբօրս հետ ձի հեծանք, Փոքր-Արմտան իջանք, յորդորեցինք պատւելուն՝ վերցնել վիրաւորը և փոխադրել մի ուրիշ տուն, ինտոյ հօրեղբայրս ջանաց ցրւել ժողովւած քիւրդերին, խոստանալով որ վիրաւորւածի համար բժիշկ կը բերեն ու կ'առողջացնեն :

Բայց վտանգն ակներե էր : Քիւրդի ողջ տեղը չէր մնացել և հթէ մեռնէր, ո՛չ միայն ցեղակից քիւրդերը մի փորձանք կը բերէին գիւղի դլսին, այլ և կառավարութիւնը պատրւակ կ'ունենար մի անգամ ևս, նշան պատւելուց սկսած մինչև յետին գիւղացուն, յանուն քննութեան և զործի պարզաբանութեան՝ տուգանել, տանջել և կեղեքել :

Ճար չկար : Յամենայն դէպս հարկ էր բժիշկ բերել : Մտածեցինք մի մարդ ուղարկել մեր Բժշկի ետելից, որ Զիմարա էր և երեկոյեան դէմ երբ նա գալով՝ տեսաւ հիւանդին, զլուխը շարժեց ու նշան պատւելուն մի կողմը քաշելով ասաց .

Պատւելի՛, մշակդ պապերի մօտ է զնալու . աւելի լաւ է որ ջանաս, ծնողներին ու աղջականներին մի բան տաս և գան իրանց հիւանդը տանեն ...

Ինքնըստինքեան չնչին բան էր, բայց Բժշկին անձամբ ստիպւեց քիւրդերի հետ խօսել, համոզել, նշան պատւելու տած խոշոր գումարը նրանց ձեռքը կոխել և հիւանդը տանել տալ :

Ահա այդ արկածը բաւական եղաւ սկիզբ դառնալու այն բոլոր սոսկումներին, որոնք այնուհետեւ յաջորդեցին միմեանց :

Զորեպան հօմարը տեսել էր Բժշկին : Սա էլ, մեր

խնդրանօք, երկու օր Արմտան մնաց և հազիւ մի երեկոյ ճանապարհ էինք դրել նրան դէպի Հասան—Օվա, որ միւս առաւօտ շուտով, լուսարացին, երբ սենեակիս բարձր լուսամուտից դաշտին էի նայում, աչքիս խփեց մի նոր բան :

Դէպի Արմտան եկող Զիմարայի ճանապարհով սրասշաւ գիւղն էին գալիս բազմաթիւ ձիաւորներ, որոնց հրացանների փողերը պլազում էին նոր ծագող արեւ տակ :

Նախ քիւրդեր կարծեցի և սոսկումով մտածեցի, որ ահա յարձակում են գիւղի վրայ : Եետոյ նկատեցի ցնցող վնջիկներ, կամաց-կամաց՝ նշանազգեստներ . . . Ժանդարմներ էին, ոււրիներ . . .

— Ահա' . . . մտածեցի գունստւելով—գալիս է փորձանքը :

Կորցնելու ժամանակ չկար : Հազար ու մի բան անցաւ մտքովս : Գուցէ իմացել էին գիշերային ժողովի, խմբերի մասին . եղել էին մասնութիւններ . գուցէ նշան պատւելուն և կամ . . . հէնց ինձ ձերբակալելու էին գալիս :

— Հա՛յր . . . գոչեցի վար նետւելով—սւարիներ գիւղ են մահում :

— Սւարիներ . . . բացականչեց նա մեռելի պէս գեղնելով—փախի՛ր, շուշտ . . . Բինկեա՞ն գնա . . .

Մի վայրկեան քիչ մնաց, յիրաւի, դէպի ախոռ նետւեի . . . բայց մէկն մաքիս եկաւ, որ նախ՝ գուցէ ինձ համար չէր և երկրորդ՝ տարադութիւն էր թողնել մերոնց և հեռանալ : Երբ երկրորդ հրամանատար խմբերի, ինձ համար ամէնից աններելին էր փախնելը :

Մինչ այդ, հայրս արագ հագնեց ու փողոց եւանք երկրոս էլ : Առաջին հանդիպողին յայտնեցի լուրը, մեր մշակին էլ հրամայեցի վազել դէպի Փոքր-Արմտան և քիչ մշակին էլ հրամայեցի վազել դէպի Բժշկին և գիւղն յետոյ, երբ սւարիների խումբը գիւղ էր մտնում, գիւղն ամբողջ արդէն ոտքի վրայ, դռների ետևում անձկալից դէմքեր՝ սպասում էին թէ ի՞նչ պիտի լինէր :

Մինչև իսկ խմբապետներից երեքը լուր էին ուղարկել ինձ, որ խմբերը պատրաստ ու զինւած, սպասում էին իմ հրամանին :

—Երեան չգա՞ք... պատրիրեցի ես—երբեք երևան չենէք :

Յետոյ, երբ լուր բերողը ուղում էր դառնալ՝ աւելացրի .

—Բողոք խմբերին խմաց տալ՝ պատրաստ լինելու և երբեք չերեալու, մինչև որ լուր ստանան ինձնից :

Ու վճռելով, ինչ որ էլ լինէք, քաջ մնալ, ձեռքովս գրապահումս սեղմնեցի ասրձանակի կոթն ու ասացի հօրս .

—Մնա՞ք փողոցում, հայր, թող գան մեր մօտով անցնեն և տեսնենք ինչու են եկել :

Զիաւորները սրբնթաց քշելով՝ իջնում էին դէպի մեզ : 14 հոգի էին, մի սպայի առաջնորդութեամբ :
Երբ վերջինս հաւասարւեց մեզ, ձիու սահմար քաշեց և հարցրեց հօրս .

—Բա՛րմ, ծե՛րունի, ո՞րտեղ է իջել Բժիշկը... Հեանդի պիտի տանենք :

Ահա ուրեմն, Բժշկին էին որոնում՝ ձերբակալելու : Հայրս ստուր դէմքով նայեց սպային և առանց շւարելու հարցրեց .

—Ո՞ր բժիշկը, էֆէնդի... մեր գիւղում բժիշկ չեմտել :

—Ո՞րն է միւղիրի տունը, հարցրեց սպան դրդուած շեշտով :

—Ուղիղ գնացէք...

Սպան մտրակեց ձիուն, սւարիները նոյն արագութեամբ հետեւեցին :

—Շտապէ՞ք... խօսեց հայրս ինձ և իսկոյն յետոյ մեզ շրջապատղներին դառնալով—Բժշկին պիտի իմացընել և եղած տեղիցը փախցինել :

Անմիջապէս ձայն տւի խմբապետներից երկուովն և ամենակարծ ճանապարհով Փոքր-Արմատն իջանք :

Նշան պատւելին գունատ՝ մեզ էր սպասում: Կարծում էր թէ սւարիները իր համար էին եկել, մեռնող քիւրդ մշակի պատճառով :

—Բժշկին են ուղում, կանչեցի հեռուից—լուր պիտի ուղարկել Հասան-Օվա :

Պատւելին քիչ շունչ առաւ, յետոյ շտապով ձին դուրս քշեց ախոռից և գոչեց մեղ .

—Ես արշաւում եմ. թող երկու հոգի էլ հետեւն ինձ :

—Սպասի՛ր, պատւելի, բոնեցի նրա թեից—նախ որ դու չպիտի հեռանաս գիւղից, քանի այստեղ վտանու գիւղի հաւանականութիւն կայ. երկուրդ՝ երեք ձիաւոր աւելորդ է: Տուր ինձ ձիգ...

Յետոյ, առանց սպասելու պատասխանի, թուայ ձիու մէջքին և մտրակեցի :

Երկու ժամ յետոյ՝ Հասան-Օվա էի: Բժշկը, առաւոտն իսկ, շատ քիչ մնալով այստեղ՝ մեկնել էր դէպի Վերին-Բագառին զիւղ :

Միայն 15 րոպէ հանդիստ առի, մի գիւղացու տըւած հաց ու պանիրը կերայ ու մտրակեցի :

Վերին-Բագառին 130 տուն հայաբնակ մի լաւ գիւղ է, կամախի (Դարանաղի) գաւառում, բաւական հեռու Հասան-Օվայից :

Ցաւելով էր որ ճանապարհու ուղղեցի այդ կողմը: Որովհետեւ, հէսց որ Հասան-Օվա գնաւու պէտքն զդացւեց, վճռեցի ինքս զնալ, դասնալիս Բինկեան հանդիւց, Զարուհուն տեսնելու համար: Գիշերային ժողովի պելու՝ Զարուհուն տեսնելու համար: Այսքան մեծամիւս օրն իսկ տուն էին վերագարձել: Այսքան մեծամում էր սէրս դէպի նա, որ ո՛չ մի առիթ փախցնել չէի նում էր սէրս դէպի նա, որ մի առիթ փախցնել էր նա ամար:

Վերին-Բագառիճը գնալով՝ յոյսս պիտի կտրէի նոյն
երեկոյ Զարուհուն տեսնելուց:

Բայց երեկի թժշկին դժբախտութիւն էր վիճակւած,
որովհետեւ կէս ճանապարհին ձիս ակներև յոգնածութեամ
նշաններ ցոյց տւաւ։ իսկ ի լրումն ամէնի, քիչ յետոյ,
հեռուում տեսայ մի թանձր փոշի, ապա մի խումբ ձիա-
ւորներ, որոնք դէպի Հասան-Օվա էին գնում։

Պէտք էր շտապել։ Եթէ յաջողւել էր նրանց՝ իմա-
նալ Բժշկի Հասան-Օվա լինելը, այստեղ էլ դժւար չէր
նրա Բագառիճ լինելը դուրս կողզել գիւղացիների բերնից։

Դժբախտութիւնը նրանումն էր, որ երբ Բագառիճը
երևաց, Տիվրիկի կողմից էլ աշքիս խփեց ձիաւորների
մի նոր խումբ։

Հալածանքն, ըստ երեւութիւն, թէ՛ զօրեղ էր և թէ
լաւ կազմակերպած։ Բայց ո՞րտեղից էր մատնութիւնը,
ո՞վ էր իմաց տւել որ նա մեր կողմերումն է, նոյն իսկ

Այլևս ձին խնայելու ժամանակը չէր։ Մտրակն ուժ-
գնութեամբ իջնցրի նրա կողերին։ Խեղճ անասունը տա-
նեց, զզաց որ հարկաւոր էր ճիգ գործել և կէս ժամից
յետոյ, սւարիներից բաւական առաջ, հասցրեց ինձ գիւղ։
—Ուր է Բժիշկը, դոչեցի առաջին հանդիպածին—
շուտ...

Սննջուշտ ճանաչեց։ վազեց առջեխս։ Միւդերի
տանն էր Բժիշկը։ Սննջապէս դուրս եկաւ, ժամուն՝
ձեռքն ինձ պարզեց։

—Բժի՛շկ, դոչեցի ցած նետւելով—շուտ... դարիս
են ձեզ ձերբակալելու։ թագնեցի՛ք. իսկոյն կը հաս-

Մի մեծ շփոթութիւն տիրեց անմիջապէս։ Գիւղա-
ցիք երար ընկան։ Մի քամի երիտասարդներ վազեցին
զէնքերի։ և ո՞վ գիտէ, ինչպիսի արիւնհեղութիւն և
հետեւանքներ կարող էին առաջ գալ, եթէ Բժիշկն իս-
կոյն չկանչէր։

—Տղա՛ք, հանդա՛րտ, կուել պէտք չէ... Եթէ
բռնւեմ իսկ, ոչինչ ապացուցանել չեն կարող... Զի՞ս
բերէք։

Մինչև կը թամբէին և կը բերէին, մինչև գիւղացիք
իրար անցած՝ կը գային ողջունելու, աւարիներն արդէն
գիւղ էին համում,

—Այլ ես ուշ է, ըմբռնեց դրութիւնը Բժիշկը—առեւ-
մի վատ կը լինի, եթէ փախնելիս բռնեն ինձ։

Ապա, նախ գունատեց քիչ, ժպիտը դէմքին ձեռ-
քը պարզեց ինձ ու ասաց։

—Մնաս բարեւ... Բարեւիր ամէնքին և գործը տա-
րեք յաջող... Ինձ մատնովին որոնէ՛ք... Արմանում... .

Յետոյ ձիու սանձը վերցրեց, ուղիղ փողոցի մէջ-
տեղն անցաւ և ասաց գիւղացոց։

—Հեռացիք, որ ձեզ էլ վսաս չհամարի... թագնուի՛ր,
Վահան, և գիւղից դուրս գնա՛... Մի՛ յուսահատւէք.
յոյս ունիմ որ դատապարտել չեն կարող. ապացոյցներ
չունեն։

Վերջին խօսքերն էին դրանք, որովհետեւ այնուհե-
տեւ այլևս երբեք չյաջողւեց ինձ հանդիպել մեր բարեւ
Բժշկն։

Մինչ այդ, փողոցի ծայրից երեացին սւարիները—
Հասան-Օվա իջնողներն՝ իրանց սպայի առաջնորդու-
թեամբ։

Գունատ, ևս ու գիւղացիները փողոցի երկու կողմը
շարւած՝ նայում էինք այդ արտասովոր տեսարանին։

Դիմացից կատաղի՝ գալիս էին մի խումբ մինչեւ
վիզները զինւած, սևադէմ, վայրենի և փոշոտ ձիաւոր-
ներ. իսկ նրանց հանդէպ էր գնում հանդարտ ու ժըպ-
առուն, նիհարագէմ ու բարի հայեացքով մարդը, ետևիցն
էլ իր արևակէզ, ճակատը կնճռոտ քաջ ջորեպանը— Բժշկի
անբաժանելի ընկերը։

Բայց երեւի Բժիշկը նկատեց մեր դէմքը, նկատեց որ
գիւղացիներից շատերը, չնայելով պատւէրին, անհամբեր
շարժումներ էին անում։

— Ծօ' ... կանչեց մինչև իսկ մէկը, պլատի թողնենք որ մեր աչքի առջև բռնեն տանե՞ն ...

Բժիշկը դարձաւ, ձեռքով շարժում գործեց, ժպտեց ու քայլեց: Զիաւորները մօտենում էին: Սպան, որ առջեկց էր զնում, մի քանի հարցեր տւաւ ցածրում եղած գիւղացիների, բայց երկի գոհացուցիչ պատասխան չէր ստանում, որովհետև ջղայնօրէն ցնցում էր գլուխը և առաջ գալիս:

Վերջապէս նա նկատեց դէպի իրեն քայլող այդ փէսաւոր երիտասարդին, որ ձիու սանձը բռնած, փողոցի մէջտեղով և ոչ իսկ մի կողմը քաշւած՝ զնում էր անվըրդով:

Ձիու սանձը քաշեց, կուացաւ նայեց, յետոյ յանկարծ ուրախ ճիչ արձակեց, ձեռքով մի մեծ նշան արաւ ետեկց եկողներին՝ կ անդ առնելու, ապա ցած թռաւ, ձին թողեց և առաջանալով դէպի բժիշկը, կանչեց.

— Բա՛րե, դօքաօ՛ր էֆէնդի... Ես ձեզ էլ՛ փնտում:

— Իրա՞ւ... կանդ առաւ Բժիշկը—ահա ես:

Շունչերս բռնած՝ լսում էինք: Սպան մեծ քաղաքավարութեամբ կանգնել էր Բժշկի դիմայ, իսկ ուրախները, որոնք իջել էին ձիուց, կամաց-կամաց շրջապատեցին երեքին ես:

— Աեբաստիայի Զէրքէզ-իսուսրէվ փաշան, խօսեց սպան, մեր պայծառափայլ հրամանասարը, Տիվրիկ եկած, ձեզ պահանջել է իր մօտ ...

— Շատ լաւ, ասաց Բժիշկը—պատրաստ եմ... Անշուշտ մենակ ինձ է ուզել և ոչ ջորեալսնիս ...

— Ո՛չ, նրան էլ, ասաց սպան :

Յետոյ ճի նստեցին: Սւարիները շրջապատեցին նըռանց, ձիերի գլուխը դարձրին և հանդարտ հեռացան գիւղից:

Այդ էր բոլորը:

Դողդոջուն, ընկճւած ու վհատւած՝ կանդնած մնացի, մինչև որ անհետացան նրանք ծառերի ետևում. յետոյ լուռթեամբ նստեցի ճիս և չմոածեցի իսկ Բինկեանի մասին, այլ քայլեցի դէպի մեր գիւղը:

Այսպէս ուրեմն, ահա սկսեցին ձերբակալութիւններ ու հարւածներ, այն էլ մեր ամենալաւ կողմերից, մեր ամենամեծ ոյժերից խլելով: Ի՞նչ պիտի լինէր յետոյ. ո՞վ կարող էր երաշխաւորել, որ դորանով ամէն ինչ վերջանալու էր և ո՞չ թէ սկսելու:

Էշաչատուր պատւելի՞ն, Մարտիկը, վերջապէս ես ...

Տիուր մտածութիւններով, այլև զարդոյթով լի դէպի մասնիչը կամ մասնիչները, զանազան բաներ ծրագրելով՝ թողել էի որ ճիս քայլէր ուզածին պէս:

Ի՞նչ անել այժմ: Սկսել կոիւր, թէ թողնել որ մի առ մի կորդին մեր թևերը, իուն մեր նեցուկները: Ո՞րն էր լաւ ...

Ախ, մի խորհրդատու, մի խրատ տւո՞դ ...

Գնա՞լ, զինել ամէնքին, նախ՝ մի առ մի ոչնչացնել մասնիչներին, ապա իւրաքանչիւր նոր ձերբակալութեան եկողներին ջարդել, հալածել և կամ մի լընդհանուր հարւածով՝ ամրող մեր շրջանը ոտքի կանդնեցրած՝ վերիւ սարկութեան օղը, յայտարարել ապատամբութիւնը ...

Իսկ երգնկայում բանակած զօրաբաթինը ...

Իսկական գարունը նո՞ր էր սկսել մեր սարահարթի վրայ: Լեռների ձիւները հալւում՝ բազմաթիւ առուակներով ու ջրվէժներով մնացնում էին եփրատն ու նրա բոլոր ճիւղերը. ծառերը կանաչած, ձորամիջում արդէն ծաղկած, այդիների մշակութեան, հողը հերկելու, դաշտային աշխատութեան օրերն էին եկել:

Գիւղերն ամրող չութ ու արօրով դուրս էին թափւել արտերը. իսկ կանայք ու աղջիկները, որոնց վրայ են ծանրացած մեր կողմերում արդիների աշխատութիւնները — խմբավին ձեռնարկել էին տեհողային դործունէութեան:

Ես էլ գործում էի . երբեմն տան մօտի պարտէզում, երբեմն ձորամիջին : Յաճախ Բինկեան էի գնում, և, ինչպէս վճռել էին մեր ծնողները, Համբարձման տօներից յետոյ, անշուշտ տեղի էր ունենալու հարսանիք :

Երկար չէր տևել հարսնախօսութեան բանակցութիւնը : Հայրս ու հօրաքյոյս մի կիրակի օր Զարուհիի հօրն ու մօր հետ էին տեսնել, և անմիջապէս, երկու խօսք ասելուց յետոյ, համաձայնութիւնը ստացւել էր : Զարուհու հայրը մինչև իսկ ամբողջ գիւղում հարստանում էր, որ իր աղջիկը մեր տան նման հարուստ գերդաստանի հարսն էր լինելու, այն է «գնդապետ» Վահանի կինը :

Յիրաւի, հարուստ էինք մինք . այդ չպէտք է ուրանալ . հարուստ՝ որքան կարող էր լինել մի գիւղացի, այն էլ թիւրք կառավարութեան անընդհատ կեղեքող ձանկերի տակ :

Յամենայն դէպս, այժմ, որովհետեւ Զարուհին պաշտօնապէս ճանաչւած էր իմ հարսնացուն, ևս այլես առանց քաշւելու՝ շաբաթ մի քանի անգամ Բինկեան էի գնում և օրերով մնում այնտեղ : Մանաւանդ որ այդ գիւղի յեղափոխական զմնորների հրամանատարն էի և ինձ միշտ անհրաժեշտ էր լինում, աւելի լաւ կազմակերպելու համար գունդը, այնտեղ լինել :

Բինկեանի գունդը . . . Ո՞վ չզիտէր և չէր լսել նրա մասին : Ճշմարիտ է, Բժիշկն էր այդ գնդի հիմնադիրը, բայց Արմտանից Հաջի Վահանն էր նրան կազմակերպողն ու գօրեղացնողը այն աստիճանի, որ գունդի գոյութիւնն իսկ սարսափ էր աղջել թէ՛ տեղացի և թէ շրջապատող թիւրքերի վրայ :

Հաջի Վահան անւանեցի՛ ինձ : Այո՛, ևս «հաջի» էի — մահաեսի : Յաճախ նոյն իսկ «Հաջի-բէգ» էին կոչում ինձ : Պօլսից Երուսաղէմ էի գնացել և բութ ու ցուցամատիս մէջ տեղի թաղանթի վրայ կտտած կար փոքրիկ, երուսաղէմային խաչ :

Բինկեանի իմ գունդը բաղկացած էր թէև 200 հոգուց աւելի, սակայն միայն 100 հոգի ունէի — ամենաշուրջները, որնոք վիճած էին, պատրաստ՝ իմ առաջին կոչին և կատաղի ու անձնազո՞չ նւիրուած յեղափոխական գործին :

Այստեղ էին իմ յայտնի տամնապետները — Զաքէն, Խորէնը, յիմապետ Ճանիկը, Ղուկասը . . . ամէնքն էլ թէև ո՞չ բնիկ Բինկեանցի, բայց Բինկեանցիներից սիրւած անձեր, իւրաքանչիւրը՝ անցեալ ունեցող քաջեր :

Սարգիսը, այն երիտասարդը, որին աեղացիք «որիկայ» էին անւանում — մեր գնդի հոգին էր այժմ : Սուրենանշան, լրտես, ճարպիկ խուզարկու, անվախ որոնող այդ վատվուն մարդը ոչնչի՛ առաջ կանգ առնել չգիտէր : Զէր խմում այլես, սակայն ստիպւած էինք թողնել, որ իր թրքուհի սիրուհին ունենայ, լրտես ջորեպան Էօմարի կինը :

Ամէն գիշեր անհետանում էր անպիտանը . և անշուշտ Արմտան էր, իր սիրուհու մօտ : Թրքուհու ամուսինն այժմ գրեթէ պաշտօնական լրտես էր . գիշերները միշտ Մէրքէղ՝ գայմագամին էր գնում իր ցերեկւայ ժողոված լուրերը հաղորդելու . . . և Սարգիսը օգտում էր այդ բացակայութիւնից, նրա տեղը բռնելու համար սիրուն թրքուհու կողքին :

Ու երբ լուսաբացին, Արմտան եղած ժամանակ, առանց այլեայլութեան սենեակիս դուռը բաց էր անում ու ներս նետում և կամ Բինկեան եղածս օրը, ժայռի գլխին եղած՝ գոռում էր :

— Հաջի-բէգ . . . Հաջի Վահան —

Իմանում էի, որ անպիտանը իր թրքուհու մօտից էր գալիս և անշուշտ նոր լուրեր ունէր հաղորդելու . . .

Յիրաւի աղջպէս էր : Թրքուհին գիշերը Սարգիսին էր պատրում այն ամէնը, ինչ որ նիւթում էր ամուսին Էօմարը՝ ցերեկով : Պատրում էր ամէն մանրամասնու-

թեամբ, որովհետեւ իր սիրականը յատկապէս խնդրել էր լրտեսել, իմանալ և պատմել:

Եւ անա մի առաւօտ, գարնանային այն շքեղ, թարմ ու բուրմունքով լի առաւօտ, երբ ելել-լւացւել էի և տաք կաթ խմելով, հօրաքրոջս տան առաջ, թիսկեանում, խօսում էի նոր ներս մտած Զարուհու հետ—յանկարծ մեր դիմացն ելաւ քրտնաթոր և հեալով՝ Սարդիսը:

—Սարդի՛ս, գոչեցի—այդ դու ես:

—Հրամանք, Հաջի՛-բէգ. Արմտանուց եմ գալիս:

—Գիտեմ, ժպտացի ես. շա՛տ շուտ ես եկել այսօր,

—Վազեցի... Աւելի լաւ է ասել՝ վազել տւի... Ձիս յագնել է սաստիկ:

—Օհօ՛, ձիով ես, լրջացայ ես, ի՞նչ կայ որ:

Սարդիսը Զարուհուն նայեց և լուռ մնաց: Նկատեցի այդ: Երեկի ծածուկ բան ունէր ասելու:

—Ծօ՛, ծիծալեցի—չգիտե՞ս որ ես և Զարուհին մէկ ենք... «զոր Սատուած զուգեաց»... Խօսի՛ր. Կարեռը բան է:

—Շատ կարեռ... ասաց Սարդիսը և նստեց գետնի վրայ. նախ՝ Օվաջուքի քիւրդերը...

—Է՛... արի ես—Օվաջուքի քիւրդերն ի՞նչ:

—Շարժում են և յառաջ գալիս:

—Ծօ ի՞նչ կ'ըսես... իրաւ:

—Այս առաւօտ գետի միւս եղերքումն էին... Նըշան պատւելիին գնացի... Հրամայեց 50 հոգի պատրաստեն, իսկ քեզ լուր ուղարկեց, որ 100 թիսկեանցի էլ դու հանես...

—Երեկի ըստ սովորութեան եկել են տաւարներ տաշնելու — մէջ մտաւ հօրաքրոյս, որ տեսնելով Սարդիսի գալը, տնից դուրս էր եկել:

Մօտեցան մեզ նաև Մարիսմը, յետոյ պապիրոսը բերնին՝ հօրաքրոջս ամուսինը, իսկ տանիքի կողմից երեւաց Զարուհու հայրը:

—Ի՞նչ կայ. հարցրեց վերջինս:

—Օվաջուքի քիւրդերը... ասացի ես:

Ու ամէնքը հասկացան: Մոռացել է՛ինք, որ յիրաւի ժամանակն էր: Զէ որ ամէն տարի հէնց այդ ամսին էր, այդ քիւրդերը, կարծես՝ տուրք առնելու կանոնաւորութեամբ, գալիս մեր նախիններից ընտրում էին լաւ տաւարները և բոլորովին հանդիսաւ, բնական կերպով տանում:

Ո՛չ մի դիմադրութիւն չէր եղել: Գիւղացիք հաշւի առնել էին սովորել նրանց այդ վարմունքը և տարւայ այդ ամսին աշխատում էին գոնէ լաւ տաւարները նախիր չուղարկել: Բոլորովին չուղարկել էլ չէր կարելի: Քիւրդերը անշուշտ գիւղերի վրայ կը յարձակւէին և դա աւելի վաստ արդիւնք կ'ունենար:

Զարուհու հայրն ու հօրաքրոջը ամուսինը անվրդով մնացին: Հօրաքրոյս իսկ, ուսերը թօթւելով՝ ներս գնաց: Սովորական բան էր. ինչո՞ւ աղմէկել:

—Է՛... շարունակեցի ես Սարդիսն դառնալով—ի՞նչ ես կարծում, ե՞րբ արդեօք քիւրդերը կը մօտենան մեր նախիրին:

—Կէսօրից յետոյ կը հասնեն:

Լուսթեամբ կաթի բաժակը ցած դրի, ստքի ելայ, սիւնից կախած հրացանը ուսու առի, փամփշտականներս կապեցի, սրով գօտկաւորւեցի և դարձայ Սարդիսն.

—Ելի՛ր, Սարդիս, այն ցից ժայռերի վրայ... Ահա՛... և այնտեղից դէպի գիւղը, վարը՝ ձայնի՛ր ձանիկին ու շուկասին:

—Ի՞նչ ես ուզում անել, վահա՞ն, մէջ մտաւ Զարուհու հայրը՝ վախեցած:

Դայեցի նրան անվրդով:

—Ռւզում եմ այդ քիւրդերին հասկացնել, որ հարկաւոր է ամէն լրբութեանը չափ ճանաչել:

—Որիւն... աւելի... ծուլիս... արտասանեց հօրա-

Քրոջս ամուսինը—պէտք է... Շանը մինչև չծնծես, գուգութիւնը չի թողնի:

—Այո՛, սակայն... կմկմաց Զարուհու հայրը—կոխւ կը լինի, քիւրդերը շա՛տ են... և եթէ նոյն իսկ փախոնեն, հաւար կը հանեն ողջ Օվաջուք և մորեխի նման վրայ կը տանեն մող...

—Մորեխները ծուխից փախնում են... ասաց Սերովը աղան—Վառօդի ծո՛ւի... Ծեծէ՛ք... Ծեծէ՛ք... որ խրատի շունը... Մա՛րիամ, հրացանս բեր...

Սպա պապիրոսը դէն ձգեց, ոտքի ելաւ ու ներս մտաւ: Զարուհին զմայլմամբ նայում էր նրա ետևից:

—Դէ՛ն, Զարուհի, մօտեցայ ես նրան—ահա առաջին կոխւը..., Գնում եմ. գուցէ չվիրադառնամ կուից... գուցէ և դառնամ... Մնա բարե...

Յետոյ դարձայ հօրը և ասացի.

—Հա՛յր, թո՛յլ տուր նշանածիս համբուրել:

Հայրը ժապառն՝ գլուխը երերցից և ասաց.

—Հաւատամ հիմա, որ դա առաջին համբոյըն է... Համեցէք, անուշ լինի... քրնն է...

Ու Զարուհին գունատ՝ ընկաւ գիրկս:

—Ես էլ զամ... սկսեց հեկեկալ քաջ աղջիկը—ե՛ս էլ, —Ռուր, գոչեցի ապշած—կուի... աղջիկը կուի...

—Կուել է ուղում, ծիծաղեց հայրը—կը կուի անպիտանը, ինչեր տանս որ շանի... ո՛չ վառօդ է թողնում տանս և ոչ էլ գնտակ... օրը մի տաս հատ գղղըզած ճնճղուկ ու լոր է տալիս չներին ուտելու... երէկ էլ մի կաչաղակ էր խիել... կաչաղակ, գիտէ՛ք...

Ու քահ-քահ ծիծաղեց, մինչ ես կրծքիս էի սեղմում կարմրած աղջկան և համբուրում նրա մազերը:

Մինչ այդ, Սարգիսը այնպէս աշխոյժով կատարում էր հրամանս, որ ողջ գիւղը ոտքի վրայ՝ գէպի վեր էր նայում ու չէր ըմբռնում թէ ո՞վ էր այն առաւօտեան խոշոր թռչունը, որ ժայռի վրայ թառած՝ թոքերի ամբողջ ոյժով դոռում էր.

—Հէ-էյ, ձանի՛կ, Ղուկա՛ս, ձանի՛ ի՛ ի՛կ...

Այսուհետև ամէն ինչ կատարւեց արագ: Հինգ լուպէից յետոյ ձանիկն ու Ղուկասը ստացան հրամաններս և չէր անցել մի ժամ, որ գունդս խումբ առ խումբ, զինածած, պատրաստ, ձիաւորւած և ահարկու՝ գումարւում էր կամուրջի մօտ:

Համբուրեցի արտասեղղ Զարուհուն, Մարիամին, հօրաքրոջս, Զարուհու հօր ձեռքը սեղմեցի և Սերովը աշայի հետ գնացինք միանալու խմբին:

—Դարձի՛ր շուտով... Պահպանի՛ր քեզ... լոում էի ետևից Զարուհու ձայնը:

Դարձալ, ժպտեցի նրան: Սրտատրով՝ ձին հեծայ և անցայ դուրս թափւած գիւղացիների միջով:

—Օվաջուքի քրդերին հալածելու են գնում... զիտէին արդէն ամէնքը:

Կամուրջի մօտ հասած, ողջունեցի գնդին, առաջ անցայ և գոչեցի.

—Տղա՛յք, ցոյց տանք այսօր, որ գիտենք մեռնել յանուն մեր իրաւունքների և յանուն ազտառութեան... .

Զգիտեմ ո՞րտեղց էր այդ երգը — յե՛տոյ ասացին ինձ որ Վանի կողմերից էր եկած — հնչեց յանկարծ գնդի մէջ մի իրոխտ ձայն և երբ կամուրջն էինք անցնում, խմբովին՝ ժայռերի մէջ թնդաց. —

Երեն ելաւ, Զէյթունցիներ.

Դէ՛ն, ձի՛ հեծնենք, առնե՛նք զէնքեր, դիմենք յառաջ... *

Պէտք էր տեսնել թէ ինչպէս, նոյն իսկ երգը չիմոցողները, ձգնում էին հետեւել, ձայն էին բռնում, կըրկում էին խօսքերը, խռնուում էին երգողների շուրջը... .

Բինկեանն ամբողջ երբեք չէր տեսել այդպէս օր:

*) Երգը գրել է վեպիս նեղինակը, 1883 թվին: Եղանակը առնուած է «Զէյթէֆէր» օպերէիցից:

Բարձրից շարժւում էին թաշկինակներ, չորեր ու ձեռագերք : Ամփիթէատրածե, իրար գլխի եղած տներից, ժայռակի ծայրերից մանուկ, կին, ծերունի, գոյնզգոյն հաւագուսաներով կանգնած՝ դռում էին, գլխարկները ցնցում և մենք անցնում էինք դոփիւններով՝ կամուրջի վրայից, անցնում ողեւուած, վճռական, և գնում մեր առաջին կոխը մղելու դարեւոր բռնակալութեան, դարեւոր հարստահարութեան և անարդ լուծի դէմ

Վանիմ, ազնիւ ու մեծ էր այդ բոպէն,

Երբ դիւղը անհետացաւ մեր աչքից և ողեւորիչ երզը գաղարեց, մի բոպէ կանգ առի. հրամայեցի նորից ստուգել զէնքերը, պատրաստ լինել, յետոյ կարգադրեցի որ զոյդ-զոյդ քայլեն (Ճանապարհը նեղ էր) և ինքս առաջ անցած՝ Սարգսին նշանով կանչեցի ինձ հետ զնալու :

—Սարգի՛ս, հարցրի երբ մօտեցաւ ինձ, ինձ թւում է որ դու ուրիշ բան էլ ունէիր ասելու :

—Այս՛, արեց Սարգիսը—նա այնքան շտապողական չէր :

—Բայց նախ ասա՛, ո՞րտեղ ենք հանդիպելու մենք նշան պատւելիին և իր խմբին :

—Զորագլխին... Սուրէնն է առաջնորդում :

—Լաւ, սովորական տեղը զիսե՞ս դու :

—Գիտեմ. քիւրդերը միշտ այն կողմից են գետն անցնում :

—Սա այժմ միւս ասելիքու... Թրքուհի՞դ պատմեց դարձեալ, ժապեցի ես

—Այս՛... Էօմարը երէկ իր տանը ժողով է ունեցել. եղել են Սրմտանի թիւրքերից ազգեցիկները... Վճռել են քեզ, նշան պատւելիին և Հայերից շատերին՝ մատնել կատալարութեանը, իր «Քօմիթաջի»ներ :

—Այդպէ՞ս... ասացի գողդոջուն — ուրեմն պիտի սովասել ձերբալութիւնների :

—Դեռ ո՞չ, ժպտեց Սարգիսը—թուղթ են զրել.

հանրագրութիւնն... Ստորագրել են բոլոր թիւրքերը, որ Մէրքէղ ուղարկեն Էօմարի ձեռքով :

—Չե՞ն ուղարկել դեռ :

—Ո՞չ... Սյսօր Էօմարը մտադիր է մի քանի հոգու էլ ստորագրել տալ... Մի քանի Հայերի...

—Ինչ ասացի՞ր... գոչեցի ես զայրացած—Հայերի՞ :

—Այս՛ :

—Դու իբր կերպով ստում ես, Սարգիս, զգո՞ւ կաց... Ո՞ր Հայը այդպէս չնութեան ընդունակ կը մինի:

—Եթէ ստող կայ, Հաջի-բէգ, սասց Սարգիսը կարմրած—դա ես չեմ լինիր, ովզ թրքուհին :

—Սուտ է, ստում եմ քեզ... թրքուհին ստում է. մի՛ հաւատալ :

—Ես էլ չաւատացի և... ապացոյց պահանջեցի... խոսացաւ ինձ... Խոսացաւ այս երեկոյեան իսկ ձեռքս տալ հանրագրութիւնը :

—Կաղմած և ստորագրած հանրագրութիւնը... Այս՛... Սրեմոցցին... Հանրագրութիւնը...

իրաւունք չունէի չաւատալ Սարգիսն, որովհետեւ մի անդամ էլ նո այդպէս՝ յաջողւել էր մեզ ըերել Էօմարի տրած մի տեղեկադիրը, Մուում էր ինձ սպասել: Խընդիք ծանր, լուրջ կերպարմաք էր ստանում :

—Լաւ ուրեմն, Սարգի՛ս, ասացի քիչ լուռթիւնից յետոյ եթէ թրքուհիդ այդ հանրագրութիւնը ձեռքդ առաջ, ես ինքս 50 ոսկի կը տամ քեզ, որ յանձնես թրքուհուն :

Սարգիսը ժամանելով՝ ցնցեց գլուխը :

—Ո՞չ, ասաց նա—թրքուհին ինձ չափազանց է սիրում և սպին նրան կը վիրաւորի... Բայց, եթէ թոյլ կը տաք, ոսկու փոխարէն ես մի լաւ ընծայ կը տամ նորան :

—Ինչ ընծայ:

—Հրաման տէք, ասաց երիտասարդը—որ իմ թրք-

քուհին ազատութիւն ստանայ . . . կրտեսը պիտի սպանւի :

Ծնցւեցի : Սարգիսը իրտւունք էր խնդրում էօմարին

սպանելու և դա ընծայ էր համարում թրքուհու համար :

Լուռ մնացի : Խնքս ո'չ մի հրաման չէի կարող տալ,

սակայն զգում էի որ Սարգիսն իրաւունք ունէր :

Ժամանակ էր մեր գիւղերն ազատելու վտանգաւոր

լրտեսից :

Արագ, մի ձմեռւայ ընթացքում, յաջողւել էր մեզ
յեղափոխական գործին այնքան զարկ տալ, նրա աղղե-
ցութիւնը ա'յն աստիճան մեծացնել, որ գարնան սկիզբ-
ներին Սրբտանն ու շրջակայ 5-6 հայաբնակ գիւղերը
գտնուում էին հայկական ժամանակաւոր կառավարու-
թեան ձեռքի տակ,

Ժողովուրդը պատրաստ էր : Ճնշումը այնքան ան-
տանելի էր եղել, հարստանարութիւններն ու Մէրքէզի
տւած տանջանքները այնքան անհաշիւ, որ երբ եռան-
դուն գործունէութեամբ զինեցինք մօտ 3-400 քաջ երի-
տասարդների, կանոնաւոր գնդերի բաժանելով՝ գրեթէ
մի վաշտ ստեղծեցինք—նրանց միջից ընտրած 50 կըտ-
րիճների յանձնւեց տեղական ոստիկանութեան գերը,
առաջնորդութեամբ «ոստիկանապետ» Սուրէնի :

Այլևս ո'չ մի Ամրտանցու դատ Մէրքէզ չէր գնում :
Վէճ, կոիւ և այլն, վճռուում էր մի քանի հոգուց բաղ-
կացած դատարանում : Եւ եթէ կային դեռ աղաներ ու
մենում հպատակել հայկական ժամանակաւոր կառավա-
րութեան—խնայել չգիտէինք : Պատիժը այնքան խիստ էր
Մէրքէզ գիմել :

Միւգիրներն էլ մեր ձեռքին տակն էին և դատաս-
տական խորհուրդների անդամ : Գիւղական պահակները
մեր երիտասարդներից էին : Ծերունիներից շատերն էլ
ընտրած էին դատաւորներ,

Այդ բոլորը այնքան նոր, այնքան գեղեցիկ էր,
որ ոգևորութեանը չափ չկար : Նոյն իսկ իր նորութեամբը
նա հնագանդութեան էր հրաւիրում շատերին : Բացի գը-
րանից, երբ գործնականում տեսնում էին որ նոր դա-
տարանները արագ ու իրաւացի վճիռներ էին տալիս,
տարանները արագ ու իրաւացի վճիռներ էին տալիս,
վճիռներն իսկոյն գործադրում ու կաշառք, անիրաւու-
թիւն, հարստանարութիւն և տանջանք այլևս կապւած
չէին դատական գործադրի հետ—հիմուում էին, ոգեսորւում :

Եւ այժմ ահա, եկել էր ժամանակ ցոյց տալու, որ հայ-
կական ժամանակաւոր իշխանութիւնը գիտէր պաշտպա-
նել իր ժողովրդին՝ աւազակների դէմ :

Արմտանի վարչութիւնը մի նիստով՝ վճիռ էր ար-
ձակել գիմադրելու 0վաշուքի քիւրդերին : Անմիջապէս
նշան պատւելու հրամանով, գիւղից դուրս էին եկել 50
նշան պատւելու հրամանով, գիւղից դուրս էին եկել 50
նշան պատիկաններն իրանց լիմանութեանով և այժմ «զօրքի հրա-
մանատարը»— ևս, իմ զօրքով զնում էի զօրացնելու
պաշտպանութիւնը :

Մենք միմեանց հանդիպեցինք գետից մի ժամ հե-
ռաւորութեան վրայ, մի սարահարթում և ուրախ կան-
չերով դիմաւորեցինք իրար :

Լու զինւած ոստիկանական խումբը, առաջնորդու-
թեամբ նշան պատւելու և Սուրէնի, մեղ տեսնելուն պէս
կանգ առու և զիմաւրկները շարժելով ողջունեց :

—Պատրաճառ . . . հարցրեց Սուրէնը :

—Բոլորովին, ասացի ես :

—Տղա՛յք, խօսեց նշան պատւելին, երբ մեր գուն-
դը հստաւ և միացաւ ոստիկանական խմբին—0վաշուքի
քիւրդերը ամէն տարի, պարբերաբար, զալիս գողանում
զիւրդերը ամէն տարի, պարբերաբար, զալիս գողանում
և յափշտակում են մեր տաւարները : Ո'չ գանգաստ, ո'չ
և յափշտակում են մեր տաւարները : Ո'չ գանգաստ, ո'չ
և ոչ աղաչանք աղդեց նրանց վրայ : Թիւրք կա-
բողոք և ոչ աղաչանք աղդեց նրանց վրայ : Թիւրք կա-

ձակումներին և վճռեց նրանց հալածել այնպէ՛ս, այնքա՞ն
եռանդով, որ այլևս չհամարձակեն ուրիշի մալն՝ իրենց
հալալ համարել... Հաւանական է, կոիւ է տեղի ունե-
նալու... Հարւածեցէք անխնա՛յ, կատաղի և առանց
յետ ընկրկելու... Վատ է փախչողը, նահատակ կը կոչւի
ընկնողը. ազատութեան սուրբ և անմոռանալի նահա-
տակ... Ձե՛ղ տեսնեմ, ալայք, պատրա՞ստ էք:

—Պատրա՞ստ, պատրա՞ստ... կանչեցին ամէնքը:
—Լաւ ուրեմն. ոստիկանական խումբը առաջ և
միւսները հովահարածե ետեւից...

Եւ լուռ, տեղի ունեցաւ շարժում. ապա, Սուրէնի
և Նշանի հրամաններով՝ ոստիկանները շարք կազմած
առաջ անցան, ես տարածեցի իմ ձիւաւորներին գետի եր-
կարութեամբ և կիսալուսնածե. յետոյ հրամայեց պատ-
րաստ ունինալ հրազենները, և դիմեցինք դէպի գետը:
Կէսօրը մօտ էր, սկսեցինք վար իջնել դէպի դաշտը:
Ծառերն ու թփուտները մեզ քիչ ծածկում էին, սակայն
արդեւք չէին լինում տեսելու թէ ի՞նչ էր կատարւում
Եփրատի փողփողուն ջրերի մօտ:

Այստեղ, գետի ծանծող հունի երկու ափերի վրայ
տեսնուում էին քիւրդերի խմբերը: Կիսովին անցել էին
արդէն և սպասում էին միւսների անցնելուն: Քիւրդերի
հրացանների փողերը փայլվում էին, իսկ նրանց ճիշն ու
աղմուկը, միւսնաց ձայն տալը՝ հետզնետէ լսելի էին լի-
նում, քանի ցած էինք իջնում:

—Տղա՛յք, դարձաւ մեզ նշան պատւելին — մինչեւ
իջնելը՝ ոչ մի՛ կրակ!... Երբ վերջին ժայռը կ' անցնենք,
մեր գունդը ուղղակի կը յարձակի, իսկ վահանը իր
գունդը կը տարածի գետեզրի ուղղութեամբ դէպի քիւր-
դերի կողմը և կը սկսի անխնայ կրակ!... Սակայն, առանց
նշանի, ո՛չ մի գնտակ!... Նշանը ես կը տամ առաջին
գնտակն արձակելով... յառաջ, լուռ և առանց աղմուկի:
Քիւրդերը եթէ նոյն իսկ տեսնէին մեզ, անշուշտ

երբեք մտքերովը չէր անցնիլ, թէ երբ և իցէ Հայը կա-
րող էր մտածել՝ յաղձակւելու իրանց վրայ: Ուստի և
ապահով. շատ հաւանական է, որ նրանցից մի քանիսը
տեսել էին մեղ—սակայն շարունակում էին միմեանց ձայն
տալ, միւսնաց օգնել անցնելու...

Եւ նիդակները երկար ու սրածայր՝ ցնցում էին
իրանց ծայրի փնջիկները:

Նշան պատւելին ամէնից առաջ իջաւ գետելորի տա-
փարակի—ծառաստանի մէջ, սպասեց որ իր գունդը իջնի
ու համարձակ գուրս նետեց ծառերի տակից:

Չեռքով շտապեցի մերոնց, ցոյց տւի տարածւելու
ուղղութիւնը:

Յանկարծ գետն անցած քիւրդերը ապշած կանգ առին՝
տեսնելով մեր զինւած խմբերը:

Նոյն քարացան, յետոյ նրանցից մէկը ճին քշեց դէպի
նշան պատւելին, տասը քայլի վրայ կանգ առաւ և գո-
չեց.

—Կո՞ո՛, գուք ո՞վ էք, քիւրդե՞ր էք...

Կարծում էր գուցէ թէ քրդական մի ուրիշ ցեղ էր,
որ եկել էր նրանց ձեռքից աւարը խլելու:

—Դո՞ւք ով էք, ինչ գործ ունիք մեր հողերի վրայ
կանչեց նրան Նշան պատւելին: — Այսիջապէս շուռ տուր
ձիուդ գլուխը և ետ դարձէք, քանի բոլորիդ դիմակնե-
ծով չինք սեացըրել գետի ջուրը... Ի՞նչ, կարծեցիք որ
այս տարին էլ կարող էք խլել մեր տաւարները... Ե՞տ,
ասո՞ւմ եմ...

Քիւրդը մի ակնարկ ձգեց մեզ վրայ և ձեռքը տա-
րաւ հրացանին: Նշան պատւելին արագութեամբ տարր-
ճանակը հանեց և կրակեց նրա վրայ...

Ու դրան թէ ինչ յաջորդեց — անկարագրելի է:

Անմիջապէս ճաթճթոյն ընկաւ ձորը, ծուխ, ճիշ,
աղմուկ, ձիերի ծառանալ, յարձակում, փախոււստ...

Քիւրդերը անակնակի գալով՝ հազիւ կարողացան
ժողովւել, մի քանի անգամ գնտակ արձակել:

Գետի միւս կողմ եղածները, ստանալով մեզնից բաւական գնտակներ, խառնւեցին ու անկարգ, տակն ու վրայ՝ փախան: Այս կողմ եղածները, գետը մտնելուց զգուշանալով և գիտենալով որ մի առ մի կը սպանէին այնտեղ—ջրի ուղղութեամբ նետեցին՝ դէպի վեր և հաւածւած մեր գնտակներից՝ շտապիլով ապաստանեցին մի լեռան մէջ...

Այնքա՞ն կատաղած էինք մենք, այնքա՞ն ոգեսրւած՝ որ ոչ մի բովէ կանգ չառնելով՝ պաշարեցինք լեռը և վճռեցինք բոլորին էլ մի առ մի սպանել:

Սկսւեց կանոնաւոր պաշարում: Լեռան բոլոր անցքերին վրայ պահակներ դրինք, պայտածե շղթայ կապեցինք զինւորներով և այնտեղ ես նո՞ր ձեռնարկեցի ըստուգելու: թէ ի՞նչ կորուստ էինք ունեցել:

Ամենամեծ ուրախութեամբ ճշտեցի որ միայն երկու հոգի թեթև վէրքեր էին ստացել: Իսկ թէ գետափում ընկնող քիւրդեր եղել էին—այդ մեզ անհնար եղաւ իմանալ: Հաւանականօրէն սպանւածներ կը լինէին, որովհետեւ բանից դուրս եկաւ, որ իմ զինւորներից իւրաքանչւրը առնւազն 10 փամփուշտ էր բանեցրել:

Յամենայն դէպս, կազմելով յիսնապետներից մի պատերազմուկան խորհուրդ, վճռեցինք թէկուզ մինչև երեկոյ՝ պաշարած պահել լեռը ապաստանող քիւրդերին և եթէ նոյն խակ անձնատուր լինէին՝ ոչ մէկին կենդանի չը թողնել: Մեղնից ո՛չ ոք չկամնեցաւ ներողամիտ, զգոյշ, խոնեմ լինել: Այդ աւազակները չափաղանց և շատ վտագուց հարստահարում էին մեզ և հանգստութիւն չէին տալիս:

Հարկ եղաւ մարդիկ ուղարկել գիւղերը՝ ուտելիքի համար: Կանոնաւոր բանակած՝ նստել էինք:

Կէսօրից յետոյ, պաշարւած քիւրդերից մի քանիսը փորձեցին գնտակ տեղալ մեզ վրայ: Բայց այնպէ՛ս լաւ պատասխան ստացան, որ այնուհետեւ, ո՛չ մի գլուխ երևան չեկաւ:

Մնշուշտ անձնատուր էին լինելու: ուտելու ոչինչ չունէին: լեռան վրայ ջուր չկար:

Հրձւան գրով հանգստանում էինք, երբ յանկարծ Մէրքէզի կողմից սրարշաւ երևան եկաւ մի խումբ ձիւտոր զօրք, մի յիսնապետի առաջնորդութեամբ:

Զարմացանք: Ո՞վ էր լուր տւել մեր արածների մասին:

Սակայն եկող զինւորները ո՛չ մի թշնամական դիրք չբոնեցին: Նրանց յիսնապետը մինչև խակ կանգ առնել տւալ իր դունդը բաւական հեռու: յետոյ, մի զինւոր, սպատակ թաշկինակ շարժելով՝ առաջ եկաւ դէպի մեզ:

— Ի՞նչ ես ուղում դրանք, գոչեցի ես գրգռուած:

— Տղայք, գոչեց պատւելին — թէկ պատրաստ և զգոյշ մնացէք, սակայն թշնամական ո՛չ մի ցոյց, ո՛չ մի շարժում, մինչև տեսնենք թէ ի՞նչու են եկել և ի՞նչ են ուղում:

Դէպի եկող զափթիէն գնաց Սուրէնը և կանչեց, ձայնը լսելի անելու չափ հեռաւորութիւնից:

— Ի՞նչ ես ուղում:

— Ձեր զլիստորի հետ խօսել է կամենում մեր յիսնապետը,

— Թո՛ղ գայ— ասաց Նշան պատւելին, որ Սուրէնի ետեկից մօտ էր գնացել:

Զափթիէն թաշկինակով նշան տւալ, յետոյ յիսնապետի թաշկինակով նշան տւալ և քաղաքավարութեամբ բարձելով ասաց:

— Մենք, էֆէնդի, ուղարկել ենք գայմակամի կողմից: Լուր հասցրին որ Օվաջուքի քիւրդերը յարձակել են ձեզ վրայ: Գայմակամ էֆէնդին հրամայից յիսուն զափթիէների, իմ առաջնորդութեամբ դալ ձեզ օգնելու և քրդերին հալածելու:

— Լաւ ուրեմն, ժպանց հեգնօրէն պատւելին— չնորակալ ենք ձեր օգնութիւնից: բայց ինչպէս տեսնում

էք, ոչ միայն հալածել ենք, այլ և պաշարել նրանց այդ լեռներում:

— Իրա՞ւ... զարմացաւ յիսնապետը :

Յետոյ շուրջը նայեց, մեղ հետ մօտ եկաւ մեր խըմբերին, ուշադրութեամբ քննեց ամէն ինչ ու գոչեց.

— Իրաւ որ, մեր կառավարութեան համար փառք ու պարձանք է այս տեսակ քաջ ու զինւած ժողովուրդ ունենալը... Որքան էլ լաւ և առաս գէնքեր ունիք...

Սպա, կեզծաւոր ժափար դէմքին, առաջարկեց թոյլ տալ իրեն նստելու քիչ մեղ հետ:

— Եթէ թոյլ կը տաք, ասաց նա—մի պապիրոս կը ծխեմ ձեղ հետ, քիչ կը խօսենք, կը հանգստանանք:

— Համեցէ՞ք... հրաւիրեց պատւելին:

Սպա դարձաւ տղայոց՝ հայերէն լեզով.

— Տղայք, աշքներդ պետութեան զինւորների վրայ, քիչ հեռու՝ պատրաստ մնացէք:

Մինչ այդ, յիսնապետը իջաւ ձիուց: Մենք էլ ցած իշմաք և չորս հոգի նստեցինք մի չոր տեղ:

Յիսնապետը ծխեց, մեղրածոր ծիծաղով գովեց մեր կարիճներին, խիստ դէմքով հայնոյեց քիւրքերին ու նըրանց աւազակարարոյ բարքը. դտաւ թէ հարկաւոր էր պատժել նրանց և թէ մենք այսպէս լաւ դաս էինք տւել որ այլես չէին մոռանալ... Սակայն—աւելացրեց նա—որանով պիտի բաւականանայինք և թողնէինք որ անպատճերը «կորսւեն-երթան»...

— Դիտէ՞ք, շարունակեց նա լուրջ դէմքով—այդ քիւրդերը սաստիկ վրէժինողիր են լինում... որդւոց որդի չեն մոռանալ. եթէ, Սատւած ո՛չ անի՝ սպանէք նըրանցից մէկին... խկոյն հազարներով կը հաւաքւեն ու այնպէս վրայ կը տան, որ ո՛չ միայն ձեր կարիճներին ու իմ զափիթիչները, այլև Երզնկայից եթէ մի վաշտ զինւոր դայ, նրանց աւելածութիւնների դէմն առնել չենք կարող... Իմ խորհուրդս է թողնել՝ որ կորսւեն-դիան.

Լաւ պատիժ ստացան, դա իրանց խրատ կը լինի... Գայմակամն էլ հրամայեց ինձ ասել ձեզ, որ կառավարութիւնը դժգո՞ն կը լինի, եթէ դուք քրուերին գրգուէք... Այսպէս չէ, օղո՞ւմ...

Ինդիրը յիրաւի լուրջ կերպարանք էր ստանում: Յիանապետը իր եղւիտարար տուած, քաղցր արտայայտւող խօսքերով՝ գայմակամի զրեթէ հրամանն էր մեղ հաղորդում: Պարզ էր: Եթէ քիւրդերին պաշարելը շարունադում: Պարզ էր, երեք նոյնիսկ հրաման տւած լինէր եկող զափիէինք, միանալ քիւրդերի հետ և մեղ կոտորել:

Ես ու Նշան պատւելին սկսեցինք հայերէն խօսակցել: Յիսնապետը ներողամիտ ժպիտով թողեց որ խորհրդակցինք, ու, պապիրոսը բերմին՝ շարունակում էր պաշարւած լեռը զինել և պաշարող մեր զինւորներին:

— Վահան, ասաց ինձ պատւելին—հասկացար կարծեմ այս մարդու ասածները... Ինձ թւում է, որ ստիպւած համազանդւել առաջարկին... Դիմադրել կառավաճենք համար այսպիսի չնշին հանգամանքներում՝ կարող է քութեանը այսպիսի չնշին հանգամանքներում՝ ինչ ևս կարծում: Ժանր հետևանքներ ունենալ... Ինչ ևս կարծում:

Պահ մի լուռ, մտածեցի: Ինձ ևս թւում էր, որ գրութիւնը կարող էր բարդանալ, գուցէ և ստիպւած լինէնք զափիթիչների դէմ կուի եկնել:

— Պատւելի, զիջենք... Ինչ որ աէտքն էր՝ արինք, քիւրդերին զսպիցինք, մեր տաւարները աղատեցինք... Եթէ չհամաձայնւենք, գուցէ վատ վինի:

— Իսկ գո՞ւ ինչ կ'ասես, Սուրէն:

— Զիշինք, ասաց նա—մեր նպատակն էր վախ աղլել

աւաղակներին և կատարեցինք այդ:

Նշան պատւելին քիչ լուռ մնաց, յետոյ ոտքի եւս և ասաց մեղ:

— Փողովեցէք ու իւրաքանչյուրը թող իր տեղը վերադառնայ:

Սպա դարձաւ յիսնապետին և ասաց.

— Ծնորհաշուք Գայրակամի կամքը մեղ համար հրաման է : Պաշարումը վերցնում ենք և յոյս ունենք որ ինքը—կառավարութիւնը կը շտապէ պատժել աւազակներին :

— Անչո՛ւշտ, անչո՛ւշտ, վեր թռաւ յիմնապետը—աֆէրի՛մ, կարիճներս . . . Գայմակամէֆէնդին շատ ուրախ պիտի լինի ձեր վճռից . . . Ծնորհեցէք ինձ ձեր անունը :

Պատելին քիչ վարանեց, յետոյ ասաց

— Հասան-Օվացի Կարապետ . . .

— Հասան-Օվացի՞ . . . ասաց կասկածաւորութեամբ յիմնապետը . սակայն չհամարձակեց այլևս բառ աւելացնել—իսկ այս էֆէնդիներին :

— Ակսեցի Մարկս, ասացի ես :

— Տինկեանցի Սուրէն, կամչեց Սուրէնը, առանց ծածկել կամենալու իր անունը :

— Ծա՛տ ուրախ եմ . . . Ուրեմն ողջամբ մնաք . պիտի շտապն այս ուրախ լուրը հաղորդել Գայմակամէֆէնդուն :

Սակայն, պատրւակելով որ ամրացնում էր թէ իր գոտին և թէ ձիու փորկապը, աչքի տակով ստուգեց որ մեր խմբերը հետզետէ վերացնելով պաշարումը՝ հեռանում են . ապա ձի նստաւ, կեղծ ժավիտով ողջունեց և քիչ յետոյ բոլոր զափթիճների գլուխն անցած՝ հեռացաւ :

Այդպէս վերջացաւ այդ արշաւանքը և այդ օրւանից սկսեցին այն մի շարք խիստ խուզարկութիւնները, որոնց նպատակն էր երեսն հանել նախ արշաւանքի դըլ-խաւորներին և ապա մի առ մի կորզել յիմնապետի տեսած դէնքերը :

Գայմակամը սոսկացել էր յիմնապետի տւած տեղեկագրից : Ինչպէս, գեաւուրները, չնայելով որ ամեն տարի հաւաքւում էր նրանցից մինչև յետին դանակը—այժմ այդպէս լաւ զինւած լինէին, այն էլ իր քթի տակ : Զինւած այնքան, որ հալածէին քիւրդերին, սոսկում աղդէին, պաշարէին անգամ . . .

Ինչ կ'ասէին Երգնկայում, եթէ լուրը հասնէր այնտեղ : Եւ անշո՛ւշտ կը հասնէր : Գեաւուրներն ապստամբութեան պատրաստութեան մէջ էին ուրեմն . կօմարի յայտնութիւնները ստուգւում էին . Սրմտան և շրջակայգին կիւղերում «քօմիդաներ» գոյութիւն ունէին . քիւրդին հալածողը՝ մի օր կարող էր և կառավարութեանը դէմ դնել, նրա գայմադամին սպանել, մէրքէղը քարուքանդանել . . .

Այդպիսի մտածումներն էին, որ գայմակամին ստիպեցին անյապաղ եռանդուն միջոցների ձեռնարկին :

Թշւառ գէր, հեշտակեաց պաշտօնեացին սուելի սարսափ աղդեց մանաւանդ երբ միւս օրը առաւօտեան լուր հասաւ իրան, որ Սրմտանում, իր լուսու կօմէրը այդ գիշեր սպանւել էր :

Եւ յիրաւի, նոյն երեկոյ, հայկական ժամանակաւոր կառավարութիւնը վճռել էր մատնիչի մտհը :

Պատժի գործադրութիւնը ստանձնեց Սարդիսը և մինչև իսկ բարկացաւ, երբ մտածեցինք ուրիշին յանձնել :

Առանց այլեայլութեան, ներս նետեց դիւտնատօնն և գուցեցի կատաղի :

— Ե՛ս պիտի սատկեցնեմ կօմէրին . ապա թէ ոչ, հաւատացէք, ընդունակ եմ սպանելու նրան, ուլ իմ տեղը բռնի :

Նոյն զիշեր իր անկողնին մէջ սպանւեց կօմարը : Առաւօտեան մի սոսկալի իրարանցում՝ հասկացընց լինձ, որ սպանութիւնը կատարւած էր :

Սակայն, երբ անվրդով ցած էլ իջնում, հայրս, սոսկումով լի հայեացքով ներս մտաւ և ասաց :

— Վահա՞ն, կօմարի տունը հրդեհուում է .

— Ինչպէս . . . բացականչեցի—հրդեհուում . . .

— Այդ . . . Ինքը-կօմէրը սպանւած է անկողնի մէջ . յետոյ, անից դուրս սոսկուղ կինը պատմել է, որ հրդեհն ակսել է անկողնից . . . Եւ այժմ ամբողջ տունը կրակի մէջ է :

Սրտատրոփի և վախեցած՝ փողոց նհոււեցի : Անսպի-
տա՞ն, անսպիտա՞ն Սարգիս : Սպանելը բաւական չէր,
տունն էլ հրդեհել էր :

Երբ կրակի տեղը հասայ, իսառն ի խուռն ձայներ,
Թուրքերի կանչեր լսեցին : Ամբողջ թաղը ոտքի վրայ
էր : Հայերը հասել՝ ճգնում էին այրող տունը կղզիացը-
նել, հրդեհը մարել . թաղի թուրքերը խումբ-խումբ կիտ-
ւած՝ սպաննալից հայեացքով նայում էին Հայերին, իսկ
հօմերի կինը . կրակի մօտ, ճշում էր և լաց լինում...

Մի կերպ կրակը հանգցրին : Յետոյ թուրքերը ներս
մտան և փողոց հանեցին հօմերի կիսովին այրած գիտկը
և այլտեղ էր, որ երեան եկաւ թէ ինչպիսի մահով էր
սպաննած լրտեսը :

Մի գնատակ ծակել էր գանդը, իսկ գանդինի մի քանի
հարւածներ սրտին՝ վայրկեանսպէս վերջ էին տւել նրա
կեանքին :

— Ահա, գեաւուրնե՛ր, գոռաց վերջապէս մի թուրք
— այժմ սկսում էք կոտորել մե՞զ, «քօմիդէ» էք սարքել,
տանջանքներով ճնշում էք և այժմ էլ մէկ-մէկ սպանում
էք և մեր անե՞րը վառում...

— Զա՛յնդ, սրիկա՛յ . . . լսեց յանկարծ Հայերի միջից
մի ձայն—ուզում ես իմանալ թէ ո՞վ է այդ շանը սատ-
կացրել . . . ես կ'ասեմ քեզ այդ :

Յետոյ բազմութիւնը ետ քաշեց և անսպիտան Սար-
գիսը, մինչեւ որ նրան կը բանէին, մէջտեղ նհոււեց ա-
տրճանակը ճեռքին ու գոչեց :

— Ե՛ս եմ սպանողը . . . թէ սիրո ունիք՝ համե՛ցէք . . .

Սպա մի արհամարհական հայեացք ձգեց վախեցած
թուրքերի վրայ, երկու սատիւնով թուաւ իրար անցնող
բազմութեան մէջ ու անհետացաւ :

— Բոնեցէ՛ք, բռնեցէ՛ք . . .

Սարգիսին բանելու համար այդ կոչը բաւական չէր:
Եւ վերջապէս ո՞վ էր թիւրքերից այն քաջը, որ տեղին
անդամ շարժւէր .

Հեռացայ թաղից : Թիւրք կանանց ճիշն ու լացը,
տղամարդկանց յուսահատ դէմքերը և մանաւանով սպան-
ւածի խանձւած, տեղակեղ ջրալից փշտիկներ դուրս ալ-
լող մարմինը՝ անտանելի դարձան :

Անմիջապէս ձի հեծայ և Փոքր-Արմատան դիմեցի :

Հայրս, հօրեղապայրս, գիւղի հայ բնակիչները, մտա-
ծելով դէպքի հետևանքների մասին, սուկրան մէջ էին :
Շատ լաւ գիտէին թէ թիւրք կաւալարութեան կաշա-
ռակեր և խայտառակ պաշտօնեաների ձեռքում այս եղածը
ինչպիսի գործիք էր դառնալու :

Փոքր-Արմատան զնացի ախուր, մտախոն : Զգում էի,
որ անհրաժեշտաբար տեղի ունեցող սպանութիւնը, խառ-
նելով քիւրդերի դէմ եղած արշաւանքի հետ, իրանց
ետեկց բերելու էին մի շարք սարսավիներ :

Արդօք լաւ արինք . հսարաւոր չէր ուրիշ միջոց
գործազրել . գոնէ սպասել որ թիւրք լրտեսը հեռանար
գիւղից և ճանապարհին սպանել տալ :

Միւնոյն է . դարձեալ մեղքը Հայերի վրայ պիտի
նետէին . պիտի կեղեքէին և տանջէին ո՞չ միայն մեր
գիւղը, այլև, յանցաւորը որոնելու պատրւակով, մշա-
կայ բոլոր գիւղերը :

Հարց էր ծագում . — ուիշտք էր թիւրք լրտեսին ըս-
պանել : իսկ եթէ չապանել, ուրեմն թոյլ տալ որ նրա
կազմած հանրազբութիւնը գնա՞ր, մեզից շատերին ձեր-
բակալէին, ապատամբութեան գործը իր սանենայաջող և
վառուած բուքէին խեղդէին և մեր իւրաքանչիւր քայլի
առաջն առնէին . . .

Ո՞չ, անհրաժեշտ էր մէջտեղից վերացնել մասնիշին :
Եւ ահա, թիւրքը՝ սպասնած, հայ գիւղացիները սար-
սափի մէջ . . . վաղը, միւս օրը՝ քննութիւն, խոտու-
թիւններ, ծեծ, բանապիկութիւն . . .

Պէտք էի զգում Նշան պատելի հետ տեսնել, մի
բանի խորհել : Արդօք չուիմողին այժմ էլ կառավարու-
թան խորհել :

թեան կողմից գալիք բարբարոսութիւններին, չհալածե՞լ քննիչն, զարթիէններին...

Բայց այդ նշանակում էր արդէն բաց, համարձակ կուփ ելնել իրան—կառավարութեան դէմ։ Կառավարութիւն, որ 24 ժամ հեռաւորութեան վրայ չորրորդ զօրեղ զօրաբանակն ունէր, որի հետ անմիջապէս կ'ընկերանային գաւառի քիւրդերը, թիւրքերը և մեր մի բուռը հայկական գիւղերը այնպէս հիմնայատակ կ'անէին, որ այլես իր նմուշ՝ մի Հայ չէր մնալ Գուրուչայի մէջ։

Յիրափ ի՞նչ էինք մենք—մի բուռ հայերս, սեղմած քիւրդերի, թիւրքերի և կառավարութեան մէջանեղ, կիսովին անդէն, ստրկութեան մէջ աղնաշարնիս ծուած, սուվոր՝ որ ծեծեն մեզ, տանջեն, մեր քրախնքը շորթեն, մեր գեղեցիկ կանայք խլեն, մեր ամէն ինչը իրանց սեփականութիւն համարեն մահմեղականները—նրանցից ամենայետինն իսկ։

Ա՛յժմ էի սկսում անդրադասնալ թէ որքա՞ն յանդուգն քաղ էր մեր արածը և... եթէ կ'ուղէ՞ք՝ անխոնեմ, անմիտ... Մի բուռը հայեր՝ հաղարաւոր կատաղի, վայրենի, տիրելու և խլելու, ճնշելու և կեղեքելու սուվոր մահմեղականների դէմ։

Ա՛չ, հարկ էր լաւ մտածել, շա՞տ լաւ մտածել։ Բաւական էր երեխայտկան ոգեսրութիւնը, տղայտկան անխորհուրդ քայլերը... Հարկ էր վերջ տալ այդ բոլոր ի ցոյց համած շարժումներին։ Մեր միակ գործը պիտի լինէր գաւառը պատրաստել՝ միմիայն ոտքի ելեկու այն ժամանակ, երբ ամբողջ երկիրը ոտքի ելլէր, և երբ ապրատամբութեան հրդեհը, ոկսած Վասպուրականից՝ հասնէր մինչեւ կրիկիւ, երբ տէրութեան զլուխը խառնելու համար՝ միահամուռ կերպով հարւածը տալու օրերը հասնէին...

Հարկ էր այդ բացց ի՞նչպէս։ Գուցէ և ոչինչ չկար միւս նահանգներում։ ՞վ կարող էր ասել մեզ էրզումի, վանի, Զէյթունի մասին... Ոչ մի լուր. լուռթիւն և

անշարժութիւն ամէն կողմ և ահա մենք, միմիայն մենք էինք այդ բոլէ, որ յանդնում էինք ծղօտներով կուփ ելնել թնդանօթների գիմաց և այն՝ մէկը հազարի դէմ։

Այո՛, հարկ էր վերջ տալ որ և է շարժման և միմիայն սահմանափակել լուռ և ստորերկեայ պատրաստութիւններով, մինչեւ որ հնչքը ամբողջ նրկի ազատութեան ժամը...

Բայց արդեօք ուշ չէ՞ր արդէն։ Արդեօք հսարաւո՞ր էր ետ դասնալ, ծածկել եղածը, մի կերպ վերջ տալ, աղատւել այն բոլոր չարիքներից ու դժբախտութիւններից, որոնք անհրաժեշտօրէն հետեւելու էին՝ քրդերի դէմ բից, որոնք անհրաժեշտօրէն հետեւելու էին կ'արդերի սպանութեանը։

Այս և այսպիսի մտքերով էր, որ նշան պատւելիի մօտ հասայ Փոքր-Արմատան։ Այստեղ էր նաև Խաչատուր պատւելին, որ կիճ-զիւղից էր վերադարձել։ եկել էր Սուրէնը, Խերաքանչիւրը բնազդաբար զգացել էր, որ պէտք էր շարժման գլխաւորների մի լուրջ լուրհըրդակցութիւն։

Նոյն, զրեթէ բոլորն էլ նոյն բաներն էին մտածում, ինչ որ ես մտածել էի Փոքր-Արմատան գալիս։ Խաչատուր պատւելին և Սուրէնը միայն քիչ պնդեցին, որ այժմ հարկ էր, մեռնելու, կոտորւելու զնով իսկ լինի, դէմ հարկ էր, մեռնելու, կոտորւելու զնով իսկ լինի, դէմ կառավարութեան ձեռք առնելիք ճնշումներին։ Պնել կառավարութեան զլուխը և մինչեւ յետին հայ մասուկը կը կոտորեն, յետին տունը կը թալանեն և յետին կինն ու աղջիկը կ'առեւանց գեն։

—Այո՛, այդ շատ լաւ, գոչեցի ևս զրգուած—մենք կուեցինք, սպանեցինք, հալածեցինք, մեռանք և մեռ ցրինք... իսկ ժողով՞ւրդը... Զէ՞ որ զօրքով կը լոյն գիւղերը և մինչեւ յետին հայ մասուկը կը կոտորեն, յետին տունը կը թալանեն և յետին կինն ու աղջիկը կ'առեւանց գեն։

—Այդ հշմարիս է, ասաց նշան պատւելին—ես վախենում եմ որ էօմէրի սպանութեան իսկ հետեւին խայ-

